

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱՆԱԲԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇՎԱՐԻ ՉԱՐԳԱՇՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ,
18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 Թ.
(ՀՈՂԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**
հանրապետական գիտաժողով, 18 դեկտեմբերի 2019 թ.
(հոդվածների ժողովածու)

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2020**

ՀՏԴ 811.19:

06 ԳՄԴ 81.22

Ա 858

Ժողովածուն հրատարակության է պատրաստվել ՀՀ ԳՊԿ դրամաշնորհով (գիտական թեման՝ «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ»): Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Խմբագրակազմ՝

Կազմող՝ Յու. Ավետիսյան, ր. գ. դ., պրոֆ.

Ա. Աբաջյան, ր. գ. դ., պրոֆ.

Գ. Գևորգյան, ր. գ. դ., դոց.

Վ. Կատվայան, ր. գ. դ., դոց.

Փ. Մելիքիսանյան, ր. գ. դ., դոց.

Լ. Ավետիսյան, ր. գ. թ., դոց.

Հ. Զաքարյան, ր. գ. թ., դոց.

Ա-858 ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ: Հանրապետական գիտաժողով, 18 դեկտեմբերի 2019 թ. (հողվածների ժողովածու): -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 194 էջ:

Ժողովածուն ամփոփում է «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» գիտական թեմայի ծրագրի շրջանակներում կազմակերպված գիտաժողովի նյութերը:

Նախատեսված է մասնագետների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են արդի հայերենի բառային կազմի զարգացման ու կանոնարկման հիմնախնդիրներով:

ՀՏԴ 811.19:06 ԳՄԴ 81.22

ISBN 978-5-8084-2447-0

© ԵՊՀ հրատ., 2020

© Կազմողի համար., 2020

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բառապաշարը, ինչպես հայտնի է, բաց և մշտափոփոխ համակարգ է. այն անմիջաբար արձագանքում է արտալեզվական աշխարհի, մասնավորապես հասարակական կյանքի տարաբնույթ գործընթացներին: Դրանով պայմանավորված՝ բառապաշարը համալրվում է նոր բառերով, ինչը, բնականաբար, նոր հասկացություններ նշանակելու անհրաժեշտությամբ է թելադրված: Հաճախ նոր հասկացություններ նշանակող բառերի կերտումը որևէ հասկացություն արտահայտող օտար բառի առավել համարժեք (հաջողված) հայերեն թարգմանությունն է, իսկ հաջողվածության չափանիշն էլ տվյալ փուլում լեզվի կանոնին ու կիրարկմանը ներդաշնակելն է ու դրանում ամրանալու հեռանկարը: Հարկ ենք համարում նշել, որ ինչպես իր զարգացման ողջ ընթացքում, արդի շրջանում նույնպես հայոց լեզուն արժանավորապես կատարում է համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացին համարժեք արձագանքելու իր առաքելությունը՝ ամենից առաջ իր բառաստեղծական բացառիկ ներուժի, ապա և լեզվաշինության ու լեզվաքաղաքականության հարցերով զբաղվող հաստատությունների ու անձանց նպատակադիր ջանքերի շնորհիվ: Օտար տերմինների ու բառերի հայերեն համարժեքները ստեղծելիս հայոց լեզուն միշտ էլ օգտագործել է իր հարուստ զինանոցի բոլոր գործիքները՝ բառաբարդում, ածանցում, վերաիմաստավորում և այլն, հաճախ դիմել է բարբառների, գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի օգնությանը, ի վերջո հայերենը երբեք չի խուսափել նաև փոխառություններ գործածելուց, թեև մասնագետները

շարունակել են դրանք ևս հաջողված (լեզվական կանոնի համար ընդունելի) հայերեն տարբերակներով փոխարինելուն միտված ջանքերը:

Այս ամենը գիտական համակարգի բերելու և զարգացումների միտումներն ու տրամաբանությունը հասկանալու ճանապարհներից մեկը գիտական քննարկումներն են՝ գիտաժողովներ, բանավեճեր ևն: 2019 թ. դեկտեմբերին ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում հետազոտական աշխատանք կատարող խմբի՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում անցկացրած գիտաժողովը («Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներ» խորագրով) այդպիսի մի փորձ էր՝ ի մի բերելու մասնագիտական շրջաններում հարցի վերաբերյալ եղած ակադեմիական արդիական մոտեցումները: Հարցի յուրաքանչյուր գիտական քննարկում շատ ավելի արդյունավետ է ու արդարացված, երբ իրականացվում է ուղղորդված և նպատակային: Այդպիսին էր այս գիտաժողովի նպատակը:

Կարծում ենք՝ այս ժողովածուն, որը ամփոփում է գիտաժողովում ներկայացված զեկուցումները, կարող է մի կարևոր հանգրվան լինել արդի գրական հայերենի բառային կազմի մշակման և զարգացման հիմնախնդիրները պարզելու և դրանք այս կամ այն չափով լուծելու համար:

Շնորհակալությամբ կընդունենք ժողովածուի մասին արված բոլոր շահեկան դիտողություններն ու առաջարկները:

Խմբագրակազմ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ.
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ Բ Մ Ո Գ Ի Ր Ք ԱՌՑԱՆՑ ԲԱՌԱՐԱՆԸ

Յուրի Ավետիսյան (ԵՊՀ)

Բառարանները բացառիկ դեր ունեն յուրաքանչյուր լեզվի զարգացման գործում: Եվ այդ դերը լեզվի պատմական զարգացման ընթացքում էական փոփոխություններ է կրում: Մինչև նորագույն ժամանակները բառարաններն առավելապես կոչված էին ամբարելու տվյալ լեզվի ընդհանուր գործածական բառամթերքը, մասնագիտական բառապաշարը, լեզվական տարաբնույթ առնչությունները կարգավորող բառերը և այլն: Վերջին տասնամյակներին հրապարակ իջավ բառարանի մի նոր տեսակ՝ **համակարգչային բառարանը**. ստեղծման գաղափարը ի հայտ եկավ թարգմանական գործի հետ կապված¹: Սա իրական հեղաշրջում էր բառարանակազմության մեջ: Տեսական գրականության մեջ ունեցավ տարբեր անվանումներ՝ *ավտոմատ բառարան*, *էլեկտրոնային* կամ *թվային բառարան*, *համացանցային* կամ *առցանց բառարան*, *համակարգչային շտեմարան* և այլն²:

¹ St'u **Кашеварова И. С.**, Электронный словарь как новый этап в развитии лексикографии, “Молодой учёный”, №10 (21), М., 2010.

² St'u **Чепик Е. Ю.**, Компьютерная лексикография как одно из направлений современной прикладной лингвистики. **Селегей В. П.**, Электронные словари и компьютерная лексикография, М., 2013. **Соловьева А. В.**,

Համակարգչային բառարաններն էապես տարբերվում են միմյանցից. տարբեր են կազմության սկզբունքները, ձևերը, գործառնությունները, գործածությունը: Ընդհանուր է էլեկտրոնային լինելու հանգամանքը:

Ըստ կազմության սկզբունքների՝ դրանցում կարելի է առանձնացնել երկու տեսակ.

Առաջին՝ **թվայնացված բառարաններ** (պայմանականորեն ներառվում են նաև **պատկերահանված** բառարանները). դրանք արդեն գոյություն ունեցող **ավանդական՝ թղթային բառարանների** էլեկտրոնային տարբերակներ են, ինչպես՝ Merriam Webster, Ultralingua, Collins և Oxford բառարանները: Այդպիսին են մեզանում, օրինակ, Nayiri.com կայքում տեղադրված բառարանները:

Երկրորդ խումբը անվանենք **բառարան-շտեմարաններ**. դրանք **բոլորովին նոր կաղապարներով ստեղծված** բառարաններ են, որոնք բառարան կարելի է կոչել միայն պայմանականորեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց կազմության ելակետը նույնպես բառային միավորն է՝ **բառը**: Սակայն բառային միավորը, ավելի ստույգ՝ բառը ներկայացնող հոդվածը, այս բառարաններում ընդամենը

Профессиональный перевод с помощью компьютера, Санкт – Петербург, 2008. **Потапова Р. К.**, Новые информационные технологии и лингвистика, М., 2005: **Հակոբյան Ֆ.**, Բառամիավորների նկարագրության սկզբունքները ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի համակարգչային շտեմարանում, Եր., 2015:

միջոց է տվյալ լեզվի ամբողջ համակարգը նկարագրելու համար: Այլ կերպ ասած՝ լեզուն նկարագրվում է բառահոդվածներով: Իսկ գործածական մեկ գլխաբառի հոդվածը կարող է ընդգրկել 40-50 կամ ավելի էլեկտրոնային էջեր:

Մեզ հետաքրքրողը այս դեպքում երկրորդ խմբի էլեկտրոնային բառարաններն են:

Աշխարհում արդեն իսկ ստեղծվել են տասնյակ այդպիսի բառարաններ, որոնցում բնականաբար գերիշխում են անգլալեզու բառարանները:

Անգլերեն էլեկտրոնային հաջողված բառարաններից են՝

- www.collinsdictionary.com կայքում ներկայացված **English Dictionary** բառարանը, որտեղ առկա են ավելի քան 720. 000 բառ և արտահայտություն:

- www.ldoceonline.com կայքում ներկայացված **Longman Dictionary of Contemporary English** բառարանը, որտեղ կան կենդանի լեզվից քաղված ավելի քան 155. 000 օրինակ, մեկ միլիոնից ավելի նախադասություններ գրքերից և թերթերից, մոտ 88. 000 օրինակ առօրյա-խոսակցական բառաշերտից և մոտ 4000 նոր բառ և իմաստ:

- www.oxforddictionaries.com կայքում ներկայացված են Օքսֆորդի՝ բրիտանական և ամերիկյան անգլերենների բառարանները:

- www.merriam-webster.com կայքում ներկայացված է **Merriam-Webster's Collegiate Dictionary** բառարանը¹ և այլն:

Դրանց կազմության սկզբունքները հիմնականում նույնն են: Ընդհանուր պատկերացում կազմելու համար համառոտ ներկայացնենք միայն դրանցից մեկը:

Օքսֆորդի էլեկտրոնային բառարան՝ **water (ջուր)** բառը:

Որոնման արդյունքում նախ տրվում է բառի **արտասանությունը**, ապա՝ **խոսքիմասային պատկանելությունը**, իսկ հետո՝ բառի բառային և քերականական մյուս հատկանիշները (*տե՛ս նկար 1, 2*):

Water²

1. A colourless, transparent, odourless, liquid which forms the seas, lakes, rivers, and rain and is the basis of the fluids of living organisms.

“Sodium chloride dissolves in water”

“Can I have a drink of water?”

Ջուր

1. Անգույն, թափանցիկ, անհոտ հեղուկ, որը ստեղծում է լճեր, ծովեր, գետեր և անձրև. կենդանի օրգանիզմների հիմնական հեղուկն է:

Նատրիում քլորիդը լուծվում է ջրում:

¹ Տե՛ս <http://www.merriam-webster.com>

² Տե՛ս <https://en.oxforddictionaries.com/definition/water>

Ես կարո՞ղ եմ ջուր խմել:

Ապա, ըստ որոնման, բառարանը տրամադրում է բազմաթիվ հավելյալ օրինակ-նախադասություններ և հոմանիշներ:

1.1. Water as supplied to houses or commercial establishments through pipes and taps.

“each bedroom has a washbasin with hot and cold water”

“water pipes”

Ջուրը տներ և առևտրային հաստատություններ է մատակարարվում խողովակների միջոցով: Յուրաքանչյուր ննջարան ունի լվացարան՝ տաք և սառը ջրով:

«Ջրի խողովակներ»:

1.2. One of the four elements in ancient and medieval philosophy and in astrology.

“a water sign”

Հին և միջնադարյան փիլիսոփայության և աստղագիտության չորս տարրերից մեկն է:

«Ջրային նշան»

1.3. (usually the waters) The water of a mineral spring as used medically for bathing in or drinking.

“You can take the waters at the Pump Room”

(Սովորաբար ջրերը) Աղբյուրի ջուրը օգտագործվում է բժշկական լոգանքների կամ խմելու համար:

«Դու կարող ես վերցնել ջուր պոմպակայանից»:

1.4. A solution of a specified substance in water.

“ammonia water”

Հատուկ նյութի լուծույթ ջրի մեջ:

«Ջրային ամոնիակ»

2. (the water) A stretch or area of water, such as a river, sea, or lake.

“The lawns ran down to the water's edge”

(Ջուրը) Ջրի հատվածը կամ տարածքը անվանվում է գետ, ծով կամ լիճ:

Մարգագետինները ներքև էին ձգվում ջրի երկայնքով:

2.1. The surface of an area of water.

“She ducked under the water”

«Ջրի մակերևույթը»

Նա սուզվեց ջրի հատակը:

2.2. Found in, on, or near areas of water.

“a water plant”

Կարող է գտնվել ջրի տարածքի մոտ կամ վրա:

«Մամուռ»

2.3. (waters) The water of a particular sea, river, or lake.

“the waters of Hudson Bay”

Ծովի, գետի կամ լճի մաս կազմող ջրերը:

«Հուղզուն ծոցի ջրերը»

2.4. (waters) An area of sea regarded as under the jurisdiction of a particular country.

“Japanese coastal waters”

*Ծովի տարածքը դիտվում է որպես երկրի իրավական մաս:
«Ճապոնիայի ափամերձ ջրերը»*

Այնուհետև **ջուր** գոյականը ներկայացվում է որպես այլ խոսքի մասերի (օրինակ՝ բայի, ածականի և այլն) բաղադրական հիմք, իսկ հետո հաջորդաբար տրվում են **ջուր** բառի մասին շատ անհրաժեշտ բացատրություններ կամ տեղեկություններ՝ կապված բժշկության, ֆինանսական համակարգի և բառի այլ նշանակություններով գործածությունների հետ¹:

dictionary.com կայքի ամերիկյան բառարաններից մեկը նախորդից տարբերվում է ընդգրկման ծավալներով: Բառարանի յուրահատկություններից մեկն այն է, որ ներառում է բառի նկարագրությունը նաև բրիտանական անգլերենով: Այս հանգամանքը մեզ հետաքրքրել է այնքանով, որքանով կարող էր օրինակ ծառայել մեր կազմելիք բառարանում արևմտահայերենը զուգահեռ ներկայացնելու համար:

¹ Տե՛ս <https://en.oxforddictionaries.com/definition/water>. նշված բառարաններից տվյալները բերվում են 2019 թ. սկզբի դրությամբ: Անգլերենից թարգմանությունները՝ Հ. Սարգսյանի:

Улвар 1.

The screenshot shows a web browser window with the address bar displaying 'lexico.com/definition/water'. The page features a green header with a 'DICTIONARY' dropdown menu and a search bar containing the word 'water'. Below the header, the page content includes the title 'water' with a speaker icon, social media sharing buttons for Facebook, Twitter, and LinkedIn, and a 'NOUN' classification. A definition is provided: 'A colourless, transparent, odourless liquid that forms the seas, lakes, rivers, and rain and is the basis of the fluids of living organisms.' A detailed paragraph explains the chemical composition of water (H₂O) and its physical properties. Example sentences are listed, including 'sodium chloride dissolves in water' and 'can I have a drink of water?'. A 'Feedback' button is visible on the right side of the page. The browser's taskbar at the bottom shows various application icons and the system clock indicating 23:01 on 16.12.2019.

Water | Meaning of Water by Lexico

lexico.com/definition/water

DICTIONARY water

Home > water

Meaning of water in English:

water

NOUN

[mass noun]

1 A colourless, transparent, odourless liquid that forms the seas, lakes, rivers, and rain and is the basis of the fluids of living organisms.

Water is a compound of oxygen and hydrogen (chemical formula: H₂O) with highly distinctive physical and chemical properties: it is able to dissolve many other substances; its solid form (ice) is less dense than the liquid form; its boiling point, viscosity, and surface tension are unusually high for its molecular weight, and it is partially dissociated into hydrogen and hydroxyl ions

'sodium chloride dissolves in water'

'can I have a drink of water?'

+ More example sentences + Synonyms

1.1 Water as supplied to houses or commercial establishments through pipes and taps.

'each bedroom has a washbasin with hot and cold water'

Ad closed by Google

Stop seeing this ad

Why this ad? Ⓜ

Feedback

Learning English? Explore These English Word Lists

Создание безопасного подключения...

23:01 16.12.2019

The screenshot shows a web browser window with the Lexico.com dictionary page for the word "water". The browser's address bar shows "lexico.com/definition/water". The page has a green header with a "DICTIONARY" button and a search bar containing "water".

The main content area lists four definitions of "water":

- 1.1 Water as supplied to houses or commercial establishments through pipes and taps.
'each bedroom has a washbasin with hot and cold water'
[as modifier] 'water pipes'
[+ More example sentences](#)
- 1.2 One of the four elements in ancient and medieval philosophy and in astrology (considered essential to the nature of the signs Cancer, Scorpio, and Pisces)
[as modifier] 'a water sign'
[+ More example sentences](#)
- 1.3 (usually **the waters**) The water of a mineral spring as used medicinally for bathing in or drinking.
'you can take the waters at the Pump Room'
[+ More example sentences](#)
- 1.4 *[with modifier]* A solution of a specified substance in water.
'ammonia water'
[+ More example sentences](#)

Below these, definition 2 is shown:

- 2 **(the water)** A stretch or area of water, such as a river, sea, or lake.
'the lawns ran down to the water's edge'

The right sidebar contains several sections:

- "Learning English? Explore These English Word Lists"
- A large blue question mark icon with the text "The Most Common Questions About The English Language".
- A section titled "'-sion', '-tion' or '-cion?'" with the question "Which is the correct spelling?" and two radio button options: "commosion" and "commotion".
- A "NEXT" button and a progress indicator "0/10".
- A green "Feedback" button.

The Windows taskbar at the bottom shows various application icons and the system clock indicating 23:03 on 16.12.2019.

Բառարանի առանձնահատկություններից է նաև այն, որ յուրաքանչյուր օր ներկայացվում է **օրվա բառը**. սանդղակի միջոցով երևում է բառի գործածական հաճախականությունը (*տե՛ս նկար 3, 4*):

Հայերեն համակարգչային բառարանների մեծագույն մասը գործող տպագիր բառարանների թվայնացված տարբերակներ են, ինչպես, օրինակ՝ «Nayiri.com» կայքում տեղադրված բառարանները. հեղինակը ամերիկահայ համակարգչային ճարտարագետ **Մերուժ Ուրիշյանն է**: Առաջին էլեկտրոնային բառարանը այդ կայքում հրապարակվել է 2005 թ.՝ ***Բառգիրք հայերեն լեզուի*** (Անդրանիկ վրդ. Կռանեան, Պէյրուի, 1998): Կայքում առկա է 122 բառարան՝ 8 թվայնացված (361.676 գլխաբառ) և 119 պատկերահանված (106.321 էջ): Ընդհանուր որոնման տողում բառը մուտքագրելուց հետո բերում է երկու տվյալ՝ բառի խոսքիմասային պատկանելությունը և իմաստները, ապա՝ նման բառեր: Հիմքը Ա. Կռանյանի բառարանն է: Մյուս դեպքերում բառի որոնման արդյունքը ցուցադրվում է նախապես ընտրված բառարանի պատկերահանված էջով (*տե՛ս նկար 5, 6*):

Բոլորովին տարբեր սկզբունքներով է ստեղծված **ԱՐԵՎԱԿ**-ը (Արևելահայերենի ազգային կորպուս): Սա արևելահայերեն բազմաթիվ տեքստեր պարունակող լեզվաբանական որոնման համակարգ է, որի նպատակն է կորպու-

The screenshot shows a web browser window with the Dictionary.com website. The browser's address bar shows 'dictionary.com'. The website has a blue header with the Dictionary.com logo and a search bar. Below the header, there are several trending words with their respective percentage changes: 'elytron' (+2800%), 'hemicrania' (+2800%), 'swordplay' (+2600%), 'silverback' (+2400%), and 'officiation' (+2400%). A banner for 'The 2019 WORD OF THE YEAR' is visible. Below the trending words, there is an advertisement for 'Puzzle English' with the text 'АНГЛИЙСКИЙ ЯЗЫК ОНЛАЙН' and a button 'Открыть'. The main content area features the 'WORD OF THE DAY' section for 'welter'. The word 'welter' is displayed in large blue letters, followed by its phonetic transcription '[wel-ter]' and a speaker icon. Below this, there is a link 'SEE DEFINITIONS & EXAMPLES' and the date 'DEC 16, 2019'. To the left of the word, there is a vertical text 'DISCOVER MORE' with a downward arrow. Below the 'WORD OF THE DAY' section, there is a 'WORD GAMES' section with the text 'Flex your word muscles and improve your language skills with a bit'. The bottom of the screenshot shows a Windows taskbar with various application icons and the system clock displaying '23:18' and '16.12.2019'.

Dictionary.com | Thesaurus.com

The 2019 WORD OF THE YEAR is...

DEFINITIONS

TRENDING

- elytron +2800%
- hemicrania +2800%
- swordplay +2600%
- silverback +2400%
- officiation +2400%

АНГЛИЙСКИЙ ЯЗЫК ОНЛАЙН

Puzzle English

Открыть

WORD OF THE DAY

Build your vocabulary with new words, definitions, and origin stories every day of the week.

welter

[wel-ter]

SEE DEFINITIONS & EXAMPLES DEC 16, 2019

DISCOVER MORE

WORD GAMES

Flex your word muscles and improve your language skills with a bit

The screenshot shows a web browser window with the Dictionary.com website. The address bar shows the URL 'dictionary.com/browse/water?s=t'. The website has a blue header with the Dictionary.com logo and a search bar containing the word 'water'. Below the header, there are tabs for 'SCIENTIFIC' and 'IDIOMS AND PHRASES'. The main content area displays the definition of 'water' as a noun, with two numbered entries. The first entry describes water as a transparent, odorless, tasteless liquid, a compound of hydrogen and oxygen (H₂O), freezing at 32°F or 0°C and boiling at 212°F or 100°C. The second entry describes a special form or variety of this liquid, as rain. Below the noun definition, there is a section for 'verb (used with object)' with a numbered entry for 'to sprinkle, moisten, or drench with water'. On the right side of the page, there is a yellow banner for 'The 2019 WORD OF THE YEAR' and a section titled 'What's The Difference Between "ie." And "e.g."?'. The Windows taskbar is visible at the bottom of the screen.

Dictionary.com

Thesaurus.com

DEFINITIONS

water

SCIENTIFIC

IDIOMS AND PHRASES

water [waw-ter, wot-er] [SHOW IPA](#)

SEE SYNONYMS FOR water ON THESAURUS.COM

noun

1 a transparent, odorless, tasteless liquid, a compound of hydrogen and oxygen, H₂O, freezing at 32°F or 0°C and boiling at 212°F or 100°C; that in a more or less impure state constitutes rain, oceans, lakes, rivers, etc.; it contains 11.188 percent hydrogen and 88.812 percent oxygen, by weight.

2 a special form or variety of this liquid, as rain.

[SEE MORE](#)

verb (used with object)

15 to sprinkle, moisten, or drench with water:
to water the flowers; to water a street.

The 2019 WORD OF THE YEAR is ...

What's The Difference Between "ie." And "e.g."?

WORD OF THE DAY

Նկար 5.

Հայերեն բառարան - օրն x Water | Definition of Water at D... x +

← → 0 He saapayeno | nayiri.com/search?l=hy_LB&dt=HY_HY&c=0&query=օրն

հայերենի աղբյուրի բառարան

Հայերեն | Հայ-Անգլերեն | Անգլերեն-Հայ | Հայ-Ֆրանսերեն | Ֆրանսերեն-Հայ

խուն

Բառարան Աղբյուրներ

առանձին գրական Բնակարան * ընտանիք, գեղատառան * առանձին աղբյուր
խուն:

Աղբյուր: Բառարան հայերեն լեզու: Անգլերեն-Հայ, Լատինա, Պլյուս, 1996: էջ 458:

Նման բառեր

դուն
դուն
թուն
թուն
առան

Փնտռել «առան» բառը նաև հետևյալ պատկերասրահում բառարաններում մեջ —

ԲԱՅԱՏԱՐԱՆ

Հայոց լեզուի նոր բառարան (1992)
Արդի հայերենի բացատրական բառարան (1976)
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1969)
Հայոց լեզուի նոր բառարան (1968)
Հայերեն աշխարհագրական լեզուի լեզվաբանական բառարան (1954)
Հայերեն բառարանի առանձին (1941)

23:27
16.12.2019



պուսային լեզվաբանության միջոցներով ներկայացնել արևելահայերենը՝ գրականագիտական, բանասիրական, պատմամշակութային և այլ կարգի ուսումնասիրություններ կատարելու համար:

Ըստ կայքի տեղեկության՝ 2009 թ. մարտի դրությամբ այն ընդգրկում է մոտ 110 մլն բառամթերք: Ընդգրկված 9960 տեքստերից յուրաքանչյուրին կցված է հիմնական մետատեքստային տեղեկույթ, որը հատկանշում է տեքստի ժանրը, ստեղծման և հրատարակման տարեթիվը, հեղինակի վերաբերյալ համառոտ տեղեկություն և այլ մատենագիտական տվյալներ: Քիչ է առնչվում մեզ հետաքրքրող բառարաններին (*տե՛ս նկար 7*):

Հայերեն էլեկտրոնային բառարաններից է **bararanonline.com**-ը, որի գրեթե ամբողջ պարունակությունը արդեն տպագրված բառարաններ են:

Բառարանը ունի էական բացթողումներ. բառերի մեծ մասի նկարագրությունը թերի է. բառահոդվածները կիսատ են: Օրինակ՝ «**տուն**» բառամիավորի համար ներկայացված է մոտ 20 իմաստ, տասնյակից ավելի հոմանիշ և բավականին շատ ռուսերեն և անգլերեն համարժեքներ, մինչդեռ «**մազ**» համագործածական բառի դիմաց արձանագրումները շատ սուղ են: Բառարանը սովորաբար չի տալիս գլխաբառի արտասանությունը, ստուգաբանությունը և հնչույթային կազմի վերաբերյալ տեղեկություններ և այլն (*տե՛ս նկար 8-10*):

[illegible]



Նկար 10.

Տուն 1. Ընտանիքի բնակարանը։ 2. Ընտանիքի կազմակերպությունը։ 3. Ընտանիքի կազմակերպությունը։ 4. Ընտանիքի կազմակերպությունը։ 5. Ընտանիքի կազմակերպությունը։ 6. Ընտանիքի կազմակերպությունը։ 7. Ընտանիքի կազմակերպությունը։ 8. Ընտանիքի կազմակերպությունը։ 9. Ընտանիքի կազմակերպությունը։ 10. Ընտանիքի կազմակերպությունը։

տուն - անգլերեն բարձրագույնություն


- 1) house
- 2) home
- 3) stanza, verse, strophe

տուն - բարձրագույնություն

- 1. տուն, տուն
- 2. տուն, տուն
- 3. տուն, տուն
- 4. տուն, տուն
- 5. տուն, տուն
- 6. տուն, տուն
- 7. տուն, տուն
- 8. տուն, տուն
- 9. տուն, տուն

Համացանցում հասանելի է նաև **ArmDict.com** անվճար, բազմալեզու, առցանց բառարանը: Նախատեսված է ուսանողների, մասնագետների, հայոց լեզուն ուսումնասիրողների, ընթերցողների լայն շրջանների և զբոսաշրջիկների համար: **ArmDict**-ը տալիս է բառի խիստ համառոտ և անկազմակերպ նկարագրություն: Հաջողված փորձ չէ (*տե՛ս նկար 11*):

Նկար 11.



Բառային միավորի քիչ թե շատ համակողմանի նկարագրության առցանցային օրինակ է **Վիքիբառարան**-ը. ազատ բացատրական բառարան է: Կառուցման սկզբունքներով այն մոտ է մեր կողմից առաջարկվող բառարանին: Ներկայումս ընդգրկում է 300.405 բառ: Հիմնադրվել է 2006 թ.: Այս բառարանը բավականին լայն հնարավորություններ է ընձեռում լեզուն ուսումնասիրելու համար, մասնավորապես, այն թույլ է տալիս տեսնել՝

- բառի տառադարձումը,
- բառը՝ դասական ուղղագրությամբ և վանկերի քանակով,
- բառի ստուգաբանությունը,
- իմաստները և նրբիմաստները,
- հոմանիշները,
- արտահայտությունները,
- բաղադրված բառերը,
- թարգմանությունը մի շարք լեզուներով,
- համապատասխան բառի պատկերները և արտասանությունը:

Այս բառարանի համար աղբյուր են հրապարակի վրա եղած բացատրական և հոմանիշների բառարանները (*տե՛ս նկար 12-14*):

Բառարանն ամբողջական չէ և ունի որոշ թերություններ՝

1. Բառային միավորի նկարագրությունը թերի է. չեն տրվում բառի քերականական ամբողջական հատկանիշները,

դարձվածային արտահայտությունները, ոճաբանական նկարագիրը, գործառական հնարավորությունները,


2. բառահոդվածներն ամբողջական չեն նույնիսկ բառարանի որդեգրած հատկանիշներով,

3. բառարանում արտացոլված է հիմնականում առօրյա-խոսակցական բառաշերտը,

4. աղբատիկ է նորաբանությունների բաժինը,

5. չի նկարագրվում արդի հայերենի մյուս տարբերակը՝ արևմտահայերենը:

Նկար 12.



Արդի հայերենի բացարձակությամբ | Water | Definition of Water at D | Երևան — Վիքիքառարան

hy.wiktionary.org/wiki/տուկ

Français
日本語
한국어
Kurdî
Polski
Русский
Türkçe

Քա Նվա 10

1. բնականաբան կամ արհեստականորեն ստացված խմելու համար համարվող ջուր, խմելաբան, խմելու
2. բնական • Գործվելը **տոկո** ըստ էության պարզության Ստեղծարարական
3. մաքուր կամ բնական բնականաբան (առանց զտար) բացառությամբ) • Կա **տուկ** էլ զախ կամից բանակցել (հայերի շարքում)
4. բնական, զգալի • Մյուս նշանն էլ կա **տուկ** բառին պատկերացումը Նվառի շարքին
5. անտիկ անտառաբան • Ցանկ բառերում բառերին անդամակերպ էլ Ստեղծարարական
6. կապույտ-բացառական, զախական, նվառական են հաստատություն, ինչպես և զու ջուրը • Դրանք բանական **տուկ** պարզապես աշխարհից առնել
7. անտառական նվառական հաստատություն • Կանաչ **տուկ**
8. (կառու) աշխարհական տուն Կապույտական անտառական զախը կառույց կառույց էլ անտառական պարտականություն (Կառույց)
9. (կառու) բացառական տուն, Հարաբերական, զինական Կառույց առնել
10. (զախականություն) Կառույցի անտառական և զինական անտառական կամ մյուս անտառական (առանց անտառական) վարկերեն մի բանի պարզապես անտառական, որ անտառական անտառական կամ կառույցական անտառական է կառույց Գառառու առնել, անտառական տուն
11. զախական կառույց մի (առանց զախ են) Կառույցական բանականությունը բացառական
12. անտառական • Ինչպիսիք են **տոկո** ըստ վարկեր (Ստեղծարարական)
13. (կառույցական) զախ՝ բացառական կամ ինչպես բանականությունը զախական կառույց՝ զախ Կանոն օրենքին, զախում (կա) մի բացառական տունը ինտերնետ (Ստեղծարարական)
14. զախ Կառույց անտառական առնել (Գ. Ստեղծարարական)
15. (զախ) զախանի զախ անտառական զախականությունը
16. (զախ) զախանի բանական նշան առնել զախական զախական
17. (զախ) մի զախական կառույց անտառական անտառական բառը պարզապես
18. (կառու) անտառական մի զախական անտառական, որ անտառական բանական է կառույց
19. (նվառ) (էլ) ինչպես, Ցանկ մի անտառական զախական է
20. (էլ) նվառ

Հոմանիշներ [խմելու]

1. բնական, զախական, զախական, անտառական, անտառական, անտառական, անտառական, անտառական
2. առնել, անտառական, զախական
3. անտառական, անտառական



Ցանկ

Windows taskbar with icons for Start, Internet Explorer, Skype, Google Chrome, and Microsoft Word. System clock shows 23:50 on 16.12.2019.

[illegible]

ԲԱՌԳԻՐՔ-ը: Այս առցանց բառարանի կազմության գաղափարը ծնվեց մոտ հինգ-վեց տարի առաջ. գաղափարի հեղինակները աչքի առաջ ունեին ներկայացված բառարանների փոքրձր: Կառուցվածքը մշակվել է դարձյալ այդ բառարանների օրինակով: Բայց մեր մոտեցումը եղել է փոքր-ինչ այլ:

Բառարանը անվանումից (ՀԱՅԱԿ, ԴԱՐՄԱՆ, ՀԱՅԲԱՌԳԻՐՔ, ՀԱՅԲԱՌ) մինչև բովանդակային և գործառական նրբություններ քննարկման երկար ճանապարհ է անցել: Ի վերջո հանգել է հետևյալին:

1. **ԲԱՌԳԻՐՔ-ը բազմագործառույթ բառարան է՝** բացատրական, ստուգաբանական, ուղղագրական և ուղղախոսական, դարձվածաբանական, թարգմանական և այլն:
2. Բառարանում բառային միավորը նկարագրվում է **հայերենի երկու տարբերակներով՝ արևելահայերենը՝** նոր ուղղագրությամբ, **արևմտահայերենը՝** ավանդական:
3. Նկարագրությունը կատարվում է հիմնականում **համաժամանակյա մեթոդաբանությամբ**, սակայն զուգահեռաբար տրվում են նաև բառի ստուգաբանությունը և պատմական զարգացումը՝ գրաբար-միջին հայերեն-արևելահայերեն և արևմտահայերեն համառոտ ընթացքով:
4. **Բառը նկարագրվում է լեզվի բոլոր մակարդակներում՝** հնչյունական, բառային, քերականական:

5. Շարահյուսական կիրառությունները բերվում են գերազանցապես **բնագրային օրինակներով՝ քաղված ԱՐԵՎԱԿ-ից, ԱՐԵՎԻԿ-ից** և բնագրային այլ աղբյուրներից:
6. Տեսականորեն **ունի բացարձակ հասանելիություն՝** համակարգիչների և այլնայլ սարքավորումների միջոցով:
7. **Ներառում է գործող ամբողջ բառապաշարը՝** բառապաշարի բոլոր շերտերը, այդ թվում նաև տերմինները. հիմքը՝ հայոց լեզվի ամբիոնի կազմած (տպագրված չէ) բառարանը:
8. **Անընդհատ թարմացվում և նորացվում է:**
9. **Ապահովում է հետադարձ կապ** հազարավոր կամ տասնյակ հազարավոր օգտատերերի հետ. օգտագործողները, որոնք իրենց իրավունքներով փոքր-ինչ տարբերվում են օգտատերերից (վերջինները բառարանից պարզապես օգտվողներ են), դիտարկումներով անմիջականորեն մասնակցելու են բառարանի հարստացմանը և մշակմանը: Յուրաքանչյուր օգտագործողի հնարավորություն է տրվելու ունենալու իր անձնական էջը, տեղեկատվության և աշխատելու համար սեփական դաշտը (անկյունը), կապվելու այլ օգտագործողների հետ՝ կազմակերպելով քննարկումներ և զրույցներ՝ մասնագիտական և ոչ մասնագիտական խմբերում:
10. Բառարանը **չունի ծավալային սահմանափակում**. կարող է ընդգրկել հազարավոր էջեր:

11. **Մեծ է օգտվելու արագությունը. տնտեսում է զգալի ժամանակ.** առավելագույն տեղեկությունը տրվում է նվազագույն ժամանակահատվածում:
12. **Բառարանն ունի տեխնիկական բարձր հագեցվածություն՝** բառարանային հոդվածի ցուցադրում, գրաֆիկական և ձայնային տարբեր միջոցներ, որոնք չեն օգտագործվում և չեն էլ կարող օգտագործվել սովորական տպագիր բառարաններում:
13. **Բառարանը ամենահասանելի է.** հասանելի է՝ անկախ տեղից, ժամանակից, ազգությունից (բառը փնտրվում է նաև լատինատառ տարբերակով), ինչպես նաև համացանցի հնարավորություն ունեցող ցանկացած սարքի միջոցով:
14. **Ազգային լեզվի ուսուցման հանրամատչելի գործիք է.** նպաստելու է, որ հայ մարդը՝ արևելահայ թե արևմտահայ, հեշտությամբ յուրացնի, պահպանի և տարածի համազգային լեզվի կենդանի որակները:


Բացասական կողմեր և հետևանքներ՝

- պահանջվում է տեխնիկական միջոցների մշտապես առկայություն,
- ցանկացած պահին առցանց տիրույթում այն կորցնելու վտանգը կա,
- **փոփոխականությունը.** տպագիր բառարանների կայունությունը հնարավորություն է տալիս արձանագրելու լեզվի զարգացման որոշակի վիճակ, և դրա շնորհիվ


կարողանում ենք տեսնել, հասկանալ և բացատրել լեզվական երևույթների զարգացման ու փոփոխության օրինաչափությունները, մինչդեռ էլեկտրոնային բառարանները այդ հնարավորությունը չեն տալիս, քանի որ անընդհատ ենթարկվում են փոփոխության:


Ստորև ներկայացվում է բառահոդվածի համառոտ մեկ տարբերակ (*տե՛ս նկար 15-19*):


Նկար 15.



ՍԱՆԿԱՆԱԿԱՆ	ԱՆԵԼ - անկանոն բայ	Աղբյուր: Ե. Բալասանյան - ներդրածական
ՀԱՅՅՈՒՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ	Տառադարձությունը - anel Արտասանությունը - [անել] Վանկային կառուցվածքը - երկվանկ՝ ա-նել Գաղափարային հիմքը - աբ	
ՍՏՈՒՊԱԿԱՆ ԼՈՒԹՅՈՒՆ	Մազում է հնդեվրոպական նախալեզվի ar արմատից: Գրաբար - առնել , միջին հայերեն առնել - արնել - արրնել - այրնել - աշխարհաբար - անել (արնել/անել/արնել) / ընել (արնել/անել/արնել):	







Նկար 19.

ԳԱՐԱԿԱՏԱՐ ՆՔԳԱ									
ԳԱՐԱԿԱՏԱՐ ՆՔԳԱ				ԳԱՐԱԿԱՏԱՐ ՄԱՅՑԱԼ		ՄԱՅՑԱԼ ԿԱՏԱՐՑԱԳԱԿ			
I	արեւել	արեւել	արեւել	արեւել	արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել
II	արեւել	արեւել	արեւել	արեւել	արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել
III	արեւել	արեւել	արեւել	արեւել	արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել	արեւել/արեւել
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՂԱՆԱԿ				ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ԵՂԱՆԱԿ				ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ԵՂԱՆԱԿ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՐԱՐԻ		ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՅՑԱԼ ԱՊԱՐԱՐԻ		ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ՄԱՅՑԱԼ ԱՊԱՐԱՐԻ		ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ՄԱՅՑԱԼ ԱՊԱՐԱՐԻ		ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ՄԱՅՑԱԼ ԱՊԱՐԱՐԻ	
I	անել	անել	անել	անել	անել	անել	անել	անել	անել
II	անել	անել	անել	անել	անել	անել	անել	անել	անել
III	անել	անել	անել	անել	անել	անել	անել	անել	անել
ԵՐԿՐՈՐԱԿԱՆ ԲԱՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆԱԿ									
ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ՄԱՅՑԱԼ ԱՊԱՐԱՐԻ				ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ՄԱՅՑԱԼ ԱՊԱՐԱՐԻ				ՀԱՐԿԱՐԿԱՐԿԱՐԿ ՄԱՅՑԱԼ ԱՊԱՐԱՐԻ	

Բանալի բառեր – առցանց, հայոց լեզու, բառարան-շտեմարան, բառի նկարագրություն, օգտագործող, բազմագործառույթ բառարան, բառահողված, բնագրային օրինակներ, արևելահայերեն, արևմտահայերեն, ավանդական ուղղագրություն:

Yuri Avetisyan – Electronic Dictionaries: Armenian Bargirq Online Dictionary. – The article presents electronic online dictionaries, describes the principles of their compilation, the peculiarities of the composition of the word entry, and the shortcomings. In this context, the new online dictionary "BARGIRQ" is presented, and the work in the direction of getting the most perfect and popular language tool possible is underway. It is going to be a complete phonetic, lexical and grammatical characterization of the vocabulary of Eastern Armenian and Western Armenian.

Key words – online, Armenian language, dictionary-database, word description, user, multifunctional (multilingual) dictionary, word entry, authentic examples, Eastern Armenian, Western Armenian, traditional orthography.

Юрий Аветисян – Электронные словари. Сетевой словарь армянского языка “БАРГИРК”. – В статье говорится об электронных сетевых словарях, описаны принципы их построения, особенности строения словарной статьи, а также недостатки. В данном контексте представлен новый сетевой сло-

варь “**БАРГИРК**”, который предполагается сделать по возможности совершенным общедоступным инструментом. Он будет представлять собой целостную фонетическую, лексикологическую и грамматическую характеристику лексики восточно- и западноармянского языка.

Ключевые слова – сетевой, армянский язык, словарь-сокровищница, описание слова, вспомогательный, многофункциональный словарь, словарная статья, текстуальные примеры, традиционная орфография.

ՀԱՅԵՐԵՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ԵՂԱՆԱԿ

Հովհաննես Զաքարյան («Տաթև» ԳԿՀ)

Հոդվածը նվիրված է հայերեն էլեկտրոնային բառարանների, ինչպես նաև եզրույթաբանական բառապաշարի ինքնաշխատ կատարելագործման խնդիրներին:

Ներկայումս էլեկտրոնային բառարանները զարգանում են հիմնականում արտաքին միջոցներով: Առաջարկվում է զարգացման ներքին մեխանիզմ (գործակառույց)՝ ծրագրային հավելված՝ հիմնված բառակազմական հարացույցների ու կադապարների ներդրման, բառապաշարի իմաստային վերլուծության և բառակազմական ինքնասերման վրա:

Բառարանների կարևոր հատկանիշերից է զարգացող լինելը, այսինքն՝ անընդմեջ (կամ գոնե ժամանակ առ ժամանակ) կատարելագործումը՝ ճշգրտումը, նոր իմաստներով ու բառերով համալրումը, փոխադարձ հղումներով ճկունացումը, արդիականացումը: Էլեկտրոնային բառարանների պարագայում հնարավոր է նաև արհեստական բանականության միջոցով ինքնազարգացումը, այսինքն՝ ինքնաշխատ կատարելագործումը: Դա կարող է արվել՝

- արտաքին աղբյուրների (գրվածքների) մշակման և դրանցից անհրաժեշտ տեղեկություններ կորզելով,

- հակասությունները ու թերությունները վերացնելով, պակասությունները լրացնելով,
- ներքին պաշարների հիման վրա բառակազմական ինքնասերման ճանապարհով:

Այս վերջին եղանակն է քննարկվում ստորև:

Բառասերման հավելվածի գաղափարը

Ձևաբանական հարացույցներից բացի կան նաև բառակազմական հարացույցներ¹, որոնք, սակայն, գրեթե հաշվի չեն առնվում հայոց լեզվի էլեկտրոնային վերլուծման և սերման [գեներացման] կաղապարներում: Հայերենը աչքի է ընկնում այդպիսի հարացույցների միասնականությամբ և համասեռությամբ: Օրինակ.

գոյական	գոյ.+բույծ	գոյ.+բույծ+նույնություն	գոյ.+բույծ+արան	գոյ.+բույծ+ական
բան-ջար	բանջար-բարբույծ	բանջարա-բուծություն	բանջարա-բուծարան	բանջարա-բուծական ²

¹ Բառակազմական հարացույցների մասին տե՛ս, օրինակ, **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989: **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984: **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974: **Джаукян Г.**, Универсальная теория языка, М., 1999: **Մխիթարյան Վ., Ջիհանյան Վ.**, Հայերեն լեզվական մշակույթի տեղափոխումը համակարգչային հենքի, Եր., 1997 (https://www.researchgate.net/publication/337802126_HAYEREN_LEZVAKAN_MSAKUYTITEGAPOXUMHAMAKARG_CAYIN_HENKI) և այլն:

² Տեղի սղության ու տեխնիկական անհարմարության պատճառով այստեղ և այլուր ոչ բոլոր ածանցյալներն են ներկայացված:

ծաղիկ	ծաղկաբույծ	ծաղկաբուծություն	ծաղկաբուծարան	ծաղկաբուծական
անասուն	անասնաբույծ	անասնաբուծություն	անասնաբուծարան	անասնաբուծական
խոզ	խոզաբույծ	խոզաբուծություն	խոզաբուծարան	խոզաբուծական
թռչուն	թռչնաբույծ	թռչնաբուծություն	թռչնաբուծարան	թռչնաբուծական
հավ	հավաբույծ	հավաբուծություն	հավաբուծարան	հավաբուծական
ձուկ	ձկնաբույծ	ձկնաբուծություն	ձկնաբուծարան	ձկնաբուծական
շերամ	շերամաբույծ	շերամաբուծություն	շերամաբուծարան	շերամաբուծական
մեղու	մեղվաբույծ	մեղվաբուծություն	մեղվաբուծարան	մեղվաբուծական

Այս հարացույցին առանց բացառության ու առանց շեղումների ենթարկվում են տվյալ իմաստային դաշտի (կենդանիներ, բույսեր) բոլոր հնարավոր միավորները, թեկուզ դրանք լինեն փոխառյալ բառեր:

Այս հատկությունը ակնառու է հատկապես վերջածանցման հարացույցներում: Դրանց փոքր-ինչ զիջում են նախածանցման կադապարները, որոնցում որոշ վանդակներ կարող են լրացված լինել հնարավոր (պոտենցիալ) բառերով, որոնք տվյալ պահին գործնականում դեռևս իրացված չեն, գործածության առիթ չեն ունեցել (ստորև այդպիսի բառերը նշված են շեղատառ): Օրինակ.

-ածել	ներածել	արտածել	մակածել	տարածել	վերածել	առածել
-մղել	ներմղել	արտա- մղել	մակա- մղել	տարա- մղել	վերա- մղել	առմղել
-աճել	ներաճել	արտա- ճել	մակաճել	տարա- ճել	վերաճել	առաճել
-բեռնել	ներբեռնել	արտա- բեռնել	մակա- բեռնել	տարբեռ- նել	վեր(ա)- բեռնել	առբեռնել
-գրել	ներգրել	արտա- գրել	մակա- գրել	տարա- գրել	վեր(ա)- գրել	առգրել
-դնել	ներդնել	արտա- դրել	մակա- դրել	տարա- դրել	վերադրել	առդնել, առադրել
-զատել	ներզատել	արտա- զատել	մակա- զատել	տարա- զատել	վերազա- տել	առզատել
-բերել	ներբերել	արտա- բերել	մակա- բերել	տարբե- րել	վերաբե- րել	առբերել
-ծալել	ներծալել	արտա- ծալել	մակա- ծալել	տարծա- լել	վերածալ- ել	առծալել
-հանել	ներհանել	արտա- հանել	մակա- հանել	տարհա- նել	վերհանել	առհանել
-մղել	ներմղել	արտա- մղել	մակա- մղել	տարմղել	վերա- մղել	առմղել

Հայերենի բառակազմական հարացույցների այս հատկությունը թույլ է տալիս ստեղծելու բառապաշարի, հատկապես եզրույթաբանության համալրման ու կատարելագործման ինքնաշխատ գործակառույց, որը կիրառելի է մասնավորապես էլեկտրոնային բառարաններում: Բառաստեղծ և բառարանաստեղծ ծրագր(եր)ին տրվում են՝

- բառակազմական առավելապես ածանցական հարացույցներ (ծանոթագրված աղյուսակների տեսքով),
- բառակազմական կաղապարներ (վերլուծման-սերման բանաձևերի տեսքով),
- բառակազմական բաղադրիչներ (ծանոթագրված ցանկերի տեսքով),
- բառասերման կանոններ ու քայլաշարեր:

Ծրագիրը հարացույցների վերլուծության հիման վրա՝

- լրացնում է հարացույցների բաց վանդակները, բացահայտում բառապաշարի բացերն ու թերությունները,
- անում անկանոնությունների, շեղումների, տարասեռությունների վերացման, բառակազմական, հնչյունական, ուղղագրական տարբերակներից ու հոմանիշներից լավագույնի ընտրության, բառիմաստների (բառարանային բացատրությունների) ճշգրտման առաջարկներ,
- ըստ առաջադրվող նոր գաղափարների՝ համալրում բառապաշարը կամ առաջարկում հնարավոր (պոտենցիալ) բառեր՝ իր ունեցած հարացույցների, բանաձևերի ու կանոնների համաձայն,

- հայոց լեզվի բառակազմական միջոցներով ստեղծում օտարաբանությունների, այլ լեզուների նորաբանություն-Օրինակ.

առարկա		մասնա- գետ	մասնագի- տություն	մասնագետին կամ մասնագի- տությանը բնորոշ
բառ կամ արմատ	բառա- կազմական հիմք (q)	q+(յ)ա- բան	q+(յ)աբան+ ություն	q+(յ)աբան+ ական
կյանք	կենս-	կենսա- բան	կենսաբանու- թյուն	կենսաբանա- կան
կենդանի	կենդան-	կենդա- նաբան	կենդանաբա- նություն	կենդանաբա- նական
մարդ	մարդ-	<i>անթրո- պոլոգ</i>	անթրոպոլո- գիա	անթրոպոլո- գիական
շուն	շն-	<i>կինոլոգ, շնաբան, շնագետ</i>		
թռչուն	թռչն-	թռչնա- բան, <i>թռչնա- գետ</i>		
ձուկ	ձկն-	<i>իկտոլո- լոգ, ձկնաբան</i>		
միջատ	միջատ-	միջա- տաբան	միջատաբա- նություն	միջատաբանա- կան
մանրէ	մանրէ-	մանրէ- աբան	մանրէաբա- նություն	մանրէաբանա- կան
շուկա	շուկա-	շուկա- յաբան, շուկա- յագետ	շուկայաբանու- թյուն	շուկայաբանա- կան

հանք	հանք-	հանքա- բան	հանքաբանու- թյուն	հանքաբանա- կան
թիվ	թվ-	թվաբան	թվաբանություն	թվաբանական
ոճ	ոճ-	ոճաբան	ոճաբանություն	ոճաբանական
արվեստ	արվեստ	արվես- տաբան	արվեստաբա- նություն	արվեստաբա- նական
տրամ	տրամ-	տրամա- բան	տրամաբանու- թյուն	տրամաբանա- կան

Այս աղյուսակում շեղատառ տրված են բառարաններում առկա և կամ կիրառվող այն տարբերակները, որոնք իրենց կառուցվածքով հակասում են հարացույցին: Դրանցից *անթրոպոլոգ(իա(կան))* փոխառյալ հիմքով բառերը կփոխարինվեն *մարդաբան(ություն)*, *մարդաբանական* հայերեն համարժեքներով, *կինոլոգ* // *շնաբան* // *շնագետ*, *թռչնաբան* // *թռչնագետ*, *իխտիոլոգ* // *ձկնաբան*, *շուկայաբան* // *շուկայագետ* տարբերակներից կընտրվեն *-աբան* ածանցով կազմվածները, օտարաբանությունները կմերժվեն, իսկ *-ագետ* ածանցով կազմված ձևերը կտարանջատվեն որպես այլ ենթահարացույցի եզրեր՝ «տվյալ առարկայի տարատեսակների գիտակ՝ փորձագետ» իմաստով՝ ի տարբերություն *-աբան* ածանցով և «տվյալ առարկայի տեսաբան՝ մասնագետ-գիտնական» իմաստով ձևերի: Կլրացվեն հարացույցի բաց վանդակները համապատասխան կազմություններով (*թռչնաբանություն*, *թռչնաբանական* են): Կառաջարկվեն *-աբան+որեն* ածանցներով հնարավոր (ներունակ) բառեր (*մարդաբանորեն*, *շնաբանորեն* են): Կառաջարկվեն նաև տվյալ իմաստային դաշտի այլ միավորների

համապատասխան ածանցյալներ (*սողունաբան, կողակա-
բան, լոբոյաբան, մրջնաբան, մոծակաբան, ավելուկաբան,
թխկիաբան, ձկաբան, սննդաբան, կերպարաբան, գովազ-
դաբան, առևտրաբան, արհեստաբան, արտադրաբան* ևն):

Բառասերման հավելվածի ստեղծման փուլերն են.

1. լեզվաբանական առաջադրանքի հանգամանալից
ձևակերպում,

2. բառակազմական համակարգի ձևայնացված նկա-
րագրություն, մասնավորապես՝

- բառակազմական տարրերի հավաքածուի կազմում
(ցանկալի է աղյուսակային խմբագրիչով՝ ամեն տարրի
համար նշելով դրա տեսակը, դիրքային, գործառական,
կապակցական և այլ հնարավոր բնութագրերը). օրի-
նակ.

երկաթ – կանոնավոր գոյականական արմատ, չհնչյունա-
փոխվող, «թուխ-մոխրագույն կռելի մետաղ» հիմնական
նշանակությամբ

ան- – ածականակերտ ժխտական նախածանց, միանում է
գոյականական, ածականական, բայական հիմքերին
առանց հոդակապի

-ական – ածականակերտ վերջածանց՝ «վերաբերող» նշա-
նակությամբ, միանում է գոյականական հիմքերին առանց
հոդակապի և անհրաժեշտության դեպքում ձայնակապով

-է- – -ա- հոդակապի դիրքային տարբերակ...

- Բառակազմական տարրերի դասակարգում. օրինակ.

ածանցելիներ (բառեր, արմատներ), բառակազմական հիմքեր (արմատական, նախածանցավոր, վերջածանցավոր, բարդ են), ածանցներ [վերջածանցներ, նախածանցներ, շրջածանցներ (օրինակ՝ **վեր-...-յա՝ վեր-գետն-յա**), միջածանցներ (բազմապատկական, սոսկական), ներածանցներ (օրինակ՝ **-լ՝ պոկել – պլոկել**)], հիմքակազմիչ մասնիկներ (հավելատարրեր կամ ներույթներ՝ հոդակապ, ձայնակապ են)

- Բառակազմական տարրերի հարաբերությունների ձևայնացում. օրինակ.

((C)B)A – ((երկաթ)ուղա)գիծ [Այստեղ **A**-ն սերող հիմքն է, **B**-ն՝ առաջնային բաղադրող հիմքը, **C**-ն՝ երկրորդային բաղադրող հիմքը:]

կամ՝

{[վերա(կանգն)]ող}ական [Այստեղ փակագծերով նշված է բառակազմական բաղադրիչների հավելման հերթականությունը: Բառակազմական ամեն մի քայլում փակագծերի մեջ սերող հիմքն է, փակագծերից դուրս՝ բաղադրող հիմքը: Հետևաբար առաջնային սերող հիմքն է *կանգն*, երկրորդայինը՝ *վերականգն*, երրորդայինը՝ *վերականգնող*:]

կամ՝

**վերա-կանգն-ողական** [Այստեղ բառակազմական բաղադրիչների հավելման հերթականությունը նշված է սլաքներով:]

- բառակազմական ածանցական կաղապարների հավաքածուի կազմում¹. օրինակ.

ձգ+ող+ական+ություն – Բա₁ա₂գ (Va₁a₂s) [Այստեղ Բ-ն (V) նշանակում է բայական հիմք, ա₁-ը (a₁)՝ ածականակերտ առաջնային վերջածանց, ա₂-ը (a₂)՝ ածականակերտ երկրորդային վերջածանց, գ-ն (s)՝ գոյականակերտ վերջածանց:]

կան+ացի+որեն – Գամ [Այստեղ Գ-ն նշանակում է գոյականական հիմք, ա-ն՝ ածականակերտ վերջածանց, մ-ն՝ մակբայակերտ վերջածանց:]

մեն+ա+տն+տես+ական – ԹԳԲա [Այստեղ Թ-ն նշանակում է թվականական հիմք, Գ-ն՝ գոյականական հիմք, Բ-ն՝ բայական հիմք, ա-ն՝ ածականակերտ վերջածանց:]

- բառակազմական հարացույցների կազմում. օրինակ.

¹ Բառակազմական կաղապարների մասին տե՛ս, օրինակ, **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978: **Էլոյան Ս.**, Ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1963: **Խաչատրյան Լ.**, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Եր., 2011:

օրգան		հիվանդություն ¹		բժիշկ <i>Գ+աբույժ</i>	բժշկության ուղրստ <i>Գ+աբուժ+ույթ- յուն</i>
		բորբո- քային	ախտա- բանական		
բառ	հիմք (Գ)	<i>Գ+աբորբ</i>	<i>Գ+ախտ</i>		
թոք		թոքա- բորբ	թոքախտ	թոքաբույժ	թոքաբուժու- թյուն
նյարդ		նյարդա- բորբ	նյարդախտ	նյարդա- բույժ	նյարդաբուժու- թյուն
լյարդ		լյարդա- բորբ	լյարդախտ	լյարդա- բույժ	լյարդաբուժու- թյուն
հոդ		հոդա- բորբ	հոդախտ	հոդաբույժ	հոդաբուժու- թյուն
մաշկ		մաշկա- բորբ	մաշկախտ	մաշկա- բույժ	մաշկաբուժու- թյուն
մկան		մկանա- բորբ	մկանախտ	մկանա- բույժ	մկանաբուժու- թյուն
երի- կամ		երիկա- մաբորբ	երիկա- մախտ	երիկամա- բույժ	երիկամաբու- ժություն
ոսկոր	ոսկր	ոսկրա- բորբ	ոսկրախտ	ոսկրա- բույժ	ոսկրաբուժու- թյուն
գեղձ		գեղձա- բորբ	գեղձախտ	գեղձա- բույժ	գեղձաբուժու- թյուն

¹ Տեղի տրված է և տեխնիկական անհարմարության պատճառով հիվանդությունների ու ախտանիշների ոչ բոլոր տեսակներն են այստեղ ներկայացված: Մասնավորապես անտեսված են **-ցավ** (-ալգիա), **-ուռուցք** (-ոմա), **-ուրթյուն** (-իա) և այլ ածանցներով ու ածանցակերպներով կազմությունները (նյարդացավ – նևրալգիա, նյարդուռուցք – նևրոմա, երկտեսություն – դիպլոպիա ևն):

գործողություն <i>հիմք+ել</i>	գործիք <i>հիմք+իչ</i>	գործողության անվանում <i>հիմք+ում</i>
տպել	տպիչ	տպում
պատճենել	պատճենիչ	պատճենում
ծրել	ծրիչ	ծրում
փոխարկել	փոխարկիչ	փոխարկում
որոնել	որոնիչ	որոնում
տողադարձել	տողադարձիչ	տողադարձում
մշակել	մշակիչ	մշակում
ցուցարկել	ցուցարկիչ	ցուցարկում
զննել	զննիչ	զննում
գտել	գտիչ	գտում
տեղադրել	տեղադրիչ	տեղադրում
ուղղագրել	ուղղագրիչ	ուղղագրում
թարգմանել	թարգմանիչ	թարգմանում

խոսքի մաս	խոսքի մասին վերաբերող	խոսքի- մասային փոխան- ցում	խոսքի մասից կազմված	խոսքի մաս կերտող
գոյա- կան	գոյակա- նական	գոյակա- կանացում	գոյակա- նակազմ	գոյականա- կերտ
ածա- կան	ածակա- նական	ածակա- նացում	ածակա- նակազմ	ածականա- կերտ
թվա- կան	թվակա- նական	թվակա- նացում	թվակա- նակազմ	թվականա- կերտ
բայ	բայական	բայացում	բայակազմ	բայակերտ
մակ- բայ	մակբայա- կան	մակբայա- ցում	մակբայա- կազմ	մակբայա- կերտ

դերա- նուն	դերանվա- նական	դերանվա- նացում	դերանվա- նակազմ	դերանվանա- կերտ
դերբայ	դերբայա- կան	դերբայա- ցում	դերբայա- կազմ	դերբայա- կերտ

- բառակազմական կանոնների ձևայնացում. օրինակ.

Որոշ արմատներ ունեն հիմքային տարբերակներ (աչք – ակն, կանգ – կանգն, մի – մեն, ուղի – ուղ, կին – կն – կան նն)՝ որոշակի գործառական ու դիրքային բաշխմամբ:

Կան հոմանիշ ածանցներ (-ային, -ական, -յան նն)՝ որոշակի գործառական, դիրքային, իրադրական և ավանդական բաշխմամբ:

Որոշակի դեպքերում տեղի է ունենում շեշտափոխական հնչյունափոխություն (ձիգ – ձգ, տուն – տն նն):

Հոդակապի գործածությունը կապված է դիրքային ու կառուցվածքային որոշակի գործոնների հետ:

- բառակազմական քայլաշարերի ձևայնացում. օրինակ.

վերականգնողական

1. **կանգ**
2. կանգ+**ուն** > կանգուն
3. (կանգուն > կանգն-)
4. կանգն+**ել** > կանգնել
5. **վերա**+կանգնել > վերականգնել
6. (վերականգնել > վերականգն-)


7. վերականգն+ող > վերականգնող
8. վերականգնող+ական > վերականգնողական

լուսավորչականություն

1. **լույս**
2. (լույս > լուս)
3. լույս+ավոր > լուսավոր
4. լուսավոր+իչ > լուսավորիչ
5. (լուսավորիչ > լուսավորչ-)
6. լուսավորչ+ական > լուսավորչական
7. լուսավորչական+ություն > լուսավորչականություն

երկաթուղի

1. **երկաթ**
 2. երկաթ+ուղի > երկաթուղի
 3. (երկաթուղի > երկաթուղ-)
 4. (երկաթուղ+ա > երկաթուղա-)
 5. երկաթուղի+գիծ > երկաթուղագիծ
- Բառակազմական տարրերի կախումների (հղումների) ծառի կազմում [Այստեղ աջից ձախ հերթականությունը համապատասխանում է տվյալ բառի բաղադրիչների շարադասությանը, վերից վար հերթականությունը՝ դրանց ստորակարգությանը:]: օրինակ.



- բառակազմական տրոհման և սերման համակարգերի ձևայնացում.
1. նախագծի ծրագրային ապահովում,
 2. փորձարկում,
 3. թողարկում,
 4. աշխատանքի արդյունքների վերահսկման ու մշտադիտարկման հիման վրա հավելվածի պարբերական կատարելագործում:

Կարելի է ասել, որ այսպիսի ինքնագարգացող հավելվածը ի վիճակի է ապահովելու էլեկտրոնային բառարանի և լեզվի բառապաշարի ինքնագարգացումը:

Այսպիսով, սույն նախագիծը հնարավորություն է տալիս էլեկտրոնային բառարանների և դրանց պարունակած բառապաշարի կատարելագործման, մասնավորապես որևէ լեզվի բառապաշարի համալրման, բառիմաստների ճշգրտման, բառային տարբերակների սահմանափակման,

միասնական տրամաբանությամբ և համաձևության (իզոմորֆիզմի) սկզբունքով ածանցյալների սերման, իրականության՝ բառային միավորներով առավել համարժեք արտացոլման, բառարանի ծավալների և բառարանագրական աշխատանքի խնայողության:

Բառասերման ծրագրի կիրառությունները

Հնարավոր կիրառություններից նշենք մի երկուսը:

Կարելի է ներածել բառակազմական կաղապարի միայն ածանցելի բաղադրիչը, իսկ դրա ածանցյալները կսերվեն ծրագրի միջոցով: Օրինակ.

ածանցելի		ածանցյալներ			
<i>բառ</i>	<i>հիմք (Գ)</i>	<i>Գ+ազիր</i>	<i>Գ+ազր+ ություն</i>	<i>Գ+ազր+ իչ</i>	<i>Գ+ազր+ որդ</i>
սիրտ	սրտ-	սրտազիր	սրտազրու- թյուն	սրտա- գրիչ	սրտա- գրորդ
ցնց- ղուկ	ցնցղ-	ցնցղազրութ- յուն			
ստինք	ստինք-				
գեղձ	գեղձ-				
հող	հող-				
ուղեղ	ուղեղ-				
գանգ	գանգ-				
ստա- մոքս	ստա- մոքս-				
ըմ- պան	ըմ- պան-				
կո- կորդ	կո- կորդ-				

ա- կանջ	ա- կանջ-				
քիթ	քթ-				

Ծրագիրը կարող է ածանցելի բաղադրիչներ հայտնաբերել տարբեր աղբյուրներում (գրվածքներում), այլ լեզուներում և դրանցից սերել ածանցյալներ: Օրինակ՝ ստորև որպես ֆրանսերեն **կոլաժ** բառի համարժեք՝ առաջարկված է հայերեն երկու տարբերակ՝ **սոսնձանկար**, **ծվենանկար**: Դրանցից առաջինը (**սոսնձանկար**) կարող է կիրառվել որպես **կոլաժ**-ի ընդհանրական համարժեք, քանի որ նկարի այդ տեսակը ստեղծվում է կտավի (ստվարաթղթի) վրա տարբեր իրերի կամ դրանց բեկորների, ծվենների սոսնձմամբ (**կոլաժ** ֆրանսերենում բառացի նշանակում է «սոսնձում»): Երկրորդը (**ծվենանկար**) կարող է կիրառվել որպես կոլաժի այն տարատեսակի անվանում, որը ստեղծվում է տարբեր իրերի (թղթի, գործվածքի, բույսի ևն) ծվենների սոսնձմամբ: Տրված են նաև տարբեր աղբյուրներից հայտնաբերված չորս նոր ածանցելիներ՝ **հատիկանկար**, **բրնձանկար**, **կորեկանկար**, **ոսպանկար**, որոնք ևս սոսնձանկարի տարատեսակներ են կամ ենթատարատեսակներ:

Բառակազմական կաղապար				
Ածանցելի		Ածանցյալներ		
	<i>I հիմք +ա-յին</i>	<i>I հիմք+իչ</i>	<i>II հիմք+ու-թյուն</i>	<i>II հիմք+ա-կան</i>
Իմաստային կաղապար				

նկարի տեսակ	նկարի տեսակին վերաբերող	նկարիչ	նկարչության տեսակ	նկարչության տեսակին վերաբերող
գեղանկար	գեղանկարային	գեղանկարիչ	գեղանկարչություն	գեղանկարչական
գծանկար	գծանկարային	գծանկարիչ	գծանկարչություն	գծանկարչական
խճանկար	խճանկարային	խճանկարիչ	խճանկարչություն	խճանկարչական
սրբանկար	սրբանկարային	սրբանկարիչ	սրբանկարչություն	սրբանկարչական
մանրանկար	մանրանկարային	մանրանկարիչ	մանրանկարչություն	մանրանկարչական
յուղանկար	յուղանկարային	յուղանկարիչ	յուղանկարչություն	յուղանկարչական
ջրանկար	ջրանկարային	ջրանկարիչ	ջրանկարչություն	ջրանկարչական
որմնանկար	որմնանկարային	որմնանկարիչ	որմնանկարչություն	որմնանկարչական
լուսանկար	լուսանկարային	լուսանկարիչ	լուսանկարչություն	լուսանկարչական
դիմանկար	դիմանկարային	դիմանկարիչ	դիմանկարչություն	դիմանկարչական
բնանկար	բնանկարային	բնանկարիչ	բնանկարչություն	բնանկարչական
սրբանկար	սրբանկարային	սրբանկարիչ	սրբանկարչություն	սրբանկարչական
մարտանկար	մարտանկարային	մարտանկարիչ	մարտանկարչություն	մարտանկարչական
խարանկար	խարանկարային	խարանկարիչ	խարանկարչություն	խարանկարչական

սոսնձա- նկար, ծվենանկար (կոլաժ)				
հատիկա- նկար				
բրնձանկար				
կորեկա- նկար				
ոսպանկար				

Հավելվածը կարող է կցված լինել ինքնաշխատ թարգման-
չին, ինչպես հոլովման ու խոնարհման հավելվածներն են:
Այլևս կարիք չի լինի էլեկտրոնային թարգմանիչի բառա-
պաշարում հատ-հատ ունենալու հավելվածով սերվող ա-
ծանցյալ բառերը:

Բառարանի ինքնահամալրման քայլաշար

1. ածանցելի բառի նշագրում (ֆիքսում),
2. այդ բառին համապատասխան իմաստային դաշտի որոշում,
3. այդ բառին հարաբերակից (նույնամակարդակ) բառապաշարի ճշտում,
4. համապատասխան բառակազմական հարացույցի վեր-հանում,
5. նշագրված ածանցելի բառի տեղադրում հարացույցում,
6. բառակազմական հիմքի ճշտում,
7. լրացուցիչ կանոնների կիրառում,

8. ածանցյալների սերում,
9. ածանցյալների տեղադրում հարացույցի բաց վանդակներում,
10. ածանցյալների ներառում բառարանի փաստացի ընդարձակ բառացանկ:

Բանալի բառեր – հայոց լեզու, էլեկտրոնային բառարան, ինքնազարգացում, բառակազմական տարր, բառակազմական հարացույց, կախումների ծառ, ածանցելի, ածանցյալ, ձևայնացում, ինքնահամալրման քայլաշար:

Hovhannes Zaqaryan – A Method of Self-development of Armenian Electronic Vocabulary. - The article is devoted to problems of automatic perfection of electronic dictionaries, as well as terminological lexicon of the Armenian language.

Currently the electronic dictionaries develop mainly through external resources. The present paper offers an internal mechanism of development, i. e. an automatic electronic application, based on embedding derivational paradigms and models, semantic analyses of the lexicon, and derivational auto-generation.

Besides the grammatical (morphological) paradigms, there are also derivational paradigms that are almost not involved in the models of electronic analysis and generation of Armenian. The Armenian language is characterized by uniformity and homogeneity of these paradigms. This feature allows to create an automatic mechanism, applicable particularly in electronic dictionaries, for enlargement and improvement of vocabulary, especially terminology.

The application, based on analyses of the paradigms, fills in the empty cells of paradigms, detects faults and defects of vocabulary, offers recommendations for the elimination of irregularities, anomalies and deviations, for selection of the best cases out of the derivational, phonetic and orthographic variants and synonyms, for clarification of the meanings (dictionary explanations) of words. It also creates equivalents of barbarisms and neologisms from other languages, new words for the newly emerged ideas and realities.

Key words – Armenian language, electronic dictionary, self-development, derivational element, derivational paradigm, dependency tree, producing word, derivative, formalization, self-replenishment algorithm.

Օգանнес Закарян – Метод саморазвития электронного словаря армянского языка. – Статья посвящена проблемам автоматического совершенствования электронных словарей, а также терминологической лексики армянского языка.

В настоящее время электронные словари развиваются в основном за счет внешних ресурсов. В статье предлагается механизм внутреннего развития, то есть принцип программы-приложения, основанной на внедрении словообразовательных парадигм и моделей, семантического анализа лексики, а также словообразовательной автогенерации.

Наряду с морфологическими парадигмами существуют также словообразовательные парадигмы, которые почти не учиты-

ваются в моделях электронного анализа и генерации армянской лексики. Армянский язык характеризуется единообразием и гомогенностью таких парадигм. Это свойство делает возможным создание автоматического механизма пополнения электронных словарей и усовершенствования лексики, особенно – терминологии.

Приложение, основанное на анализе парадигм, заполняет пустые ячейки парадигм, обнаруживает недостатки и дефекты лексики, генерирует рекомендации по устранению аномалий и отклонений, по выбору лучших версий из деривационных, фонетических и орфографических вариантов и синонимов, по уточнению значений (словарных пояснений) слов, создает эквиваленты варваризмов и неологизмов из других языков, а также — новые слова для возникших новых идей и реалий.

Ключевые слова – Армянский язык, электронный словарь, саморазвитие, словообразовательный элемент, словообразовательная парадигма, древо зависимостей, производящее слово, производное слово (дериват), формализация, алгоритм самопополнения.

**ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՐՍՏԱՅՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ**

Նարինե Դիլբարյան (ԵՊՀ)

Արդի արևելահայերենի՝ իբրև ազգային-պետական լեզվի բառապաշարը ձևավորվել է դեռևս վաղնջահայերենից եկող հնդեվրոպական բնիկ ու փոխառյալ արմատներից և ածանցներից, որոնք կազմում են ընդհանուր կամ համահայկական բառերի շերտը: Համահայկական բառաշերտը մեր երեք գրական լեզուների, ինչպես նաև հայերենի բարբառների հիմքն է ու ատաղձը: Համահայկական բառերը և՛ քանակական, և՛ որակական բնութագրիչներով առաջնային են, կազմում են բառապաշարի միջուկը, ունեն մեծ կենսունակություն և բառակազմական ներուժ:

Էդ. Աղայանի արձանագրմամբ՝ դրանց զգալի մասը պարզարմատական և հիմնային ածանցներով (անորոշ դերբայի **-ել**, **-ալ**, գոյականակերտ **-ք**) կազմված բառերն են: Հայագետն իր կազմած «Արդի հայերենի բացատրական բառարանի» տվյալների հիման վրա համահայկական բառերի կենսունակությունը և արտադրողականությունը ցույց տալու համար վիճակագրություն է կատարում՝ նշելով, որ միայն **գլուխ** արմատից հայերենում կազմվել է 150 բաղադրյալ բառ, իսկ **գործ** արմատից՝ 176, **երկու** բառից՝ ավելի

քան 550 նոր միավոր¹: Այս տվյալներն արտացոլում են հայերենի բառապաշարի արդեն անցյալ վիճակը. կարող ենք փաստել, որ վերոնշյալ երեք արմատներով արդի հայերենում արդեն կազմվել և կայուն կիրառություն են ձեռք բերել տասնյակ նոր միավորներ, ընդ որում դրանց քանակը ժամանակի ընթացքում կարող է բազմապատկվել, այսինքն՝ ունենք բառերի բաց բազմություն: Այսպես, Էդ. Աղայանի բառարանում վկայված չեն **գլուխ** արմատից կազմված հետևյալ նոր համագործածական բառերը՝ **բանագլուխ, գլխամակերես, գլխաբան, հավաքագլուխ, գործ** արմատից ունենք **ազարակագործ, գործակցային, ընթացագործ, շուկայագործ, փայլաթիթեղագործ, երկու** բառից ստեղծվել և լայն կիրառություն են ստացել **երկգայլիկոն, երկդեսպան, երկխոսնակ, երկձևաչափ, երկհյուպատոս, երկնախագահ** և այլ նորակազմություններ:

Ակնհայտ է, որ այս նորակազմություններն արտահայտում են ժամանակակից գիտության և տեխնիկայի, հանրային, պետական կառավարման տարբեր իրողություններ, դրանք նոր եզրույթներ են, բայց հայախոս մարդու համար թափանցիկ և դյուրընկալ, որովհետև կազմված են համահայկական բառերից և ածանցներից ընդհանրական կաղապարների միջոցով:

¹ Հմմտ. **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 120-121:

Տարժամանակյա բառակազմական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս միջուկային բառերից կազմվող ածանցման ու բառաբարդման հիմնական կաղապարները գալիս են գրաբարից, այսինքն՝ մեր առաջին գրական լեզվից, որի ազդեցությունը բազմակողմ է, համակարգաստեղծ հայերենի թե՛ բառակազմության, թե՛ իմաստաբանության մակարդակներում:

Մեր այս ուսումնասիրության նպատակը գրաբարյան բառակազմական կաղապարների, իմաստաբանության, դարձվածային կառույցների դերի և ազդեցության բացահայտումն է արդի հայերենի բառապաշարի հարստացման մշտական գործընթացում: Ընդ որում, կանխավ նշենք, որ այդ ազդեցությունը կարող է լինել և՛ բացահայտ, և՛ թաքնըված, այսինքն՝ քննության առաջին մակարդակում գրաբարյան կառույցների իրական դերն ու նշանակությունը կարող են թերագնահատվել՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրաբարի իմացության մակարդակը ներկայումս խորանալու և տարածվելու միտում չունի, ընդհակառակը, կարող է տպավորություն ստեղծվել, թե այն դառնում է նեղ ու պարփակվում է զուտ բանասիրական և հարբանասիրական մասնագիտությունների շրջանակով: Բայց իրականում գրաբարի իմացությունը հայոց լեզվակիր հանրության մտածողության մեջ ոչ միայն գիտակցական է, այլև ենթագիտակցական, ամրակայված գենոտիպի մակարդակում, ներքին հիշողության մեջ և բառաստեղծողի կամ բառակիրառողի ուղղակի գիտելիքների

հետ չի աղերսվում, այն լեզվակիր հանրության ընդհանրական ազգամտածողության բնույթից է բխում, ուստի ինչ-որ առումով վերժամանակյա երևույթ է: Այս միտքն առավել պատկերավոր ու համոզիչ դարձնելու համար բերենք Արսեն Այտընյանի ուշագրավ դիտարկումները: Հայոց լեզվի պատմության անդրանիկ հետազոտողի իր անվրեպ բնագոյով և հանրագիտարանային գիտելիքներով Ա. Այտընյանը կարողացավ բացահայտել հայ պարզ լեզվակրի, որին ինքը կոչում էր «ռամիկ» տարողունակ բառով, լեզվազգացողության գրաբարյան ակունքները: Առաջին հայացքից թվում է, թե «ռամիկ բանի»-ը, այսինքն՝ ժողովրդախոսակցական լեզուն հակադրությունն է հին հայերենի, այդ խոսակցական լեզվի ազդեցությամբ գրաբարը դուրս մղվեց լայն շրջանառությունից, փոխարինվեց միջին գրական հայերենով և ապա՝ աշխարհաբարով, սակայն ավելի ուշադիր ուսումնասիրության պարագայում երևան է գալիս պարզ լեզվակրի՝ ռամիկի մեջ ամուր նստած պահպանողական լեզվաընկալումը, որը գրաբարյան է:

«Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» հիմնարար աշխատության «Նախաշավդում» Ա. Այտընյանը, համեմատելով հին և նոր գրական լեզուներն ու բարբառները, գրում է. «Նույնութեանց մէկ աղբիւրն ալ է հասարակաց աղբիւրը՝ հին լեզուն (գրաբարը), որուն մէկ մասը հիմայ մէկուն մէջ աւելի խստիւ՝ եւ միւսին մէջ իբրեւ երկրորդական բան պահուած ըլլալով՝ երբեմն աւելի պակաս իրարու կը մերձենան, երբեմն գրաբարի

նմանություն մը կ'առնուն, երբեմն մինակ կը մնան եւ այլն, ... առհասարակ նոր լեզուաց՝ նոյնպէս նոր հայերէնի մէջ թաքուն մնացած հնություններ կան»¹: Իբրեւ հիմնավորում իր ասածի նա բերում է աշխարհաբարյան տարբեր նորակազմ բառեր և ոճեր, որոնք նոր լինելով հանդերձ՝ մեծ հնություն ունեն: Այսպէս՝ ռամկական *վայրահաչան* (շուն) բառը, որի կազմությունը թէև գրաբարյան չէ, բայց հայտնապէս հին գրաբարի *ընդ վայր հաչել* ոճից է ծագում: Գրաբարում *ընդ վայր* նախորային կապակցությունը ձևի մակբայի արժեք ուներ՝ ՆՀԲ-ում վկայված «վայրապար, ի գուր, ի նանիր, անխորհրդաբար, պարզաբար»² նշանակություններով: Գրաբարի բառարաններում *վայրահաչել* կամ *վայրահաչան* կազմություններ չկան, դրանք երևան են գալիս միջին հայերէնի, ապա աշխարհաբարի բառարաններում, բայց դրանց ելակետն անկասկած *ընդ վայր հաչել* դարձվածքն է: Ընդ որում, գրաբարյան այս դարձվածը նոր հայերէնում բաղադրիչների սերտաճմամբ վերածվում է բարդաձանցավոր կազմության, որոնց մէջ *հաչել* բաղադրիչի ուղիղ իմաստը փոխվում է. այն սկսում է ուղղակի վերաբերել ոչ թէ չորքոտանի, այլ երկոտանի արարածներին, «վայրահաչող շուն» կապակցության շուն բաղադրիչը ընկնում է: *Վայրահաչել* բայը և նրանից ծագած *վայրահաչություն* վերացական գոյականը Էդ. Աղայանի «Բացատրա-

¹ Արսէն Այտընեան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 220, 222:

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Եր., 1981, էջ 778:

կան բառարանում» ունեն «1. իզուր ավելորդ խոսել, շահակրատել, վայրախոսել, դատարկախոսել, 2. չարախոսել, զրախոսել», «վայրհաչ խոսք, զրույց» իմաստները¹: Այնուհետև Այտընյանն անդրադառնում է *ցնծում* բառին, որն արդի հայերենում նաև հոգևոր իմաստ ունի՝ եկեղեցական տոնախմբման, երգասացության՝ նշելով, որ այս խոր հնությունն ունեցող իմաստը դարձյալ գալիս է գրաբարից՝ «ամյամէ զտորա զոր տօնին ...*ցնծան*»: Հին և նոր լեզուների կապի բնութագրական օրինակ է նաև **ազգուտակ** աշխարհաբարյան բառը, որը դասական մատենագրության մեջ վկայված է *ազգ եւ տակ* ձևով: Բուզանդի պատմության մեջ ունենք «*ազգ եւ տակի* եւ տոհմի Արշակունեաց» արտահայտությունը, որից բխում է, որ *տակ* բառը գրաբարում ուներ նաև *զարմ, գերդաստան* իմաստը², այսինքն՝ ազգի հոմանիշն էր: Զուտ աշխարհաբարյան թվացող *ձնագնդի խաղալ* դարձվածքի համար ևս Այտընյանը գտնում է գրաբարյան նախօրինակ Հովհան Մամիկոնյանի երկում՝ «*գնդի խաղալ*» ձևով: Հայ դասական մատենագրության ժամանակներից հայտնի է «*ի դուրսն հուպ երթեալ եւ դնել*» (այսինքն՝ *փակել*) դարձվածքը, և ցայսօր էլ հայ բարբառախոսն ասում է՝ «*դուռը դիր*»: Բառակազմական ընդհանրական կադապարները բացահայտելով՝ Այտընյանը բերում է գրաբարում հայտնի *գիշերախառն* բառի օրինակը (նշանակում է *գիշերով*): Աշխարհաբարում այս կառույցը տարածվում է,

¹ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1358:

² «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 838:

համաբանությամբ ստեղծվում են այլ նման մակբայներ՝ **լա-լախառն, հյուսիսախառն, հեզնախառն**¹ բոլորը գործիական հոլովի իմաստով՝ լալով, հյուսիսով, հեզնանքով և այլն:

«Հին գրքերի մթին խորշերից» գալիս են գրաբարի մնացորդները. այսպես է եզրափակում մեծավաստակ հայագետը: «Համոզուած պէտք ենք ըլլալ, որ ռամիկն իւր պահպանողականութեամբը հնագիտաց եւ բանասիրաց նորանոր գիւտերու հետ կրնայ մրցիլ, եւ կարծուածէն շատ աւելի ծանրակշիռ ուղիղ հետեւութիւններու կու գանք՝ ռամկին այս արդիւնքը դիտելով ու յարգելով»¹: Մեզ թույլ ենք տալիս մասամբ միով խմբագրել Վիեննայի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ հայր Արսեն Այտընյանին՝ «մթին» բառը փոխարինելով: Մեր համոզմամբ՝ հին գրքերի *լուսավոր խորշերից* գալիս են արտաքին աշխարհի լեզվական կերպավորման տասնյակ հազարավոր գրաբարյան կառույցները:

Գրաբարյան դարձվածային կառույցները, հարադրավոր բայերը արդի հայերենում, որպես կայուն օրինաչափություն, վերածվեցին միաբաղադրիչ կառույցների՝ հարըստացնելով մեր բառապաշարը հուզազգայական և մտածական գործողություններ արտահայտող բազմաթիվ բայերով՝ **ակն ածել – ակնածել, ակն արկանել – ակնարկել, ակն կալնուլ – ակնկալել, ահաբեկ առնել – ահաբեկել, զամօթի հարկանել – ամոթահարվել, զմտաւ ածել – մտածել, ի գործ**

¹ Արսեն Այտընեան, նշվ. աշխ., էջ 222:

ածել – գործածել, ի գործ առնել – գործառնել, ի գործ արկանել – գործարկել, ի միտս բերել – մտաբերել, ի սուր հարկանել – սրահարել, ծափս հարկանել – ծափահարել, հարկանել ի սէր – սիրահարվել, հարկանիլ յայսոյ – այսահարվել, հարկանիլ ի դիւէ – դիվահարվել, ձեռն արկանել – ձեռնարկել, շեփոր հարկանել – շեփորահարել, ոտն հարկանել – ոտնահարել, ունկն դնել – ունկնդրել և այլն:

Այս արտահայտություններից առանձնացնենք *հարկանել ի սէր* դարձվածքը, որը զգացմունքի յուրօրինակ կերպավորում է. հնդեվրոպական լեզուների մեծ մասում *սիրահարություն*-ն ընկալվում է որպես *սիրո մեջ հայտնվելու, ընկնելու իրողություն*, լատիներում՝ *in amorem incidere* կամ *cadent in amore*, ռուսերենում՝ *влюбиться*, անգլերենում՝ *to be in love*, իսկ հայերենում՝ ոչ թե սիրո մեջ լինել, այլ գրաբարյան ընկալմամբ՝ սիրո հարվածների մեջ լինել. սա սիրո մեր ազգային ընկալման նրբերանգն է:

Ածել և *հարկանել/իլ* գրաբարյան բայերն ինքնին արդի հայերենում գործածական չեն, *ածել*-ն ընդհանրապես դուրս է մղվել՝ պահպանվելով բարբառներում, իսկ *հարկանել*-ը կիրառվում է կատարյալի հիմքից ստեղծված *հարել* ձևով, բայց քանի որ այս բայերը վերաիմաստավորված հարադիր կապակցություններում խիստ գործունակ էին, նրանք պահպանվել են արդիհայերենյան բառաբարդման կադապարներում:

Ընդհանուր կամ համահայկական բառերի հետ մեկտեղ ժամանակակից հայերենի բառապաշարում ընդունված է առանձնացնել հին կամ գրաբարյան բառերը, գրաբարաբանությունները: Էդ. Աղայանի պնդմամբ՝ սրանք հայտնապես գրաբարյան այն կազմություններն են, որոնք ոչ թե ժառանգորդությամբ են անցել նոր հայերենին, այլ գրողների կամ գիտնականների կողմից փոխառվել են գրաբարից և կիրառական դարձել հայերենում¹: Ալ. Մարգարյանը, անդրադառնալով գրաբարյան բառերին, գրում է. «Գրաբարյան բառերը նրանք են, որոնք ժամանակակից հայոց լեզվին են փոխանցվել գրաբարից՝ հիմնականում գրական ճանապարհով: Աշխարահաբարը, վաղ շրջանից սկսած, մշակվելով և գրականանալով, հայ հին դասական լեզվի՝ գրաբարի ճոխ բառազանձից բազմաքանակ բառեր է առել ու դարձրել դրանք իր անկապտելի սեփականությունը»²: Լեզվաբանն ընդգծում է, որ գրաբարյան բառերի տեղաշարժ-տեղափոխությունն արդի հայերեն տեղի է ունեցել շարունակաբար ու անընդմեջ: Հավաստենք, որ այդ սահուն անցումը հավերժական գործընթաց է՝ բնության մեջ էներգիայի փոխակերպման հիմնարար օրենքին համապատասխան: Լեզվի համակարգում էներգիայի առաջնային դրսևորումը բառերն են և բառաստեղծման կադապարները, որոնց միջոցով իրականացվում է իրականության

¹ Հմմտ. **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջք 125-128:

² **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Եր., 1993, էջ 178:

կերպավորումը, և գրաբարյան բառերը հայերենի զարգացման տարբեր շրջաններում, դառնալով հայոց նոր գրական լեզվի սեփականությունը, պայմանական ասած՝ կորցնում են իրենց գրաբարյան բնույթը՝ փոխակերպվելով ընդհանուր հայկական բառերի:

Ցույց տալու համար գրաբարյան բառային էներգիայի ընդհանուր հայկականացումը քննենք մի քանի յուրօրինակ կազմություններ: Այսպես՝ *անդաստակ*¹՝ ՆՀԲ-ում այս բառը, որտեղ *անդ*, *աստ* դերանվանական մակբայները միացել են *-ակ* վերջածանցի հետ՝ ստեղծելով բաղադրություն, բացատրվում է իբրև «գաւիթ, նախադուռն տան, արտաքին սրահ»¹, լատիներեն vestibulum, արդի հայերենում այս հմաստով գրեթե չի գործածվում, բայց *-ային* ածանցի հետ այն դարձել է կազմախոսական եզրույթ՝ վեստիբուլյար ապարատի հայերեն համարժեքը, նշենք, որ գրաբարում այն *-ային* ածանցով վկայված չէ: Կամ *մանրէ*, *հնէաբան* կազմությունները, որոնք գրաբարի բառարաններում վկայված չեն, բայց ակներև հին հայերենի ստացվածք են, որովհետև *է*-ն՝ իբրև ինքնուրույն բառարմատ, գալիս է մեր հին գրական լեզվից, որին կարող էր միանալ *-ակ* ածանցը՝ կերտելով *էակ* ընդհանուր հայկական բառը: Երբ անհրաժեշտ եղավ գտնել *միկրոբ* և *պալեոնտոլոգ* բառերի հայերեն համարժեք եզրույթները, այս արմատով ստեղծվեցին խիստ կենսունակ հայկաբան բազմաթիվ կազմություններ՝ *ման-*

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., 1979, հ.1, էջ 131:

ընտանություն, մանրէաբանական, մանրէազերծ, մանրէազերծել, մարնէազերծիչ, հնէաբանություն, հնէաբանական, հնէաբանորեն և այլն:

Նոր հայերենի բառապաշարում ամրակայված գրաբարյան շատ արմատներ ձևով չեն փոփոխվել, այսինքն՝ արտահայտության մակարդակում կայուն են, բայց բովանդակության մակարդակում կրել են մեծ փոփոխություններ: Նման բառերը Էդ. Աղայանն առաջարկում է կոչել «բոլորովին նոր բառ (նորակերտություն)»¹: Իբրև օրինակ՝ բերում է հետևյալ վերաիմաստավորված գույգերը՝ *համակցել*, գրաբարում՝ հադորդակցել - *համակցել*, աշխարհաբարում՝ «կոմբինացնել», *նախաբարբառ*, գրաբարում՝ «առաջինը, սկզբից խոսող, խոսած» - *նախաբարբառ*, աշխարհաբարում՝ «բարբառի կամ բարբառախմբի նախնական համակարգը ներկայացնող բարբառ» (հմմտ. նախալեզու) և այլն:

Մեր համոզմամբ՝ այս օրինակների պարագայում ճշտում պետք է կատարել. հունաբան նախածանցներով այս կազմություններից *համակցել* բայը գրաբարի բառարաններում վկայված չէ, առկա է միայն *համակից* ածականը, որը ՆՀԲ-ում ունի «սերտ միացեալ, անբաժան զօդեալ» իմաստ, որից հեշտությամբ կարելի է բխեցնել արդիհայերենյան նշանակությունը: *Կոմբինացիա* բառը ենթադրում է «զոդում, միա-

¹ Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 127, 128:

ցում», բայց, իհարկե, փոփոխական, ոչ անբաժանելի: **Բարքառ** արմատը գրաբարում ուներ «լեզու բանաւորաց, բան, խօսք» իմաստները, ուստի **նախաբարբառի** մեջ «նախալեզու» իմաստը դյուրին ենթադրելի է:

Բերենք իմաստափոխության ճանապարհով ինքնուրույն բառերի առաջացման բնութագրական այլ ուշագրավ օրինակներ: Այսպէս՝ **հաստոց, ձեռներէց, անձնիշխանություն, գործակալություն, գործակալ** բառերը հին և նոր հայերեններում համագործածական միավորներ են: Բայց նրանց արտահայտած բովանդակությունը գրաբարում խիստ տարբերվում էր ներկայիս նշանակություններից, գործօրինակ՝ **հաստոց** նշանակում էր «անջրպետ, պատուար», **հաստել** բայի արմատից է՝ «հաստատել, ամրացնել, ստեղծել», արդի հայերենում այն տեխնիկական եզրույթ է, արտադրական սարքավորման անվանում:

Ձեռներէց-ը գրաբարում ածական էր՝ «յանդուգն, համարձակ, բուռն» իմաստով, արդի հայերենում **բիզնեսմեն** բառի հաջողակ հայերեն համարժեքն է, գոյական անուն: **Անձնիշխանություն**-ը հին հայերենում վերացական գոյական էր, որը նշանակում էր «ազատութիւն կամաց, ընտրութեան կամք, յօժարութիւն», արդի հայերենում **ավտոկրատիա** եզրույթի հայերեն համարժեքն է, որն ունի «բռնապետություն» իմաստը: **Գործակալություն**-ը հին հայերենում նշանակում էր «վերակացութիւն, ուստիկանութիւն», ներկայումս «հիմնարկություն, գրասենյակ, ցանց» իմաստներն է արտահայտում, անգլերեն՝ agency, ռուսերեն՝ агентство նաև

агентура բառերի հայերեն համարժեքը: **Գործակալ**-ը հին գրական հայերենում նշանակում էր «կուսակալ, իշխան, վերակացու, տնտես», իսկ արդի շրջանում այն արտահայտում է «1. Հիմնարկի ներկայացուցիչ, հանձնակատար, 2. Որևէ պետության հակահետախույզ, լրտես» իմաստները: Հիմք ընդունելով այս շարքի բառերի իմաստային տեղաշարժերը՝ գրաբարյան նման միավորները արդի հայերենում կարող ենք համարել վերաիմաստավորված ինքնուրույն եզրույթներ:

Հավարտ արձանագրենք, որ բառապաշարը միշտ համարվում է լեզվի հարափոփոխ և հեղափոխական մասը, քանզի նրանում տեղի ունեցող փոփոխություններն ուղղակիորեն արտացոլում են մարդկային կյանքում կատարվող տեղաշարժերը, նոր հասկացությունների ծնունդը, հների վախճանը: Սակայն առավել խորքային հայացքը երևան է բերում «հեղափոխական» բառապաշարի պահպանողականությունը, անքակտելի կապը հին գրական լեզուների հետ. այս հայեցակետից նոր հայերենը հին հայերենի՝ գրաբարի ոչ թե հակադրույթն է, այլ համադրույթը, նրա ժամանակից կերպավորումը:

Բանալի բառեր – գրաբարի բառապաշար, գրական արևելահայերենի բառապաշար, համահայկական բառեր, լեզվամտածողություն, իմաստափոխություն, գիտաբառեր, բառակազմական միջոցներ, դարձվածքներ, փոխառություններ:

Narine Dilbaryan – Vocabulary of the Ancient Armenian Language as a source of enrichment of the Modern East Armenian Language.

Vocabulary is considered the most conservative part of the language. The vocabulary of the modern East Armenian language is formed on the basis of Indo-European and borrowed roots and suffixes of the Old Armenian language, which form a layer of Pan-Armenian words. These lexical units were used in three Armenian literary languages, as well as dialects. Pan-Armenian words are primary in terms of quantity and quality, make up the core of vocabulary, have great productivity and word-building potential. This article identifies the semantic changes of the ancient Armenian lexical units throughout the history of the Armenian language. Many ancient words, phraseological units acquired new meanings, became terms, designations of new phenomenon and artifacts. Grabar has become a rich source of enrichment of the vocabulary of the modern Armenian language.

Key words - vocabulary of the Ancient Armenian Language, vocabulary of the Modern East Armenian Language, Pan-Armenian words, linguistic mentality, semantic changes, terms, word formation methods, phraseological units, borrowings.

Нарине Дилбарян – Словарный состав грабара как источник обогащения современного восточноармянского языка.

Словарный состав считается самой консервативной частью языка. Лексика современного восточноармянского языка

сформировалась на основе индоевропейских и заимствованных корней и суффиксов древнеармянского языка, которые образуют слой общеармянских слов. Эти лексические единицы использовались в трех армянских литературных языках, так же диалектах. Общеармянские слова и по количеству, и по качеству являются первичными, составляют ядро лексики, имеют большую продуктивность и словообразовательный потенциал. В данной статье выявляются семантические изменения древнеармянских лексических единиц на протяжении истории армянского языка. Многие древние слова, фразеологизмы приобрели новые значения, стали терминами, обозначениями новых явлений и артефактов. Грабар стал неиссякаемым источником обогащения современного армянского языка.

Ключевые слова – лексика древнеармянского языка, словарный состав современного восточноармянского языка, общеармянские слова, лингвоменталитет, семантические изменения, термины, способы словообразования, фразеологизмы, заимствования.

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ

Վիկտոր Կատվայան

(ՀՀ ԳԱԱՀ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ)

Բարբառային բառապաշարը հայոց լեզվի բառային կազմի յուրօրինակ և հետաքրքրական մի մասն է: Ի տարբերություն գրական լեզվի բառապաշարի՝ այն ունի ձևավորման, գործածության, փոփոխության, համալրման՝ գիտակցական կարգավորման չենթարկվող յուրահատկություններ, որոնցով ներկայանում է իբրև բազմաշերտ ու բազմաձև, բազմիմաստ ու բազմերանգ իրողությունների անընդգրկելի մի բազմություն: Ինչ խոսք, ցանկացած բարբառային միավոր, հայերենի այլ դրսևորումների հետ ունենալով բառապաշարային էական ընդհանրություններ, ունի նաև զգալի յուրահատկություններ, որոնք յուրաքանչյուր դեպքում ձևավորում են բառապաշարի առանձին համակարգ: Թերևս այս պատճառով է, որ բարբառագետները բառապաշարային իրողությունները դիտարկել ու դիտարկում են ըստ առանձին բարբառների¹, մյուս կողմից՝ հայերենի բա-

¹ Ճիշտ է, առկա են բարբառային մասնավոր ու ընդհանուր բառարաններ, բարբառային բառամթերք ընդգրկող այլ բառարաններ, բարբառների մենագրական ուսումնասիրություններում սովորաբար բերվում են բառացանկեր կամ բառարաններ, սակայն մենագրություններում բառապաշա-

ռապաշարի վերաբերյալ ուսումնասիրություններում, որպես կանոն, բարբառային բառապաշարը նկատի չի առնվում: Հարկ է նշել, որ հայ բարբառագիտության ընդհանուր բնույթի աշխատություններում Հր. Աճառյանը և Ա. Ղարիբյանը բարբառային բառապաշարը քննության չեն ենթարկել¹: Հ. Աճառյանը «Հայ բարբառագիտություն» աշխատանքի ներածական բաժնում բառապաշարին անդրադառնում է միայն ընդհանուր գծերով: Նա բարբառագիտական ուսումնասիրությունների իր առաջադրած ծրագրում ընդգրկում է ձայնախոսություն, ձայնաբանություն, ձևախոսություն և համաձայնություն բաժինները², իսկ բարբառի քննության համար ամենակարևոր բանը համարում է բառարանի կազմումը, ընդ որում, յուրաքանչյուր բարբառի բառապաշարում առանձնացնում է երեք շերտ՝ բնիկ բառեր, գավառական բառեր և օտար բառեր: Լեզվաբանը բարբառի ուսումնասիրության համար ավելի կարևոր է համարում առաջին խմբի բառերը, որոնցով հնարավոր է վերհանել հնչյունական օրենքները: Նշվում է, որ գավառական բառերը առհասարակ «ռամիկ լեզվի» մեջ են մնացել, և նորնոր ձգտում կա՝ դրանք մտցնելու գրական լեզվի մեջ³: «Հա-

րը, որպես կանոն, առավել քիչ նկարագրված ու վերլուծության ենթարկված բաժինն է, և բառապաշարին անդրադարձը առավելաբար կրում է ակնարկային բնույթ:

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911: **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Եր., 1953:

² Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 5:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 20:

յերեն գավառական բառարան» աշխատության մեջ ևս Հ. Ա-
ճառյանը հայ բարբառների բառապաշարի մեջ առանձնաց-
նում է հիշյալ խմբերը և նշում, որ հայոց լեզվի կատարյալ
ուսումնասիրությունը պահանջում է այդ երեք խումբ բա-
ռերի մանրամասն քննությունը և ուսումնասիրությունը¹,
ընդ որում, ինչպես երևում է հետագա շարադրանքից, լեզ-
վաբանը նման քննության հիմնական եղանակ է համարում
համապատասխան բառարանների կազմումը (բարբառա-
գիտական, օտար բառերի, գավառական բառարաններ)²:
Բարբառային բառապաշարի վերաբերյալ որոշ դիտար-
կումներ կատարել է Ա. Գրիգորյանը³: Նա նկատել է, որ
հայերենի բարբառներն ունեն հարուստ բառապաշար, որը
դեռևս ուսումնասիրված չէ⁴: Լեզվաբանը նկատում է. «Բար-
բառների բառապաշարը կազմվել է երկարատև դարերի
ընթացքում, որի հետևանքով նրա մեջ այժմ էլ կարելի է
ցույց տալ բառապաշարի առանձին շերտեր, որոնք արդ-
յունք են տարբեր դարաշրջանների»⁵: Յուրաքանչյուր բար-
բառում, ըստ Ա. Գրիգորյանի, ցայտունորեն դրսևորվում են
բառապաշարի այն կողմերը, որոնք արտացոլում են տվյալ

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 3-4:

² Տե՛ս նույն տեղը, էջ 4-5:

³ Տե՛ս **Գրիգորյան Ա.**, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 187-203:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 192:

⁵ Նույն տեղում, էջ 195:

միջավայրի բնակչության տնտեսության ու կենցաղի էական կողմերը¹: Նշվում է նաև բարբառներում ընտանեկան հարաբերությունները բնորոշող հարուստ տերմինների, առարկաների մանրամասն անվանումների լայն տարածումը, տեսակային հասկացության արտահայտման համար մեծ քանակությամբ բառերի առկայությունը²: Գ. Զահուկյանը բարբառային բառապաշարին անդրադառնում է բարբառների բառային հիմնական տարբերությունները վերհանելու նպատակադրումով³: Նա ևս արձանագրում է բարբառների բառապաշարի քննության պակասը. «Ճիշտ է, Հ. Աճառյանի աշխատություններից հետո ավանդույթ է ստեղծվել բարբառագիտական գործերին կցելու գրաբարից բարբառ բառարաններ և երբեմն էլ տալու բարբառային բառերի ցանկեր, կան բարբառագիտական զգալի թվով բառարաններ, բարբառների ուսումնասիրության մեջ տեղ է տրվում նաև բառապաշարի (հատկապես իմաստափոխության, փոխառությունների, ավելի քիչ՝ բարբառային բառերի) քննությանը, բայց այս բոլորով հանդերձ, բառապաշարի բնագավառում զուգահեռներ քիչ են անցկացվում և այդ զուգահեռները բարբառների մերձավորության աստիճանը պարզելու համար քիչ են օգտագործվում»⁴: Հավելենք,

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 199:

² Տե՛ս նույն տեղը, էջ 196-197, 199:

³ Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 972, էջ 143-156:

⁴ **Զահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 144:

որ առանձին բարբառների ուսումնասիրությանն ու նկարագրությանը նվիրված մենագրություններում բառագիտությանը նվիրված բաժինը կա՛մ բացակայում է¹, կա՛մ էլ կրում է խիստ ակնարկային ու մասնակի բնույթ²: Կարելի է ասել՝ բարբառային հայերենի բառապաշարը թե՛ ընդհանուր բնույթի բարբառագիտական աշխատություններում, թե՛ առանձին բարբառային միավորների նվիրված մենագրություններում պատշաճ ուշադրության չի արժանացել, չի ենթարկվել համակարգային ամբողջական քննության: Հասկանալի է՝ չենք հավակնում նման քննություն կատարել այս հոդվածի շրջանակներում: Մեր նպատակն է ներկայացնել բարբառային բառապաշարի որոշ առանձնահատկություններ, հիմնականում՝ ըստ պատմական շերտերի, բառակազմական ու իմաստաբանական իրողությունների, որոնք միշտ չէ, որ գրավում են բարբառագետների ուշադրությունը: Ընդ որում՝ առավելաբար անդրադառնում ենք բարբառային բաղադրյալ կառույցներին³:

¹ Տե՛ս, օրինակ, **Հանեյան Ա.**, Տիգրանակերտի բարբառը, Եր., 1978:

² Տե՛ս, օրինակ, **Աղայան Է.**, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 251-259: **Բաղդասարյան-Թափալցյան Ս.**, Մշո բարբառը, Եր., 1958, էջ 179-188: **Մուրադյան Հ.**, Կարճևանի բարբառը, Եր., 1960, էջ 173-187: **Ասատրյան Մ.**, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 143-153: **Մուրադյան Մ.**, Շատախի բարբառը, Եր., 1962, էջ 67-84: **Կոստանդյան Դ.**, Երզնկայի բարբառը, Եր., 1979, էջ 49-58:

³ Փոխառյալ բառերն ու դրանցով կազմված բաղադրությունները չենք դիտարկում:

Բարբառային բառապաշարը բարբառագետները դիտարկել են նախ և առաջ իբրև հին ու հնագույն բառերի, բառաձևերի շտեմարան: Տարբեր մենագրություններում անդրադարձներ են կատարվել բառային հնաբանություններին, իսկ առավել հանգամանորեն դրանք դիտարկվել են Գ. Ջահուկյանի կողմից¹: Բարբառներում հինհայերենյան կամ ավելի վաղ շրջանը ներկայացնող իրողություններ հաճախ դրսևորվում են նաև բաղադրություններում: Այսպես, Մեղրու բարբառն ունի **կըխցահամ** (կաթնահամ) բառը, որի առաջին բաղադրիչը նույնանում է Ագուլիսի բարբառում պահպանված **կախց** ձևին: Իսկ վերջինս իր հերթին առաջացած է համարվում հնիւ. *g²alakt>g²alt>*կաղթ ձևից՝ *թ>g* անցումով²: **Գդալ** բառի նախնական **տարգալ** ձևի զարգացումներն են ներկայացնում բարբառներում հանդիպող *տըկալդէլ* Դրս. (**տըկալ**-ով՝ գդալով արագ ուտել), *թըքալնոց* Գմրք. (գդալնոց), *դիզլէման* Մղր. (գդալի աման) ձևերը: Բնիկ հայերեն **դեղը** (դեղին) արմատով են կազմված Մշո բարբառի **դ՛էխք՛էլ** (շորի դեղնելը կեղտից), Խոյի բարբառի **տըխպէլ** (խոնավությունից փչանալ, բորբոսնել) և Բայազետի բարբառի **տըխպէլ** (գույնը գցել) բառերը: Գրաբարում առանձին անգործածական բնիկ **օթ** (վերարկու, զգեստ,

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 277-330:

² Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 480-481: Այս բառարանից ենք քաղել հայերեն արմատների վերաբերյալ տեղեկությունները, իսկ բարբառային բառերի օրինակները բերում ենք համապատասխան մենագրական աշխատություններից, բարբառային բառարաններից:

կրկնոց) արմատով են բաղադրված Մեղրու բարբառի **ըմրոնօթան** (ամռան շոր), **ըշընքօթան** (աշնան շոր), **ձըմրոնօթան** (ձմեռվա հագուստ) բառերը: *Ճանապարհ* իմաստն ունեցող **աղագ** բառով է բաղադրված **կըսըհըխկէ** Մղր. (ճանապարհի կեսին) բառը: *Օր* բառի հինհայերենյան թեքված *աւուր* ձևով են բաղադրված **հեղնավուր** Կրն. (վերջին օրվա), **ավուրչէք** Դրս. (օրավարձ), **ավուրական շոր** Սվրհ. (ամենօրյա շոր) բառերը: Գրաբարյան *կորնչել* բայի պատճառականի *կորոյս* հիմքն է հանդիպում *կըխտակուրուս* Բ. (կեղտը քողարկող գույն) բառում:

Բարբառներում երբեմն ինքնուրույն գործածություն ունեն արդի գրական լեզվում չպահպանված գրաբարյան բառեր, նաև՝ գրաբարում չհանդիպող պարզ ձևեր: Այսպես, Սասունի բարբառն ունի **ադոք** (լեփ-լեցուն՝ հասկը) բառը, որ նույնանում է գրաբարյան *ատոք* (լիքը, լավ հասած՝ ցորեն) ձևին: Հինհայերենյան *անագան* (ուշ մնացած, տարածամ) բառը Բայազետի բարբառում ունի **հանքան**, Սասունի բարբառում՝ **անգան** (ուշ) ձևերը: *Տորմ* (խումբ) բառը գրաբարում գործածվել է միայն նավերի համար, իսկ սրա մյուս ձևն է *տարմ*, որ նշանակում է *թռչունների խումբ*: Մեղրու բարբառում առկա է *թռչունների խումբ* նշանակությամբ *տորմ* բառը: Ալավկերտի խոսվածքն ունի **գ'իզ** բառ (զգվածք, զգելու գործողությունը), սրան համապատասխանում է գրաբարում առանձին անգործածական *զիզ* արմատը, որ դրսևորվում է **զզել** (պատառոտել, ծվատել, մարմինը

պատառ-պատառ անել), **բրդգգեալ** (գգգգված հագուստներով), **անգիգ** (չհոշոտված) բառերում: Վերջին (անգիգ) ձևը արձանագրվել է նաև Սասունի բարբառում՝ *չգգված* (բուրդ, բամբակ) իմաստով: Հինհայերենյան *առաքել* բայի պարզ **աքել** (ուղարկել) ձևը, որ գրաբարում չի հանդիպել, պահպանվել է Ջեյթունի բարբառում: Այդպես նաև *զգենուլ* բայի արմատական ձևն են ներկայացնում **կենալ** Ղզ.Ղրբ. (հագնել), **գեստ** Բ.Խլ. (զգեստ), **կեցվասկ** Գրս. (հագուստ, հագնելու ձևը) բառերը:

Առանձին խումբ են կազմում գրաբարյան նախդիրներ պարունակող բարբառային կազմությունները: Այսպես, Ղաբաբաղի բարբառն ունի **առիս**, **առիտ**, **առին** (մոտս, մոտդ, մոտը) ձևեր, որոնցից առաջինը ներկայացնում է գրաբարյան *առ իս* կազմությունը, իսկ մյուսները կազմվել են դրա համաբանությամբ¹: Նախդրավոր կազմություններ են նաև հետևյալները՝ **առորմի** Սսն. (մյուս գերանների համար հենարան ծառայող գերան՝ պատի վրա), **հառիկող կընալ** Շտխ. (լեռան վրա լայնությամբ գնալ), **յելլվեր** Խոյ. (զառիվեր), **գ'ըլխըվեր** Բ. (զառիվայր), **գիրավ ածել** Ղրբ. (վրայով փռել, տարածել), **գատանալ** Խոյ. (հեռանալ), **գատ** Բ. (հեռու, մեկուսի՝ >զհատ), **ղիբար տալ** Մրդ., **ղիբուր տալ** Ջղ., **տիւրիւր տալ** Ղրբ. (շարժել, երերցնել. *ընդ* նախդրով) և այլն:

Կան դեպքեր, երբ բարբառներում, ի տարբերություն արդի գրական լեզվի, բառերը պահպանել են իրենց գրաբարյան

¹ Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 247:

իմաստները: Այսպես, *թուղթ* բառի գրաբարյան *գրություն*, *նամակ* իմաստը առկա է *պըրըվաթօխտ* Գրս. (բարևաթուղթ՝ նամակ), *ընըսկաթօխտ* Մղր. (գրավոր բանադրանք) բառերում: *Ուրիշ* բառի գրաբարյան *ջոկ*, *բաժանված* իմաստը առկա է Տիգրանակերտի բարբառի *ուրըշիլ* (բաժանել, անջատել) բառում, *իշխել* գրաբարյան ձևի *համարձակվել* իմաստն է ներկայացնում Վանի և Բայազետի բարբառներում առկա *իշխընալ* բայը: Հին հայերենում *արքանեակ* բառն ուներ *ծառա*, *սպասավոր*, *օգնական*, *հետևորդ* իմաստները. Վանի բարբառի *արքնիկ* համապատասխան ձևն ունի *օգնական* իմաստը: *Ակումբ* բառի գրաբարյան *սեղան*, *բազմական*, *հանդիսականների խումբ կամ բազմություն* իմաստներին Նոր Նախիջևանի և Պոլսի բարբառներում առնչվում է *ակում օր* կապակցության *եկեղեցական մեծ տոնի հանդիսավոր օր* իմաստը: *Չեղ* բառի նախնական *խոտ* իմաստի հետ է կապվում Մշո և Սասունի բարբառների *դեղ* բառի *դաշտային խոտեղեն բույս* (որ պանրի մեջ են դնում՝ անուշ բուրմունք տալու համար) իմաստը: Գրաբարյան *կրծել* (ատամներով պոկել, կծել, կորզել) բայի *կուրծ* արմատը առկա է *կաշառակուրծ*, *կաշառակրծություն* բաղադրություններում: Հնարավոր է համարվել, որ *կուրծ* արմատը նշանակել է նաև *կաշառք*¹. այդ են հավաստում նաև Երզնկայի բարբառի *կըրծօն* և Դերսիմի բարբառի *գըրծօն* ձևերը, որոնք ունեն *կաշառք* իմաստը:

¹ Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 666:

Բազմազան են բարբառների բառակազմական յուրահատկությունները, որոնք դրսևորվում են նաև բաղադրիչների հոմանիշային, շարադասական տարբերություններով, ածանցման զանազանություններով և այլն: Լեզվում առկա որևէ բաղադրության բարբառային համապատասխանությունը կարող է իր կազմում ունենալ հոմանիշ կազմիչներ: Օրինակ՝ *փայտփորիկ* բառի համեմատությամբ նման պատկեր են ներկայացնում բարբառային մի շարք ձևեր՝ **ծրործակի** Մղր., **ծրորկուրկուտ** Գրս., **ծրորկուտկուտ** Շմշ., **ձառձէձուգ** Դրս., **ձառձագիչ** Մլթ.: Այլ դեպքերում կառույցները տարբերվում են միայն մեկ բաղադրիչով: Նման բաղադրություններից են՝ **ճրբաքկըպօց** Ար. – **ճրբաքերօց** Բրդր. – **ճրբաքվառօց** Կրն., **լալակըթնել** Ար. – **լացակումել** Ղրբ. – **լացակնել** Շլ., **շատախօս** Բ. – **շաղզըրուց** Երզ., **սուրխօսան** Բ. – **սուղզըրուց** Երզ., **ջրանցք** – **ջիրեծակ** Մղր., **պնդերես** – **ծիքերես** Երզ., **շնչակտուր** – **հանքակըտուր** Ար. – **հանգակուտոր** Շտխ. – **խանքակըտուր** Բ., **յեզան լիզու** Բ. – **դավոր լեզու** Սսն., **ջրվեժ** – **ճրրթափ** Շտխ., **տըղամառթ** Բ. – **արիմարթ** Դրս., **տաքություն** Բ. – **գըրագութին** Տիգր., **մըտածել** – **մըղարել** Մլթ., **աչքախուփ** Ախց. – **աչքաճըպել** Ղրբ. – **աչքթարթոց** Խլ. – **աչքխփոց**, **աչքկպոց** Վ. (ակնթարթ) և այլն: Հոմանիշ ձևեր են առաջանում բաղադրության բաղադրիչների շարադասական տարբերություններով, ինչպես՝ **ճըփածեղ** Բ. – **ըղըձու** Մղր., **յըղըձու** Գրս.Շմշ., **յեղըձու** Բրդր., **կամուկաց** Բ. – **կացըկամ** Խոյ., **քարաղ** – **աղքար** Սսն., **ակնաղբյուր** – **ախպըրագ** Դրս., **մութնուլուս** Երզ. – **լուսումնութ**

Բ., **դեմլուսուն** Խրբ. – **դիմալույս** Ախց. – **լուսուդեմ** Բ. (լուսանալուց քիչ առաջ) և այլն:

Բարբառային լեզվում մեծ տարածում ունեն տարբեր խոսքի մասերից ձևավորված բայերը: Հատկապես շատ են գոյականներից ու ածականներից կազմվածները, ինչպես՝ **ականջել** Խրբ. (ուրիշի խոսակցությունը գաղտնի լսել), **ծեռքել** Խոյ. (ձեռքով մի բան շոշափել), **լուսել** Երգ. (լուսանալ), **շըրթիլ** Տիգր. (խոսքերով առատախոս պատասխան տալ, վրա տալ), **կոմել** Շտխ. (ոչխարը գոմում տեղավորել), **խելքել** Դրս. (խրատել), **փաղել** Երգ. (փայտով ձեծել), **գ՛ըղլել** Կրն. (գդալով ուտել), **կոշտել** Ար. (վիրավորել), **ծըռել** Բ. (թեքել), **անուշել** Պլ. (քաղցր խոսքերով համոզել): Նման բայեր կարող են ձևավորվել բաղադրյալ կազմություններով, ինչպես՝ **ծրպնդիլ** Սսն. (ամբանալ, ժիրուպինդ լինել), **անուշպերնել** Դրս. (բերանը անուշացնել, կաշառել), **աշկը լուսել** Երգ. (մեկին շնորհավորել), **տընդեղիլ** Երգ. (ընտանիք կազմել) և այլն: Ուշադրություն են գրավում ածանցական յուրահատուկ ձևեր, որոնցից են՝ **չըկէր** Կրն.Գրս. – **տըկեր** Սվրհ. (քչակեր), **փողան** Շտխ.Ալշ.Վ. (փողոց), **խըման** Դրս. (արբեցող), **ծընան** Կրն. (ամեն տարի ծնող անասուն), **գըթվան** Սսն. (հեշտ կթվող), **կըռվան** Կրն. (կըռվող), **ուզան** Սսն. (մուրացիկ), **ուտան** Սսն. (ուտող), **ժեխթափիկ** Բ. (աղբ թափելու գործիք), **ամանըլվիկ** Բ. (աման լվալու լաթ), **ճանջխատըցըրիկ** Բ. (ճանճասպան), **մըխքաշիկ** Բ. (մեխ քաշելու սարք), **ծըմարան** Մղր. (ծամարան՝

ծամելիք, ծնոտ), **կամօրթ** Կրն. (կամեցող՝ կամորդ), **ածա-կան** Բրդր. (ածան հավ), **ամառնություն** Ար.Ղրբ. (ամառը, ամառ ժամանակ), **բարփոխություն** Ախց. (հղի կանանց խանգարված ախորժակը), **գալտարություն** Թբ. (հաջորդ տարի), **գարունքություն** Ար.Թբ. (գարնանը) և այլն:

Պետք է նկատել, որ բարբառներում նոր բառեր կարող են ի հայտ գալ ոչ միայն բառակազմական եղանակներով: Բարբառախոս միջավայրում նոր բառի արժեք կարող են ձեռք բերել կրճատված ձևեր, քերականական իրողություններ, հատուկ անուններ, ազգերի ու ցեղերի անուններ և այլն: Օրինակ՝ բարբառային լեզվում լայն տարածում ունեցող **յեսիմ** բառը, ինչպես հայտնի է, առաջացել է *ես ինչ իմանամ* արտահայտության կրճատումով, **առեք** ՆՆխ. (փերեզակ) բառը առաջացել է բայի հրամայականի ձևից, որը գործածում է մանրավաճառը փողոցում առևտուր անելիս: Հատուկ անուններից են առաջացել **աղասի** Շլ. (կեղծավոր), **աղջիկ-Կարապետ** Պլ. (կանացի, թուլամորթ մարդ), **աղքատ-Ղազարոս** ՆՆխ.Պլ. (աղքատ), **ամբակում** Պլ. (տխմար, բթամիտ), **գասպարպուկ անել** Ղրբ. (շուտ փախչել) բառերը: **Արաքացի** Բ. (վայրենի, վնասատու) բառը արաբական արշավանքների հիշողությունն է, **թաթ** Բ. (անհասկացող, բթամիտ) բառը թերևս արդյունք է օտար ցեղի հետ ունեցած անհասկացողության կամ տարաձայնությունների և այլն:

Բարբառային բառապաշարը մեծ հետաքրքրություն է ներկայացնում իմաստաբանական առումով: Նախ և առաջ նկատելի է իրողությունների նկարագրական բնութագիր

ներկայացնող բաղադրությունների առատությունը: Նման ձևերից են, օրինակ, **կըմըցաբէն** Մղր. (դանդաղ աշխատող), **կըռընգաշար** Ար. (կռունկների երամ), **կըճան խոտ** Գմրք. (եղինջ), **բառգէղէղ** Դրս. (անկողին), **բառգէժամ** Դրս. (պառկելու, քնելու պահ, ժամանակ), **փէրնի առիք** Մլթ. (քիմք), **քիշէրածէտ** Գրս. (գիշերածիտ՝ չղջիկ), **սկռախիլ** Խրք. (ատամը քաշել հանելու գործիք, աքցան), **թելքաշ** Վ. (աքցան), **հօրքուրար** Երգ. (հորաքրոջ ամուսին՝ հոր-քույր-այր) և այլն: Հաճախ բարբառային կազմությունները ներկայացնում են խոսողների կողմից իրողության ընկալման հասկացական առանձնահատկությունները: Նման բաղադրություններից են՝ **փաղ պըռնօղ** Դրս. (ոստիկան), **դիբիլիզը** Գրս. (կեսից ավելի լցված՝ դեպի լիքը), **դուբուրուզուն** Գրս. (երեկոյան կողմը, իրիկնադեմին), **ընըրհարսը** Մղր. (աներոջ հարս, աներձագի կին), **ընըրտըղա** Մղր. (աներձագ), **բոնավոր** Բլ.Բ. Մկ.Վ. (բանտարկյալ), **դաժան-տաճիկ** Պլ. (դաժան, դաժանաբարո), **երկըցնակ** Լհ. (հայերեն), **զատտուն** Սեբ. (գերդաստանից բաժանված և առանձին ընտանիք կազմած ազգականների տուն) և այլն:

Բարբառակիր հանրության պատկերավոր մտածողությունն ու կենսափորձն են ներկայացնում փոխաբերական իմաստ ունեցող մեծաթիվ բաղադրություններ, որոնցից են՝ **ծըտակնը** Մղր. (գինու շատ փոքր բաժակ. ծիտ – ակն), **կախէրէս** Երգ. (խոժոռադեմ մարդ), **պաղաձ աբուր** Երգ. (անժպիտ մարդ), **պօշվօր** Կրն. (կեղծավոր), **բօջին գօխիլ** Տիգր.

(քննադատել), **փորխաբ** Սսն. (փորին խաբել, կուշտ չուտելը), **շաբգրհան** Դրս. (ճարպիկ, խաբեբա, շապիկ հանող), **փըշըհարել** Գրս. (փշահարել՝ մեկի հետ վատ վարվել), **փօրէհան** Դրս. (ինքնահնար), **արիվ ուտիլ** Սսն. (ապրել, արևը վայելել), **ճերմագերէս** Երգ. (պարզերես), **սկանջթթի** Դրբ. (շուտ լսող, պատվերը շուտ կատարող), **ամրափորի** Թբ. (խնայող, քիչ ծախսող), **գետնի կոճակ** Թբ. (կարճահասակ) և այլն:

Բարբառային բառապաշարի յուրահատկություններից է այս կամ այն տարածքում բառերի գործածությունը այլ, ոչ հայտնի իմաստներով¹: Այսպես, *ամս* բառը Խարբերդի բարբառում ունի *անձրև* իմաստը, *անասուն* բառը Ախալցխայում ունի *դեռ չխոսող մանուկ* իմաստը, *անհարկի* բառը Նոր Նախիջևանի և Պոլսի բարբառներում *անպարկեշտ, լիբբնշանակությունն* ունի, *առասպել* բառը Թբիլիսիի բարբառում նշանակում է *կամակոր*, Նոր Նախիջևանի և Վանի բարբառներում *ասմունք* բառն ունի *խոսք, մեկի ասածը* իմաստը, *գալիք* բառը Բայազետի, Պոլսի և Սվեդիայի բարբառներում ունի *ապագա պատահար, որ մեկի հետ պիտի կատարվի* իմաստը, *աղքատ* բառը Համշենի բարբառում ունի *հիվանդոտ, նիհար* իմաստը, *ամբարտավան* բառը Թավրիզում ունի *շատ մեծ, վիթխարի* իմաստը, *թուղթ* բառը Զեյթունի և Համշենի բարբառներում ունի *գիրք* իմաստը և այլն: Նկատենք, որ հաճախ բառային նույն միավորը

¹ Առանձին դեպքերում նման գործածությունները կարող են համանունության դրսևորում լինել:

բարբառներում ունենում է տարբեր իմաստներ: Այսպես, *բանուկ* բառը ունի *աշխատասեր, գործունյա* Կս., *ճարտար, ճարպիկ* ՆՆխ., *հաջողակ* Պլ. իմաստները, *բարկնալ* բառն ունի *կրակը բորբոքել* Արբ., *հպարտանալ, մեծամտանալ* Սվ. իմաստները, *բոլորել* բառն ունի *շուրջանակի շարվել՝ շրջան կազմելով* Պլ.Բ., *լավ գիրանալ* Ղրբ. իմաստները, *բոի* բառն ունի *դժվար, դժվարագնաց* Հմշ., *դժվարահաճ* ՆՆխ. իմաստները, *գլխել* բառն ունի *գերազանցել* Ար., *վերջացնել* Վ., *գնդակին գլխով հարվածել* Բ. իմաստները, *թաղթանալ* բառն ունի *գուրգուրալով պահել* Վ., *գոռոզանալ* Բ. իմաստները և այլն:

Բարբառային բառապաշարի կարևորագույն ու հետաքրքրական մասեր են իմաստային խմբերը, որոնք բառային միջոցներով ներկայացնում են կյանքի ամենատարբեր ու լորտներ, տարբեր առումներով բնութագրում իրողություններ: Օրինակ՝ ընտանեկան կյանքին ու հարաբերություններին առնչվող բառերից են՝ **առնանք** Դրս. (փեսայի ընտանիքը հարսի համար), **պարցընգեր** Դրս. (կողակից, ամուսին), **դիծաբերք** Մղր. (դժվար ազատվող՝ կին), **յերգընվըզիզ** Կրն. (երկայնվզիկ), **մօրքուրար** Երգ. (մորաքրոջ ամուսինը), **մեկդեխիլ** Սսն. (հարսին ու փեսային առազատ տանել, միատեղել) և այլն: Սննդամթերքին առնչվող բարբառային բառերից են՝ **դաբագ** Սսն. (ձվածեղ), **ադունդախդեղուն** Տիգր. (ձվածեղ՝ աղված-աղպեղված), **թըլխօր** Երգ. (թույլ խորոված), **էփճուր** Երգ. (եռացող ջուր), **երեսուր** Սվրհ. (կերակրի երեսի մասը, որ թաղանթի է նմանվում),

պահունի Ար. (ձմռան համար պահվող դիմացկուն մրգեր),
վեռչինք Ար. (թոնրում թխվող վերջին հացերը), **ըռչաթօխ**
Գրս. (առաջաթուխ՝ առաջինը թխված (հացի մասին)),
պաղաբուր Երգ. (պաղապուր), **տըտըմջօր** Դրս. (չորացրած
դդում) և այլն: Անասնապահության ոլորտն են ներկայաց-
նում հետևյալ բառերը՝ **էզընկալ** Սսն. (բեղմնավորման
համար հասունացած երինջ), **նախրաթօղ** Ար. (ուշ աշնանը
նախիրը ցրելու, այլևս արոտ չտանելու ժամանակը), **գիռ-
նաբուրդ** Մղր. (գառան բուրդ), **կօղըշտէլ** Կրն. (պոզահա-
րել), **ցօնցել** Բ. (կապված անասունի՝ մարդուն հարվածելու
շարժում գլխով), **հազրըթուղ** Սսն. (հազար ոչխար ունեցո-
ղի՝ սարերում թողած ոչխար կամ այծ, որի մեկ տարի հետո
վերադառնալը բախտավորության նշան է համարվում),
հայազեն Սսն. (հայի ձեռքով մորթված՝ ոչխար), **ըշունքա-
ճօտ** Գրս. (աշնանը ելած ճուտ), **դիծրածըէն** Մղր. (դժվար
ծնող՝ անասուն), հողագործությանն ու այգեգործությանն
են վերաբերում հետևյալ բառերը՝ **արդախլիս** Կրն. (հնձի
ավարտից հետո նվեր ստանալու ակնկալիքով՝ տանտիկ-
նոջը մատուցվող ցորենի փունջ), **առվըծէր** Շտխ. (առվի
վերջավորությունը), **կընդըկաթուկ** Գրս. (կենտակաթուկ՝
ծառից հատ-հատ ընկած պտուղները), **պախըկօթ** Խոյ. (բա-
հի կոթ) և այլն:

Բարբառային բառապաշարը որոշակի տարբերակվածու-
թյուն է հանդես բերում ըստ տարածական ընդգրկումների,
մասնավորապես՝ նկատելի են արևմտյան և արևելյան

բարբառախմբերի բառային տարբերությունները: Բնականաբար, բառապաշարային յուրահատկություններով կարող են առանձնանալ նաև ավելի փոքր տարածքներ, որոնք կներառեն բարբառների խմբեր, հարևան բարբառային միավորներ և այլն: Ի վերջո, յուրաքանչյուր բարբառային միավոր բնութագրվում է նաև միջավայրով պայմանավորված բառամթերքով, միայն իրեն հատուկ որոշակի քանակության բառային միավորներով, որոնց դիտարկումը նույնպես էական նշանակություն ունի հայերենի բառապաշարի քննության առումով: Ինչպես առանձին բարբառային միավորի, այնպես էլ ընդհանրապես բարբառային լեզվի բառապաշարի համար բնութագրական են և հայոց լեզվի բառագանձն են կազմում դարձվածային միավորները, ձևախմաստային խմբերը, որոնք նույնպես դեռևս հիմնավոր քննության չեն ենթարկվել:

Դիտարկված իրողությունները, ինչ խոսք, գրական հայերենի բառապաշարի հարստացման աղբյուր են, բայց կարծում ենք՝ բարբառների բառագանձը միայն այդ առումով չէ, որ հետաքրքրական է: Բարբառային բառապաշարը (և ընդհանրապես՝ բարբառային լեզուն) նախ և առաջ հայոց լեզվի անքակտելի հարստությունն է, որի արժևորումն ու հիմնավոր հետազոտությունը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն լեզվաբանության, այլ նաև ազգագրության, հայ ժողովրդի պատմության, մշակութաբանության և այլ գիտակարգերի համար:

Բանալի բառեր – բարբառ, բարբառային բառապաշար, բաղադրություն, բառաձև, հնաբանություն, գրաբար, գրական լեզու, փոխաբերական իմաստ, իմաստային խումբ, բառարան:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալշ. - Ալաշկերտ

Ախց. - Ախալցխա

Ար. - Արարատյան

Արբ. - Արաբկիր

Բ. - Բայազետ

Բլ. - Բուլանքի

Բրդր. - Բուրդուր

Գմրք. - Գամիրք

Գրս. - Գորիս

Դրս. - Դերսիմ

Երզ. - Երզնկա

Թբ. - Թբիլիսի

Լհ. - Լեհահայք

Խլ. - Խլաթ

Խոյ. - Խոյ-Մարաղա

Խրբ. - Խարբերդ

Կս. - Կեսարիա

Կրն. - Կարին

Հնխ. - հնդեվրոպական
նախալեզու

Ղզ. - Ղազախ

Ղրբ. - Ղարաբաղ

Սլթ. - Սալաթիա

Մկ. - Մոկք

Մղր. - Մեղրի

ՆՆխ. - Նոր Նախիջևան

Շլ. - Շուկավեր

Շմշ. - Շամշադին

Շտխ. - Շատախ

Պլ. - Պոլիս

Ջդ. - Ջուղա

Սեբ. - Սեբաստիա

Սսն. - Սասուն

Սվ. - Սվեդիա

Սվրհ. - Սիվրիհիսար

Վ. - Վան

Տիգր. - Տիգրանակերտ

Victor Katvalian – Some remarks on the vocabulary of the dialect Armenian language. - Dialect vocabulary is of great interest to the historical layers, word-formation and semantic features. Dialects are a source of enrichment of the vocabulary of the literary Armenian language, but the dialectic language is primarily an integral part and wealth of the Armenian language, and its comprehensive study is important not only for linguistics, but also for ethnography, the history of the Armenian people, cultural studies and other disciplines.

Key words - dialect, dialect vocabulary, compound word, word form, archaism, grabar, literary language, figurative meaning, semantic group, dictionary.

Виктор Катвалян – Некоторые замечания о лексике диалектного армянского языка.- Диалектная лексика представляет большой интерес историческими слоями, словообразовательными и семантическими особенностями. Диалекты являются источником обогащения лексики литературного армянского языка, но диалектический язык в первую очередь является неотъемлемой частью и богатством армянского языка, и его комплексное исследование имеет важное значение не только для лингвистики, но и для этнографии, истории армянского народа, культурологии и других дисциплин.

Ключевые слова - диалект, диалектная лексика, составное слово, словоформа, архаизм, грабар, литературный язык, переносное значение, семантическая группа, словарь.

ԲԱՌԱՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Լեոնիդ Թեյլան (ԵՊՀ)

Բառապաշարը, ինչպես հայտնի է, լեզվի կառուցվածքի ամենից հարափոփոխ բաղադրատարրն է. այն անմիջաբար արձագանքում է արտալեզվական աշխարհի, մասնավորապես հասարակական կյանքի տարաբնույթ գործընթացներին: «Բառապաշարի զարգացումը ամբողջությունն է լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կողմից հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին»¹, - գրել է Է. Աղայանը: Նա նշել է նաև, որ զարգացման այս ընդհանուր գործընթացը իրացվում է բառապաշարի հարստացման, բառապաշարի իմաստաբանական զարգացման և բառապաշարի կատարելագործման ուղիներով:

Բառապաշարի զարգացումը հանգում է դրա համալրմանը նոր բառերով, ինչը, բնականաբար, նոր հասկացություններ նշանակելու անհրաժեշտությամբ է թելադրված: Եվ

¹ Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 167:

քանի որ «հայերենի բառաշինական արվեստը շատ կողմերով թարգմանական արվեստ է»¹, ուստի նոր հասկացություններ նշանակող բառերի կերտումն ըստ էության որևէ հասկացություն արտահայտող օտար բառի առավել համարժեք (հաջողված) հայերեն թարգմանությունն է, իսկ հաջողվածության չափանիշն էլ տվյալ փուլում լեզվի կանոնին ու կիրարկմանը ներդաշնակելն է ու դրանում ամրանալու հեռանկարը: Հարկ ենք համարում նշել, որ ինչպես իր զարգացման ողջ ընթացքում, արդի շրջանում նույնպես հայոց լեզուն արժանավորապես կատարում է համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացին համարժեք արձագանքելու իր առաքելությունը՝ ամենից առաջ իր բառաստեղծական բացառիկ ներուժի, ապա և լեզվաշինության ու լեզվաքաղաքականության հարցերով զբաղվող հաստատությունների ու անձանց նպատակադիր ջանքերի շնորհիվ: Օտարալեզու տերմինների ու բառերի հայերեն համարժեքներն ստեղծելու գործընթացում հայոց լեզուն միշտ էլ օգտագործել է իր հարուստ զինանոցի բոլոր գործիքները՝ բառաբարդում, ածանցում, վերաիմաստավորում և այլն, հաճախ դիմել է բարբառների, գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի օգնությանը, ի վերջո, հայերենը երբեք չի խուսափել նաև փոխառություններ գործա-

¹ **Իշխանյան Ռ.**, Ակնարկ հայերենի տերմինաշինության, Եր., 1981, էջ 111:

ծելուց, թեև մասնագետները շարունակել են դրանք ևս հա-
ջողված (լեզվական կանոնի համար ընդունելի) հայերեն
տարբերակներով փոխարինելուն միտված ջանքերը:

Մասնավորելով մեր խոսքն արդի շրջանի բառաստեղծման
միտումների վրա՝ ուզում ենք հատուկ անդրադառնալ փո-
խառություններին սերտորեն առնչվող բառակազմության
մի տեսակին՝ բառապատճենմանը: «Եթե փոխառություն-
ների դեպքում ուղղակիորեն վերցվում է տվյալ լեզվի (փո-
խատու լեզվի) պատրաստի բառը, ապա պատճենումների
ժամանակ վերցվում են բառի արտահայտած հասկացու-
թյունն ու ներքին ձևը, այլ կերպ ասած՝ պատճենման դեպ-
քում օտար բառը պարզապես թարգմանվում է փոխառու
լեզվի բառերով կամ բաղադրությունների բաղադրիչնե-
րով...: Պատճենումները, առանձնապես բառերի պատճե-
նումները (բառապատճենումները) մեծ դեր են խաղում լեզ-
վի բառապաշարի, մանավանդ գիտության ու տեխնիկայի
տարբեր բնագավառների տերմինահամակարգերի համա-
լրման գործում»¹: Արդի շրջանի նորակազմությունների ո-
լորտում ևս խիստ արտադրողական այս միջոցը՝ բառա-
պատճենումը, սակայն, նոր իրողություն չէ. այն ուղեկցել է
հայոց գրավոր լեզվին իր սկզբնավորման շրջանից: Պատ-
ճենման միջոցով էր, որ հունաբան դպրոցի երախտավոր-
ներն ստեղծեցին հայերեն նախածանցների մի ողջ համա-
կարգ՝ դյուրացնելու համար հունարեն բառերի համարժեք
հայերեն թարգմանությունները (**ենթ-**, **փոխ-**, **ստոր-**, **ընդ-**,

¹ Աղայան Է., նշվ. աշխ., էջ 176-177:

ներ- և այլն): Արհեստական այդ միավորները՝ կերտված հայերենի համապատասխան արմատներից, հետագայում սերտաճեցին մեր լեզվի համակարգին և անփոխարինելի միջոցներ են հատկապես օտար նախածանցավոր կազմությունները հայերեն թարգմանելիս (օր.՝ **ենթատեսակ, գերհզոր, ներդնել, արտահանել, փոխնախագահ** և այլն)¹: Խորհրդային շրջանում ռուսերենից պատճենված շատ ու շատ բառեր այսօրվա մեր բառապաշարի կողմից յուրացված սովորական կազմություններ են՝ **ինքնաթափ, ինքնաթիռ, օդանավ, շոգեքարշ, կիսահաղորդիչ, հակազգ, պահեստամաս, ընդհատակ, տուն-թանգարան, ցուցահանդես-վաճառք** և այլն: Մեր օրերում ստեղծվող նորաբանությունների բառարաններում արձանագրված նորակազմ տերմինների ու բառերի զգալի մասը նույնպես պատճենման արդյունք է, ինչպես՝ **գերաստղ, գերարժեզրկում, հեռուստախանութ, համացանց, տեսահարցազրույց, տեսահոլովակ, ինքնիրացում, դիմագիր** (facebook) և այլն: Պատճենման մի տեսակն էլ կիսապատճենումն է կամ, այսպես կոչված, մասնակի փոխառությունը. այս դեպքում հայերեն թարգմանվում է փոխառյալ բառի բաղադրիչներից մեկը: Ընդհանրապես պատճենումն ու կիսապատճենումը կարող են նաև ժամանակի ընթացքում փոփոխություն կրել կամ էլ միջակա օղակ լինել սեփական բաղադրիչներով նոր բառ ստեղծելու ճանապարհին (**фигурное катание** – *ձևավոր*

¹ Այս մասին տե՛ս նաև **Ն. Պառնասյան**, Պատճենումը և նրա դերը հայոց լեզվի զարգացման գործընթացում, «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր», N 3, Եր., 1988, էջ 20-25:

չմշկասահք – գեղասահք, военный контингент – ռազմական կոնտինգենտ – ռազմակազմ, автореферат – ինքնառեֆերատ – սեղմագիր և այլն):

Օտար տերմինային տարրերի հայերենացման պատմական ընթացքի դիտարկումը կարող է հետաքրքիր օրինաչափություններ ի հայտ բերել և թարգմանական որոշ ընդհանուր միտումներ արձանագրել:

Ա. Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մինչև նույն օտար բաղադրիչը տարբեր բաղադրությունների կազմում կարող է հայերեն տարբեր համարժեքներով թարգմանվել, ինչը հայերենի բառակազմական ճկունության մի լրացուցիչ վկայություն է: Բերենք մի քանի օրինակներ: Հունարեն **դիս-** բաղադրիչը հայերեն թարգմանվում է 1. **ան-** նախածանցով (**дисгармония** - աններդաշնակություն), 2. **-զուրկ-** արմատով (**дисбулия** - կամազրկություն), 3. **դժ-** նախածանցով (**дисгриппия** - դժքնություն), լատիներենից փոխառյալ նույնանուն **դիս-** ածանցը՝ 1. **ապ(ա)-** նախածանցով (**дисквалификация** - ապառաակում), 2. **-բեկ-** արմատով (**дискредитация** - վարկաբեկում), 3. **տար-** նախածանցով (**дисперсия** - տարաբաժանում), կամ լատիներեն **ուն(ի)-** բաղադրիչը՝ հայերեն **մի-** (**унифлярный** – միալար (տեխն.)), **միաս(ի)ն-** (**унификация** – միասնականացում), **համ(ա)-** (**униформа** - համազգեստ) և այլն¹: Այս

¹ Տե՛ս **Հացագործյան Ջ., Ասլանյան Ս.**, Միջազգային տերմինային տարրերի ռուս – հայերեն բառարան, Եր., 1989:

կարգի օտար տերմինատարրերի մի մասը, որ արդյունավետ ու կենսունակ է նաև արդի շրջանում, նույնպես հայերեն տարբեր համարժեքներով է արտահայտվում՝ բաղադրության ներքին ձևով պայմանավորված: Այսպես, **ավտո** (հուն.) բաղադրիչը հայերեն ավանդված է կա՛մ լրիվ պատճենմամբ՝ **ինքն(ա)-** բաղադրիչով (ինքնաձիգ, ինքնագիր, ինքնանկար, ինքնակենսագրություն, սակավադեպ՝ ինքնուրույն կազմությամբ՝ **автоподкрепат** – սեղմագիր), կա՛մ կիսապատճենումով: Այս երկրորդ դեպքում հունարեն բաղադրիչը հայերեն **ինքնաշարժ** (ավտոմոբիլ) նշանակությամբ է մտնում բազմաթիվ բաղադրությունների մեջ, և քանի որ այն արդեն իսկ բաղադրյալ է, նոր բաղադրությունների մեջ նախապատվությունը տրվում է օտար արմատին՝ **ավտոմեքենա, ավտովարորդ, ավտոդող, ավտոկայան, ավտոպահեստամաս** և այլն: Նորաբանությունների մերօրյա բառարաններում արձանագրված (նախկին բառարաններում բացակայող) **ավտո** բաղադրիչով բառերի մեծ քանակը վկայում է, որ կիսապատճենման այս կաղապարը այսօր էլ գործուն է. Ս. Էլոյանի նորաբանությունների բառարանում և ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառերի» չորս պրակներում այդ բառերի քանակն անցնում է յոթ տասնյակից՝ **ավտոաշխարհ, ավտոհեն, ավտոգոգություն, ավտոհյուրատուն, ավտոցուցահանդես, ավտոերթ, ավտոարշավարան, ավտոապահովագրող, ավտոլրտես, ավտոներկրող, ավտոխցանում, ավտոփորձագետ, ավտոսանդուղք, ավտոներկ, ավտովարկ** և այլն: Նույն ձևով **ագրո**

(հուն.) - բաղադրիչը հայերեն կազմություններում ավանդված է երկակի թարգմանությամբ՝ 1. **գյուղ** (агроном – գյուղատնտես) և 2. **հող** (аграрный – հողային): Արդի նորաբանությունների մեջ **ագրո-**ն առայժմ նույնությամբ հանդես է գալիս որպես կիսապատճենումների բաղադրիչ՝ **ագրոգյուղացիական, ագրոգիտասփյուռ, ագրոկենսաբազմազանություն, ագրոհատված** (Ս. Էլոյան), **ագրոշուկա, ագրուլրատու** (լրագիր է), ագրովերամշակող («Նոր բառեր») և այլն:

Բ. Արդի շրջանի նորակազմությունների մեջ հանդիպող օտար բաղադրիչների մի մասը՝ ավանդված նախորդ շրջանից, այսօր հանդես է գալիս հիմնականում կիսապատճենումների (նաև փոխառությունների) կազմում: Դրանցից են՝ **կինո-** («Նոր բառերում»՝ մոտ 80 բառ՝ կինոայցեքարտ, կինոանուն, կինոգովազդ, կինոուլորտ, կինոդրոշմ, կինոեղեռնապատում, կինոկտավ, կինոպուրակ, կինոթանգարան, կինոտարր, կինոտարբերակ և այլն, **ֆոտո-** (մոտ 40 բառ՝ ֆոտոարվեստ, ֆոտոգովազդ, ֆոտուլուր, ֆոտոնախագիծ, ֆոտոտարեգրություն, ֆոտոտարր, ֆոտոդիտակ, ֆոտոպատմություն, ֆոտոպահոց, ֆոտոամրագրում, ֆոտոհաշվետվություն, ֆոտոուսուցում, ֆոտոզեղարվեստ և այլն), **ռադիո-** (մոտ 20 բառ՝ ռադիոժամ, ռադիոծածկույթ, ռադիոփորձարկում, ռադիոհամակարգ, ռադիոլրագրող, ռադիոշարք, ռադիոգովազդ, ռադիոմրցույթ, ռադիոհեռուստալեզու և այլն), **էթնո-** (15 բառ՝ էթնոհիշողություն, էթնոհոգեբանական, էթնոմշակութային, էթնոերաժշտագետ, էթնո-

մաքրում, էթնոքաղաքական, էթնոավագան, էթնոպարագետ և այլն), **էկո-** (20 բառ՝ էկոգյուղ, էկոբանտ, էկոերթուղի, էկոգրոսաշրջություն, էկոլուր, էկոկրթություն, էկոաշխարհ, էկոգրիչ, էկոշենք, էկոտնակ, էկոակումբ և այլն), **ա-վիա-** (20 բառ՝ ավիացուցահանդես, ավիափոխադրող, ավիագործակալություն, ավիալիցքավորիչ, ավիամիջադեպ, ավիաշուկա, ավիապատահար և այլն), **էներգ(ա)-** (էներգահարց, էներգաարդյունավետություն, էներգահամագործակցություն և այլն), **ֆիլմ-** (ֆիլմագրություն, ֆիլմարտադրող, ֆիլմարդյունաբերություն, ֆիլմաշխարհ, ֆիլմարվեստ և այլն) և այլն:

Գ. Կիսապատճենումների մի զգալի մասն էլ կազմված է նորագույն օտար բաղադրիչներով, որոնք առնչվում են հիմնականում տեխնոլոգիական նոր իրողությունների հետ և դեռևս չունեն հայերեն համարժեքներ: Սրանցից էլ կարելի է նշել՝ **կիբեռ-** (կիբեռահաբեկիչ, կիբեռգրոհ, կիբեռխաղ, կիբեռհանցագործություն, կիբեռպատերազմ, կիբեռպաշտպանվածություն, կիբեռլրտեսություն, կիբեռոլորտ, կիբեռհարթակ, կիբեռտարածք, կիբեռտիրույթ, կիբեռսադրանք, կիբեռոստիկանություն, կիբեռանվտանգություն և այլն), **մեդիա-** (մեդիադաշտ, մեդիաոլորտ, մեդիամիջավայր, մեդիապատկեր, մեդիափորձագետ, մեդիաաշխարհ, մեդիահարթակ, մեդիագործընթաց, մեդիագրագիտություն, մեդիասպառող և այլն), **կրիպտո-** (կրիպտոարժույթ, կրիպ-

տորորսա, կրիպտոխանութ, կրիպտոներդորդ, կրիպտո-
շուկա և այլն), **վիքի-** (վիքիակումբ, վիքիբառարան, վիքի-
դարան) և այլն:

Արդեն նշվել է, որ լեզվական համակարգի ներսում գործող
ինքնամաքման շարունակական գործընթացի շնորհիվ և
նորմավորողների միջնորդությամբ բառապաշարը աստի-
ճանաբար գտվում է օտարաբանություններից, իսկ փոխա-
ռություններն ու կիսապատճենումների ոչ հայերեն բա-
ղադրիչները ժամանակի ընթացքում կարող են տեղի տալ
հայերեն առավել հաջողված տարբերակների առջև: Այս
միտումի հաստատում կարող են լինել նախկին կիսա-
պատճենումների՝ այսօր արդեն մաքուր պատճենումներով
փոխարինվելու օրինակները: **Վիդեո-, նարկո-, բիո-** բա-
ղադրիչները, օրինակ, որ հանդիպում էին կիսապատճե-
նումներում (վիդեոբոց, նարկոմիջնորդ, բիոխթանիչ և
այլն), այսօր արդեն հիմնականում փոխարինվել են հայե-
րեն **տեսա-, թմրա-, կենսա-** բաղադրիչներով՝ տեսահար-
ցագրույց, տեսագովազդ, տեսադաս, տեսադիմում, տեսա-
թարգմանություն, տեսազանգ, տեսաբացիկ, տեսականուրջ,
տեսաուղերձ, տեսահավելված, թմրափաթեթ, թմրաշրջա-
նառություն, թմրապատերազմ, թմրասրճարան, թմրա-
զլանակ, թմրասուրհանդակ, կենսադաշտ, կենսահամա-
կարգ, կենսահավելուրդ, կենսավառարան, կենսապատճեն
(կլոն), կենսաչափական և այլն:

Ինչպես կարելի է նկատել, կիսապատճենումների կաղա-
պարում օտար բաղադրիչը գերազանցապես նախադաս

դիրք է գրավում, հետադաս կիրառությունները սակավադեպ են՝ **բազմավեկտոր, բազմավիտամին, թերֆունկցիա, ծիծաղաթերապիա, թմրադիլեր, թմրակարտել, կիսաէսսե, հակաթրենդ** և այլն:

Այսպիսով, նորագույն բառարանների նյութի դիտարկումը ցույց է տալիս, որ բառապատճենումն այսօր էլ մնում է հայերենի բառապաշարի համալրման արդյունավետ միջոցներից մեկը:

Բանալի բառեր – պատճենում, կիսապատճենում, բառապաշար, բառակազմական բաղադրիչ, նորաբանություն, բառարան, նորագույն շրջան:

Leonid Telyan – Calques in the Vocabulary of the Modern Armenian Language. – Calqueing of foreign words has long been one of the most effective ways of enriching the vocabulary of the Armenian language. The examination of the material of the latest dictionaries of neologisms shows that a significant part of it has been created precisely through calqueing. The article is an attempt to functionally classify these entities.

Key words – calque, half- calque, vocabulary, word-forming component: neologism, modern times.

Леонид Телян – Кальки в лексике современного армянского языка. - Калькирование иностранных слов издавна выступает как один из действенных способов обогащения

словарного состава армянского языка. Рассмотрение материала последних словарей неологизмов показывает, что его значительная часть создана именно способом калькирования. В статье сделана попытка функциональной классификации этих образований.

Ключевые слова – калька, полукалька, лексический свстав, словообразовательный компонент: неологизм, новейший период.

**«ՀԱԳՈՒՍ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ ՆՈՐԱԿԱԶՍ
ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Լուսինե Ղամոյան

(ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Լեզվի բառային կազմը զգայուն է հասարակական կյանքի և մարդկային գործունեության բոլոր ոլորտներում տեղի ունեցող նույնիսկ ամենաաննշան փոփոխությունների նկատմամբ և անմիջականորեն արձագանքելով դրանց՝ այդ ամենն արտացոլում է իր մեջ:

Խորհրդային շրջանում, հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի վերափոխմամբ, գիտության, տեխնիկայի, մշակույթի զարգացմամբ պայմանավորված, հայոց լեզուն ևս սկսում է աննախընթաց զարգացում ապրել՝ մեծապես հարստացնելով իր բառային կազմը, որի շնորհիվ բառապաշարի տարբեր շերտերում, այդ թվում նաև՝ «հագուստ» իմաստային դաշտում, ի հայտ են գալիս նոր կամ նորակերտ բառեր, իմաստափոխական նոր իրողություններ, որոնք փոխարինելու են գալիս արդեն գործածությունից դուրս եկած բառերին: Դրանք արևելահայ և արևմտահայ գրական լեզուների մեջ գործածվող բնիկ ու փոխառյալ այն բառերն էին, որոնք չկային գրաբարում, միջին հայերենում ու բարբառներում, ինչպես՝ **անձրևաթիկնոց//**

անձրևաթափ¹ (հզվդ.) «ջուր չթափանցող նյութից պատ-
րաստված թեթև վերարկու՝ անձրևից պաշտպանվելու հա-
մար» (ԺՀԼԲԲ, 1, 117), **արտահագուստ** «հատուկ հագուստ՝
վերնագգեստ, որը հագնում են աշխատանքի ժամանակ»
(ԺՀԼԲԲ, 1, 243), **բեմագգեստ** «թատերական՝ բեմական
զգեստ» (ԺՀԼԲԲ, 1, 312), **լանջագրպան** «հագուստի կրծքա-
մասի գրպան. դրսի կողմից, ներսինը կոչվում է ծոցագրը-
պան» (ԺՀԼԲԲ, 2, 379) և այլն, *փոխառյալ բառեր՝ Ժիլետ*
«տղամարդու անթև՝ անօձիք՝ կարճ զգեստ, որ հագնում են
վերնաշապիկի վրա, պիջակի տակ. անթև բաճկոնակ»
(ԺՀԼԲԲ, 2, 283), **Ժակետ** «կանացի կարճ վերնագգեստ (հատ-
կապես բրդից կամ բամբակից գործված)» (ԺՀԼԲԲ, 2, 260),
բերետ/բերետկա «մահուդից կամ թավշից առանց հով-
հարի փափուկ գլխարկ» (ԺՀԼԲԲ, 1, 318), **բլուզ** «վերնաշա-
պիկ» (ԺՀԼԲԲ, 1, 323) և այլն: Սակայն, ինչպես հայտնի է,
ամեն մի նորակազմ բառ իր գործածության սկզբնական
շրջանում է միայն դիտվում որպես այդպիսին: Հետևաբար
վերոհիշյալ բառերն արդեն ձուլվել են լեզվի գործուն բա-
ռապաշարին և դադարել են նորաբանություն լինելուց:

Վերջին ժամանակներս նոր բառերի և իմաստների երևան
գալը ակնհայտ անհրաժեշտություն է՝ պայմանավորված
նոր հասկացությունների անընդհատ առաջացմամբ և
դրանք անվանելու անհրաժեշտությամբ:

¹ Բերված օրինակները վերցրել ենք «Ժամանակակից հայոց լեզվի բա-
ցատրական բառարան»-ից (այսուհետև՝ ԺՀԼԲԲ) և համեմատել ենք հա-
յերենի գլխավոր բառարանների հետ:

Մեր լեզուն, ինչպես գիտենք, բառակազմական մեծ ճկունություն և հնարավորություններ ունի, որոնց օգտագործումով էլ հարստացնում է իր բառապաշարը ամենից առաջ ներքին ճանապարհով՝ **բառաբարդմամբ** և **ածանցմամբ**:

«Հագուստ» իմաստային դաշտի բառանունները նույնպես մասնակցում են նոր բառերի կազմմանը (հիմնականում **բառաբարդման** ճանապարհով): Նորակազմ բարդ բառերն ածանցավորների համեմատությամբ բավականին շատ են և առանձնանում են տարբեր կաղապարներով: Ըստ խոսքիմասային արտահայտության՝ հիմնականում գերակշռում են **գոյական** գերադաս անդամով նորակազմ բարդությունները: Այսպիսով՝

ա) առավել գործուն ու հաճախադեպ են **գոյական + գոյական** կաղապարով հոդակապով իսկական բարդությունները, որոնք հիմնականում արտահայտում են **որոշիչ-որոշյալ** և **հատկացուցիչ-հատկացյալ** հարաբերություններ, ինչպես՝ **ճարմանդաշղթա**¹ «շղթայաձև ճարմանդ» (ՆԲ, Ա, 94) (ունենք նաև՝ **շղթայաճարմանդ** «շղթայով ճարմանդ» (ԱՀՆԲ, 374)), **ականախույր** «թանկագին քարերով զվարկ՝ խույր» (ՆԲ, Դ, 8), **սեպակոշիկ** (սպորտ.) «տարբեր մեծության և քանակի մետաղյա, սրածայր մեխեր ունեցող կոշիկ,

¹ Բոլոր նորակազմ բառերը դուրս ենք բերել հետևյալ բառարաններից՝ Նոր բառեր (կազմ. **Գալստյան Ա.** և ուրիշներ), Ա-Դ, Եր., 2015-2018 (այսուհետև՝ ՆԲ): **Մեյքիխանյան Փ.**, Նոր բառերի բացատրական բառարան (այսուհետև՝ ՆԲԲԲ) Եր., 1996: **Էդյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀՆԲ), Եր., 2002: **Ղուկասյան Ս.**, Առօրյա բառարան (այսուհետև՝ ԱԲ), Եր., 2013:

որն օգնում է մարզիկին արագացնելու վազքի ընթացքը» (ՆԲԲԲ, 172), **խաղաշապիկ** «մարզաշապիկ» (ՆԲ, Բ, 59), **խաղակոշիկ** (սպորտ.) «տարբեր տեսակի մարզակոշիկներ, որոնք օգտագործում են խաղային մարզաձևերով զբաղվող մարզուհիները» (ՆԲԲԲ, 80), **գիշերախալաթ** «գիշերային խալաթ» (ՆԲ, Գ, 30), **մետաքսագուլպա** «մետաքսե գուլպա» (ՆԲ, Գ, 101), **ճերմակաբաճկոն** «ճերմակ բաճկոնով» (ՆԲ, Գ, 95), **ճերմակաշավար** «ճերմակ տաբատով» (ՆԲ, Գ, 95), **ետնագրպան** «հետևի գրպան» (ՆԲ, Ա, 56), **չոչաշոր** «մանկական հագուստ» (ՆԲ, Ա, 156), **դիմաքող** «դեմքի՝ դեմքը ծածկող քող» (ՆԲ, Դ, 40), **ռոնաժապավեն** «ռոքի ժապավեն» (ՆԲ, Գ, 114) և այլն, անհոդակապ նորակազմ բառերը քիչ են, ինչպես՝ **գրպանեզր** «գրպանի ծայր՝ եզր» (ՆԲ, Դ, 35), **կինոզգեստ** «կինոնկարահանումներում օգտագործվող զգեստ» (ՆԲ, Դ, 78) և այլն,

բ) **բայարմատ+գոյական**, ինչպես՝ **վաճառալաթ** «վաճառվող լաթ՝ մաշված հնոտի հագուստեղեն՝ գործվածքեղեն» (ՆԲ, Բ, 145), **ծպտահագուստ** «որպես ծպտապարագա օգտագործվող հագուստ, ծպտվելու հագուստ» (ՆԲ, Դ, 71), **մարզաշապիկ** «մրցության ընթացքում մարզիկի հագած շապիկը» (ԱՀՆԲ, 334) և այլն,

գ) **գոյական+բայարմատ** կաղապարով՝ **ճարմանդագարդ** «ճարմանդներով զարդարված» (ՆԲ, Ա, 130),

դ) **ածական+գոյական**, որոնցով կազմվում են ածականներ, ինչպես՝ **բարձրօձիք** «բարձր օձիք ունեցող» (ՆԲ, Գ, 24),

հնազգեստ «հին զգեստ հագած» (ՆԲ, Գ, 86), **կարճատաբատ** «կարճ տաբատ հագած» (ՆԲ, Դ, 75), **կանաչահանդերձ** «կանաչ զգեստներ հագած՝ կանաչազգեստ» (ՆԲ, Գ, 64), **ծաղկաչիթ** «ծաղկավոր չիթ կարված» (ՆԲԲԲ, 87), **կարմրամուշտակ** «կարմիր մուշտակ հագած» (ԱՀՆԲ, 236), **կանաչաթիկնոց** «1. կանաչ թիկնոց, 2. կանաչ թիկնոց կրող» (ՆԲԲԲ, 92) և այլն,

ե) **թվական+գոյական**, ինչպես՝ **երկքղանցք** «երկու քղանցք ունեցող» (ՆԲ, Դ, 45) և այլն:

Կան նաև *բայարմատ* գերադաս անդամով՝ **գոյական+բայարմատ** կաղապարով նորակազմություններ, որոնցից դարձյալ ածականներ են կազմվում, ինչպես՝ **տարազահանդերձ** «տարազով հանդերձավորված» (ՆԲ, Բ, 170), **ճութածալ** «կոշիկի ճութերը ծալած» (ՆԲ, Գ, 95), **ձորձակար** «ձորձերից՝ ցնցոտիներից, քրձերից, փալասներից կարված» (ՆԲ, Դ, 105) և այլն:

Հանդիպում ենք նաև գոյ+բայարմատ+գոյական կաղապարով եռարմատ նորակազմություն՝ **վերնամարզազգեստ** (սպորտ.) «կարատեում, սամբոյում և այլ մարզաձևերում օգտագործվող չուխայաձև մարզահագուստ» (ՆԲԲԲ, 183):

Հաճախ նորակազմ բարդությունները փոխարինում են բառային բազմանդամ ազատ շարահյուսական կապակցություններին, ինչպես՝ **լաթագոտի** «գործված կտորից պատրաստված գոտի» (ՆԲ, Գ, 53), **անձրևավերարկու** «անձրևից

պաշտպանող վերարկու» (ՆԲ, Ա, 14), **հայատարագ** «հայկական տարագ կրող» (ՆԲ, Ա, 110), **ագդրաշոր** «ագդրը՝ կոնքից մինչև ծունկը ծածկող շոր» (ՆԲ, Գ, 7), **գործահագուստ** «գործի՝ աշխատանքի ժամանակ հագնելու հագուստ» (ՆԲ, Դ, 34) և այլն:

Բառակապակցությունների բառացումը բառակազմության մեջ դրական երևույթ է այն տեսակետից, որ բառակապակցություններն ավելի երկար են, քան նրանց հիմքի վրա կազմված բաղադրությունները, ուստի և դրանով իրացվում է լեզվի մեջ գործող խնայողության սկզբունքը:

«Հագուստ» իմաստային դաշտի նորակազմություններում նկատվում է որոշ ձևույթների բառակազմական ակտիվացում: Այսպես՝ *-գլխարկ*, *-զգեստ* արմատները, որպես վերջնաբաղադրիչ, բավական հաճախադեպ են, ինչպես.

-գլխարկ՝ կապագլխարկ «կապովի գլխարկ, գլխարկ, որը կապում են գլխին» (ՆԲ, Դ, 73), **լողագլխարկ** «լողալու ժամանակ դրվող գլխարկ» (ՆԲ, Դ, 63), **եզրագլխարկ** «լայնեզր գլխարկ» (ՆԲ, Բ, 36), **փետրագլխարկ** «փետուրե գլխարկ» (ՆԲ, Դ, 157), **ցանցագլխարկ** «ցանցանման՝ ցանցափյուռ գլխարկ» (ՆԲ, Դ, 154), **եռանկյունագլխարկ** «1. եռանկյունաձև գլխարկ ունեցող, 2. եռանկյունաձև գլխարկ» (ԱՀՆԲ, 144), **բոլորագլխարկ** «բոլորաձև եզրերով գլխարկ (շլապա)» (ԱՀՆԲ, 95) և այլն,

-զգեստ՝ թատերազգեստ «թատերական զգեստ» (ՆԲ, Գ, 45), **կինոզգեստ** «կինոնկարահանումներում օգտագործվող

զգեստ» (ՆԲ, Դ, 78), **իրիկնազգեստ** «երեկոյան զգեստ, իրիկնային միջոցառումներին հազնելու զգեստ» (ՆԲ, Գ, 53), **սպայազգեստ** «սպայական հանդերձանք՝ զգեստ» (ՆԲ, Բ, 130), **բոլորաշրջազգեստ** «կլոր՝ շրջանաձև զգեստ» (ՆԲ, Դ, 25), **անկողնազգեստ** «գիշերազգեստ, գիշերանոց» (ՆԲ, Գ, 11), **զինվորազգեստ** «զինվորական համազգեստ» (ՆԲ, Գ, 43) և այլն:

Որոշ նորակազմ բարդություններում *զգեստ*-ը սկզբնաբաղադրիչ է, ինչպես՝ **զգեստանկարիչ** «զգեստներ նախագծող նկարիչ» (ԱՀՆԲ, 156), **զգեստագործ** «զգեստներ նախագծող և պատրաստող» (ԱՀՆԲ, 156), **զգեստատիպ** «զգեստի տեսք ունեցող, զգեստի նման» (ԱՀՆԲ, 156) և այլն:

Նորակերտ պարզ ածանցավոր կազմությունները, ինչպես վերևում նշեցինք, քիչ են (հատկապես նախաձանացավոր ձևերը՝ *համազգեստային*) հիմնականում հանդիպում ենք վերջաձանացավոր ձևերի.

-**ային**, ինչպես՝ **համազգեստային** «համազգեստի» (ՆԲ, Դ, 88), **տարազային** «նորաձև (մոդայիկ)» (ՆԲ, Դ, 150),

-**ավոր**, ինչպես՝ **բաճկոնավոր** «բաճկոն հագած» (ՆԲ, Դ, 22) և այլն:

Բարդ ածանցավոր կազմությունները համեմատաբար շատ են, ունեն հետևյալ կաղապարները՝

ա) արմատ+արմատ+ածանց (-ներ), ինչպես՝ **սպասազգեստավոր** «սպասարկման համազգեստ կրող» (ՆԲ, Բ, 130),

վաճառաթիկնոց «վաճառողի թիկնոց» (ՆԲ, Բ, 144), **ուսա-
բարձիկ** «հագուստի մաս, ուսին դրվող բարձիկ» (ՆԲ, Ա,
184), **տոնազգեստավորում** «տոնազգեստ հագնելը, տոնա-
զգեստավորելը՝ տոնազգեստավորվելը» (ՆԲ, Դ, 153), **շրջա-
զգեստավոր** «շրջազգեստ ունեցող, շրջազգեստ հագած»
(ԱՀՆԲ, 377), **մարզահանդերձանք** (սպորտ.) «մարզումնե-
րին և մրցումներին մասնակցելու համար մարզիկներին
անհրաժեշտ հագուստ և իրեր» (ՆԲԲԲ, 135), **փրկաբաճկո-
նակ** «ինքնաթիռներում օդաչուների համար վթարի ժամա-
նակ նախատեսված արտահագուստ» (ՆԲԲԲ, 198) և այլն,

բ) արմատ+ածանց+արմատ, ինչպես՝ **ծածկոցաշալ** «ծած-
կոց» (ՆԲ, Բ, 63), **քղանցքաբաց** «քղանցքը բաց» (ՆԲ, Դ, 161),
թեքաճարմանդ «թեքի ճարմանդ» (ՆԲ, Գ, 46), **ճտքակոշիկ**
«ճտքերով՝ երկարավիզ կոշիկ» (ԱՀՆԲ, 325), **վազքակոշիկ**
«(սպորտ.) նույնն է սեպակոշիկ» (ՆԲԲԲ, 178) և այլն,

գ) ածանց+արմատ+արմատ, ինչպես՝ **գերկարճափեշ** «շատ՝
չափից ավելի կարճ փեշ ունեցող (աղջիկ, կին)» (ԱՀՆԲ, 110)
և այլն:

Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենի բառապաշա-
րի հարստացման գործընթացում մեծ դեր ունեն նաև տար-
բեր լեզուներից կատարվող փոխառությունները: «Հա-
գուստ» իմաստային դաշտում այլ լեզուներից փոխառվող
բառերը մեծ մասամբ հատկական փոխառություններ են,
որոնք մեր լեզու մուտք են գործում արտադրանքների հետ,
ինչպես՝ **ջինս, լասինա, տրիկո, ֆոենչ, ֆիգարո, մանթո** և

այլն: Դրանք ենթարկվում են հայերենին հատուկ հնչյունական փոփոխություններին և քերականական գործող օրինաչափություններին: Սրանցից շատերը մերվում են մեր բառապաշարին և դրա հիման վրա էլ նորանոր բարդությունների ու ածանցումների բաղադրիչներ են դառնում, ինչպես՝ **ջինսատենդ** «ջինսի տենդ, ձեռք բերելու՝ հագնելու հիվանդագին ցանկություն» (ՆԲ, Դ, 134) բարդությունը և **ջինսավոր** «ջինս հագած» (ԱՀՆԲ, 403) ածանցավոր կազմությունը, այդպես նաև՝ **մոդելավորող** «հագուստի, կոշիկի և այլնի նոր նմուշներ ստեղծող անձ» (ՆԲ, Ա, 141), **մոդելարար** «մոդել, նմուշօրինակ, զգեստի նախօրինակ ձևավորող, պատրաստող» (ԱՀՆԲ, 348), **մոդելարարուհի** «մոդելարար, զգեստներ ձևավորող կին» (ԱՀՆԲ, 348) և այլն:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործման ուղիներից մեկն էլ փոխառյալ բառերը հայերեն բառերով փոխարինելն է, որը, անշուշտ, դրական քայլ է, քանի որ տեղի է ունենում բառապաշարի հարստացում: Բայց հարց է առաջանում. որքանո՞վ են այս նորաստեղծ բառերն իմաստով ու հնչեղությամբ համարժեք չթարգմանված տարբերակին: Այսպես՝ **Ժիլետ**՝ «1. իլակ, 2. անթևաբաճկոն, 3. անթևաջինսակիտել» (ԱԲ, 300), **ցիլինդր**, **ցիլո**՝ «եզրագլխարկ» (ԱԲ, 302), **չուլի**՝ «ձգագուլպա» (ԱԲ, 301), **ռեյտուզ**՝ «կցագուլպա, զուգագուլպա» (ԱԲ, 301), **սվիտեր** «հուսկենի, հուսկյակ» (ԱԲ, 301), **ժակետ**՝ «ասվենի, ասվյակ» (ԱԲ, 300), **կոլգոտկա**՝ «զուգագուլպա» (ԱՀՆԲ, 160),

դուբլոնկա՝ «կաշվենի» (ԱԲ, 300), **շորտ//շորտիկ՝** «կիսատաբատ» (ՆԲ, Գ, 73), **պոդյուբկա՝** «ներքնաշորջագգեստ» (ՆԲ, Գ, 108), **շլասպա՝** «բոլորագլխարկ» (ԱՀՆԲ, 95) և այլն:

Անշուշտ, սրանց մի մասը դիպվածային բառեր կարելի է համարել, որոնք միտում չունեն ամրանալու լեզվի բառային կազմում, ինչպես նաև՝ **ջինսասիգարետային** «ջինս հագած և ծխող» (ԱՀՆԲ, 403), **կուշտուհագնված** «կուշտ և հագնված, ապահովված» (ԱՀՆԲ, 254), ժողովրդախոսակցական լեզվում տարածված **գրգռաճեղք** (պրարեխ) և այլ դիպվածային բառերը: Կարծում ենք, նման ճակատագիր ունեն նաև հեղինակային այն նորաբանությունները, որոնք լեզվական նորաբանությունների նման ստեղծվում են լեզվում եղած կենսունակ բառակազմական ձևայիններով, տվյալ լեզվում ընդունված բառակազմական կադապարներով: Դրանք հիմնական մասով կանոնական կազմություններ են և խոսքից դուրս հասկանալի են որպես բառային միավորներ, սակայն ժամանակը ցույց կտա՝ կամրանա՞ն արդյոք մեր բառապաշարում, թե՞ ոչ, ինչպես՝ **ոսկեթիկնոց** (ՌԴ) «(փխբ.) ոսկե թիկնոց հագած՝ կրող» (ՆԲԲԲ, 158), **ոսկեխույր** (ՌԴ) «(փխբ.) ոսկե խույր՝ գլխանոց ունեցող» (ՆԲԲԲ, 158), **լուսագոգնոց** (ԱՀՆԲ, 205), **պսակաշոր** (ՄԳ) «1. պսակի շոր, զգեստ, 2. հարսնագգեստ» (ՆԲԲԲ, 166), **ճերմակաձեռնոց** (ՀՇ) (փխբ.) «1. արտաքուստ անմեղ ձևացող չարագործ, 2. ճերմակ ձեռնոց կրող՝ հագնող» (ՆԲԲԲ, 128), **համագլխարկ** (ՊՍ) «ծառայության մեջ գտնվողի համա-

զգեստի գլխարկը, ծառայական գլխարկ» (ՆԲԲԲ, 105), **կանացազգեստ** (ՀՇ) «կանացի զգեստով. (փխբ.) անպատիվ ձևով, կնաբարո»¹ և այլն:

Սրանցից մի քանիսը կարող են ընդունվել հասարակության կողմից, դառնալ գործուն բառապաշարի միավորներ և ծավալում ստանալ՝ ունենալով հաճախակի գործածություն: Բայց կան հեղինակային նորակազմություններ, որոնք ունեն բաղադրիչների անսովոր համադրություն, յուրահատուկ զուգորդումներ և փոխաբերական երանգներ, ինչպես՝ **տերևաշոր** «(բնստ.) տերևներով շորեր հագած, տերևազարդ» (ԱՀՆԲ, 450), **ուրվավեղար** «(բնստ.) վեղարով ուրվականի տեսք ունեցող» (ԱՀՆԲ, 465), **լուսեքարուր** «(բնստ.) լույսով բարուրված, պայծառ» (ՆԲ, Բ, 58), **լուսնաքող** «(բնստ.) լուսնի քողով պատված, լուսնի ճառագայթներով ողողված» (ՆԲ, Բ, 59), **փրփրաքարուր** (ՀՇ) և այլն:

Ինչպես նկատեցինք, սրանց մեծ մասը փոխաբերական իմաստներ ունի:

Հաճախ են «հագուստ» իմաստային դաշտի բառանուններից կազմվում նոր բառեր, որոնք ստանում են բոլորովին այլ՝ նոր, փոխաբերական իմաստ, ինչպես՝

ա) **սապոգ՝ սապոգակոխ** «(փխբ.) ձգված, ոտնակոխ արված, բռնադատված» (ԱՀՆԲ, 413), **սապոգավոր** «(փխբ.) ձգմող, ուժ գործադրող, ուժի դիրքերից խոսող՝ վարվող՝

¹ **Համբարձումյան Ս.**, Նովիաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարան, Եր., 2016, էջ 76:

ապօրինություն անող» (ԱՀՆԲ, 413), **սապոզավորված** «(փխբ.) ուժ գործադրելու իրավունք ստացած» (ԱՀՆԲ, 413),

բ) **գրպան՝ գրպանամուլ** «գրպանը լցնելու մոլուցք ունեցող, թալանող, գողող» (ԱՀՆԲ, 123), **գրպանային//գրպանի** «(փխբ.) լուրջ, թվացյալ, խամաճիկային, դիմագիծը կորցրած, կամակատար դարձած, ինքնուրույնություն չունեցող, իշխանամետ» (ԱՀՆԲ, 123), **արտագրպանային** «(փխբ.) փոքրաքանակ, ոչ ծանրակշիռ» (ԱՀՆԲ, 72), **սեփականագրպանված** «սեփականացված և յուրացված, կողոպտված» (ԱՀՆԲ, 420) և այլն:

Այդպես նաև՝ **օտարագգեստ** «(փխբ.) ազգային նկարագրին օտար, ոչ հարազատ տեսք, կերպ, ձև ունեցող» (ՆԲԲԲ, 203), **մահաշուրջառ** «(փխբ.) մահվան զգեստ հագած» (ՆԲԲԲ, 130), **քողաշապիկ** «(փխբ.) ծածկվելու պատրվակ, միջոց» (ԱՀՆԲ, 480), **գուլպայախեղդություն** «(փխբ.) գուլպաների չափազանցաբար գործածելը» (ԱՀՆԲ, 124), **կարմրահանդերձ** «(փխբ.) կարմիր հանդերձով՝ իբրև խորհրդային (քարտեզի մասին)» (ՆԲԲԲ, 94) և այլն:

Կան հազուստի անվանումներից բաղադրված սովորական շարահյուսական կապակցություններ, որոնք, փոխաբերաբար գործածվելով, աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակապակցության ու ստացել բառային իմաստ: Դրանք նորակազմ դարձվածային կայուն բառակապակցություններ են, ինչպես՝ **վարտիքային տարիք** «1. մանկական տարիք, 2. դեռևս չհասունացած, չկայացած» (ԱՀՆԲ,

435), **սրտի փեշը քաշել** «սրտի մեջ մտնել, սրտին մերձենալ, սիրտը թափանցել» (ԱՀՆԲ, 428), **ձեռքը գրպանը տանել** «փող ծախսել, գումար տրամադրել» (ԱՀՆԲ, 317), **թիկնոցազերծ անել** «պաշտոնից, հնարավորությունից, հովանավորությունից զրկել» (ԱՀՆԲ, 175) և այլն:

«Հագուստ» իմաստային դաշտում կան նաև նորակազմ բաղադրյալ կայուն այնպիսի բառակապակցություններ, որոնց իմաստը, ի տարբերություն դարձվածային միավորների, տվյալ կապակցության անդամների միասնությամբ ստեղծվող ուղղակի իմաստն է: Դրանք անվանական բառակապակցություններ են՝ լրացում-լրացյալ հարաբերությամբ, որոնք, որպես բաղադրյալ տերմիններ, ընդհանուր հասկացությունները վերածում են մասնավոր հասկացությունների՝ ստեղծելով տերմինային ստորակարգություն¹, ինչպես՝ **սև գոտի** (սպորտ.) «կարատեում՝ վարպետ մարզիկ» (ՆԲԲԲ, 173), **սպիտակ գոտի** «կարատե, ձյուդո, սամբո և ըմբշամարտի այլ մարզաձևերում» (ՆԲԲԲ, 173) և այլն:

Հոդվածում ընդգրկված նորաբանությունները կամ «նորակազմ» թվացող բոլոր բառերը համեմատել ենք հայերենի գլխավոր բառարանների հետ՝ հաշվի առնելով, որ այդպիսի համեմատության արդյունքն էլ վերջնական համարվել չի կարող: Հետևաբար նորաբանությունների առանձնացումը լեզվում հնարավոր է միայն հարաբերական, ոչ երբեք

¹ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 238:

բացարձակ իմաստով, և դա բացատրվում է լեզվի, մանավանդ բառապաշարի պատմության մի շարք հանգամանքներով:

Այսպիսով, լեզուն նոր բառեր ստեղծում է իր գոյության բոլոր շրջաններում, որն էլ տվյալ լեզվի կենսունակության վկայությունն է: Նման բաղադրությունները, կազմված լինելով հայերենի կենսունակ բառակազմական կաղապարների համաբանությամբ, կարող են իրենց տեղը գտնել նրա բառազանձարանում՝ հարստացնելով և համալրելով այն, սակայն շատերն էլ մեկուսացած կմնան միայն իրենց ծնող համատեքստերում՝ իբրև իրավիճակային պահանջով կազմված բառեր՝ չդառնալով լեզվական իրողություն:

Բանալի բառեր - «հագուստ» իմաստային դաշտ, արդի գրական հայերեն, նորակազմ բառեր, բառակազմություն, փոխառյալ բառեր, դիպվածային բառեր, փոխաբերական իմաստ:

Lusine Ghamoyan – The semantic field “clothes” in the newly formed formulations. - Language creates new words during all stages of its existence, and this is the proof of the viability of that language. In the same way, the words of the semantic field “clothing”, participating in the formation of words, become components of many newly formed words. These compositions being formed by the viable word formation patterns of Armenian language can be included in its glossary and enrich the vocabulary. While some of them will stay isolated just in the

context where they have been created as situational words and won't become linguistic reality.

Key words - semantic field "clothing", modern literary Armenian language, newly-created words, word formation, borrowed words, nonce words, metaphorical meaning.

Лусине Гамоян – Семантическое поле «одежда» в новообразованных составлениях. - Язык создает новые слова на всех этапах своего существования, и это является доказательством жизнеспособности этого языка. Таким же образом слова семантического поля «одежда», участвуя в образовании слов, становятся компонентами многих новообразованных слов. Эти композиции, сформированные жизнеспособными образцами словообразования армянского языка, могут быть включены в его глоссарий и обогатить словарный запас. Хотя некоторые из них останутся изолированными только в контексте, где они были созданы как ситуативные слова и не станут лингвистической реальностью.

Ключевые слова - семантическое поле «одежда», современный литературный армянский язык, неологизмы, словообразование, заимствованные слова, окказионализмы, метафорическое значение.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մանուկ Ֆելեքյան (ԵՊՀ)

Քաղաքական, սոցիալական, տնտեսական խոշոր, շրջադարձային փոփոխությունների ժամանակ լեզվի բառապաշարը առաջինն է արձագանքում այդ իրադարձություններին: Վերջին այդպիսի շրջանը մեր ժողովրդի և մեր երկրի համար անցյալ դարի առաջին երկու-երկուսուկես տասնամյակներն էին, երբ իրար հաջորդեցին միանգամից մի ամբողջ շարք բախտորոշ, բայց, ցավոք սրտի, մեզ համար հիմնականում բացասական պատմական դեպքեր՝ Առաջին աշխարհամարտ, Հայոց մեծ եղեռն, Ռուսական կայսրության քայքայում, երկրի անկախացում՝ մի կարճ ժամանակով, ապա խորհրդային կարգերի հաստատում: Սրանց՝ լեզվում թողած ազդեցությանը մենք ծանոթ ենք գրականությունից, ժամանակի մամուլից, ականատեսների պատմածներից ու հուշերից, բառարաններից և այլ աղբյուրներից: Նման և ոչ պակաս բախտորոշ շրջան է ապրում հայոց լեզուն անկախությունից ի վեր՝ վերջին երեք տասնամյակներում: Իսկ եթե առավել ճշգրիտ լինենք, այդ շրջանը սկսվել է անկախությունից մի փոքր ավելի վաղ՝ 1980-ական թվականների կեսերից՝ Վերակառուցման ժամանակներից: Եվ եթե կարելի է այդպես ասել, արդի լեզվա-

բաններին բախտը բերել է, քանի որ մենք ոչ միայն ակա-
նատեսն ու վկան ենք լեզվում և հատկապես նրա բառա-
պաշարում կատարվող էական տեղաշարժերի, այլև դրա
մասնակիցն ենք:

Լեզվի բառապաշարում տեղաշարժերը կատարվում են
հիմնականում երկու ուղղությամբ: Լեզվական և արտալեզ-
վական պատճառներով որոշ բառեր և նույնիսկ ամբող-
ջական բառաշարքեր համեմատաբար դանդաղ դառնում
են հնաբանություններ և երբեմն բառապաշարից իսպառ
դուրս են մնում, և բավականին արագ բառային կազմը
համալրվում է նոր բառերով, կայուն կապակցություններով
և բառիմաստներով:

Անկախությունից հետո, պայմանավորված ԽՍՀՄ փլուզ-
մամբ և պետության ու հասարակության կառուցվածքի
կտրուկ փոփոխությամբ, տնտեսական, մշակութային, բա-
րոյական շատ արժեքների վերագնահատմամբ ու վերա-
իմաստավորմամբ, առավել արագ սկսեցին հնաբանութ-
յուններ՝ պատմաբառեր դառնալ խորհրդային իրականութ-
յունը արտացոլող հարյուրավոր բառեր՝ այսպես կոչված
սովետիզմները: Այսօր երիտասարդությանը, մեր ուսանող-
ներին շատ քիչ են ծանոթ, եթե չասենք՝ ուղղակի անծանոթ
են խորհրդային կառավարման համակարգն արտահայ-
տող այնպիսի բառեր, ինչպես՝ *շրջխորհուրդ* (ավելի հին՝
շրջսովետ), *քաղխորհուրդ*, *քաղկոմ*, *կենտկոմ*, *քաղբյուրո*,
կուսվերահսկողություն, *միլիցիա*, *դեկավարման լենինյան*
սկզբունքներ, *դեմոկրատական ցենտրալիզմ*, *պլենումի*

կամ *համագումարի պատմական որոշումներ, կենտրոնի մայիսմեկյան կամ նոյեմբերյան կոչեր* և այլն, և այլն: Պլանային տնտեսական հարաբերություններն արտահայտող բառեր՝ *կոլտնտեսություն, կոլտնտեսական, սովետական տնտեսություն, սոցիալիստական մրցություն, պլանի կատարում և գերակատարում, հնգամյակ, արտադրության առաջավոր, Սոցիալիստական աշխատանքի հերոս, հանդիպակաց պարտավորություն* և այլն: Միջազգային հարաբերությունների բնագավառում գործածվող բառեր՝ *սոցիալիզմի համաշխարհային սիստեմ, խաղաղ գոյակցություն, սառը պատերազմ, Տնտեսական փոխօգնության խորհուրդ* և այլն: Այս բառերն այսօր անցել են մեր բառապաշարի ոչ գործուն շերտ և իրենց մեջ պահում են մեր ոչ վաղ անցյալի, խորհրդային իրականության մասին հուշ: Այժմ այս կարգի բառերն ավելի հաճախ գործածվում են խոսքին հեզնական երանգ հաղորդելու համար:

Առանձնապես ուժեղ էր միութենական կենտրոնի և կոմունիստական կուսակցության գաղափարական ճնշումը մշակույթի և գրականության, արվեստի, կրթության բնագավառում: Բառապաշարում դա արտահայտվում էր մի շարք արհեստական սահմանափակումների, որոշ բառերի և արտահայտությունների արգելքների, շատ հասկացությունների երկակի բաժանմամբ (կրկին արհեստական): Սա լավագույնս երևում է մեր բառարաններում և հանրագիտարաններում: Այսպես, «Արդի հայերենի բացատրական բառարանում» խիստ սահմանափակ են ներկայացված

կրոնական և եկեղեցական բառերը, քանի որ, ըստ հեղինակի, դրանց «իմացումը այսօրվա մասսայական ընթերցողին անհրաժեշտ չէ»¹։ Բարոյական, սոցիալական, պատմական բազմաթիվ համամարդկային հասկացություններ հանրագիտարաններում բաժանված են երկու ենթաբաժնի՝ բուրժուական կամ կապիտալիստական և պրոլետարական կամ սոցիալիստական։ Հայկական սովետական հանրագիտարանի համապատասխան բառահոդվածներում կարդում ենք՝ *բուրժուական հայրենասիրություն* և *պրոլետարական հայրենասիրություն*, *բուրժուական բարոյականություն* և *պրոլետարական բարոյականություն*, *բուրժուական ազգ* և *սոցիալիստական ազգ*, *ռեալիզմ* կամ *քննադատական ռեալիզմ* և *սոցիալիստական ռեալիզմ*, *բուրժուական* կամ *իդեալիստական բարոյագիտություն* և *մարքս-լենինյան բարոյագիտություն*, *բուրժուական արդարադատություն* և *սովետական արդարադատություն* և այլն։ Ընդ որում, սրանցից առաջինները ժամանակին ունեին խիստ ցայտուն բացասական գունավորում. *բուրժուական* բառը նման կապակցություններում համագոր էր կեղծ, *հակագիտական*, *շինծու*, *սուտ* բառերին։ Եվ կամ արվեստի շատ ժանրեր և ամբողջական ուղղություններ, ստեղծագործական շատ մեթոդներ, ժամանակի միակ ճշմարիտ համարվող գաղափարախոսությանը և գրա-

¹ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. I, Երևան, 1976, էջ XIII:

քննությանը համապատասխան, բառարաններում և տեղեկատուներում ներկայացված են բացասական բնորոշումներով, թեև դրանք լավը կամ վատը լինել չէին կարող և երբեմն շատ մեծ հետք են թողել ամբողջ մարդկության մշակութային պատմության մեջ: Այսպես, *մոդեռնիզմ* բառի բացատրության մեջ կարդում ենք. «Իմպերիալիզմի դարաշրջանում արվեստի և գրականության բնագավառում հանդես եկած հակառեալիստական բուրժուական ուղղությունների ընդհանուր անվանումը»¹, *սյուրռեալիզմ* «20-րդ դարի բուրժուական գրականության և արվեստի ծայրահեղ ֆորմալիստական ուղղություններից մեկը»², *կուբիզմ* «XX դարի առաջին քառորդում բուրժուական կերպարվեստի մեջ անկումային, ձևապաշտական ուղղություն, որի ներկայացուցիչները առարկաները, մարդկանց, բնությունը պատկերում են երկրաչափական խորանարդների զանազան զուգորդությունների ձևով»³: Այսօր այդպիսի հասկացությունների խիստ գափառայնացված գնահատում չկա:

Հակառակ սրան՝ այսօր կյանքի են կոչվում բազմաթիվ այնպիսի բառեր, որոնք խորհրդային շրջանի բառարաններում ունեին *պատմական, հին, հնացած* նշումներ. *թաղապետ* և

¹ **Ադայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1023:

² Նույն տեղում, էջ 1313:

³ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. II, Եր., 1976, էջ 238:

քաղաքապետ բառերը Աղայանի և Ակադեմիական բառարաններում ներկայացված են իբրև պատմաբառ, **գյուղապետ**-ը Աղայանի բառարանում ունի *մինչև*. (մինչհեղափոխական), իսկ Ակադեմիականում՝ *հնց*. (հնացած բառ) նշումները: Համապատասխանաբար որպես հնաբանություններ են նշված **թաղապետարան** և **քաղաքապետարան** բառերը, իսկ **գյուղապետարան**-ը երկու բառարաններում էլ ուղղակի չկա (սա թերևս նորակազմություն է, որովհետև ո՛չ ցարական, ո՛չ էլ խորհրդային ժամանակներում այդպիսի հիմնարկ գոյություն չի ունեցել): Ժամանակակից լեզվում դրանք ոչ միայն վերականգնվել են, այլև մտնում են գործուն բառաշերտի մեջ, դարձել են հիմնական բառաֆոնդի միավոր՝ իբրև տեղական կառավարման նոր համակարգի հաստատությունների, պաշտոնների և պաշտոնյաների անվանումներ: Այդպես է նաև ուսումնական շատ հաստատությունների տեսակների անվանումների դեպքում: Քանի որ խորհրդային կրթական համակարգը ընդունում էր միայն տարրական, միջնակարգ դպրոցներ, ուսումնարաններ և բարձրագույն դպրոց, ուսումնական այլ հաստատությունների անվանումները անցել էին հնաբանությունների շարքը: Այժմ **քոլեջ**, **լիցեյ** (կամ **լիկեյ**), **գիմնազիա** բառերը վերականգնվում են հիմնական բառապաշարում: Այդպես է նաև բուն հայկական անվանումներ ունեցող կրթարանների պարագայում. այսօր ունենք և՛ **ճեմարան**, և՛ **դպրանոց**, և՛ **ընծայարան**, և՛ **նախակրթարան**: Նշենք նաև **բակալավր** և **մագիստրոս** բառերը, որոնք արդի Հայաստանի

բարձրագույն կրթության համակարգի երկու աստիճաններն են ցույց տալիս: Այլևս բավականին մեծ հաճախականություն ունեն կրոնի և ավելի լայն՝ հավատքի ոլորտի բառերը, որոնց մի մասը որոշ չափով վերափոխաստավորված է՝ **հավատ, քրիստոնեություն, պատվիրան, հաղորդություն, պաս** կամ **պահք, մասունք, քարոզ** և այլն:

Վերագնահատվել է բազմաթիվ հասկացությունների և դրանք արտահայտող բառերի նկատմամբ վերաբերմունքը, դրանց ոճական արժեքը: Աղայանի բառարանում **քիզնես** և **քիզնեսմեն** բառերը հղված են **գործարք** և **գործամուլ** համանշանակներին (Ակադեմիական բառարանում այս բառերը չկան), իսկ վերջիններս բացատրված են ոչ ամբողջությամբ. նշված է դրանց բացասական երանգը. **Գործամուլ**. Ակադեմիական բառարան. «1. Գործի ձևական կողմով տարված: 2. Իր անձնական շահի համար գործելու մոլուցքով բռնված անձ», Աղայանի բառարան. «1. Առանց միջոցների մեջ խտրություն դնելու շահախնդրական (մեծ մասամբ առևտրական) գործարքներ վարելու հմուտ և նախաձեռնող մարդ: 2. Գործի ձևական կողմով տարված մարդ»: Այսօր **քիզնեսմեն** բառի հայերեն հոմանիշն է **գործարար**-ը, որը հիշյալ բառարաններում ավելի չեզոք մեկնություն ունի: **Բարեգործություն**-ը Ակադեմիական բառարանում ունի երկու իմաստ, որոնցից առաջինը թերի է, իսկ երկրորդը, որն այսօր ըմբռնվում է որպես հիմնական նշանակություն, ունի **հնացած** նշումը. «1. Բուրժուական հասարակության

մեջ մասնավոր անհատների կողմից չունենորենին նյութական օգնություն ցույց տալը, հանրօգուտ գործեր կատարելը: 2. (հնց.) Հանրօգուտ գործ»: Երբեմն բառերը փոխում են իրենց ոճական արժեքը: Ժամանակին այդպիսի վերախմաստավորում էր կատարվել, օրինակ, *վարժապետ* բառում, և այն հարգական իմաստից անցում էր կատարել դեպի հեզնականը և նույնիսկ ծաղրականը. խորհրդային շրջանում և այժմ էլ վարժապետ են անվանում հետամնաց, գիտելիքներից ու մանկավարժական հմտություններից զուրկ ուսուցչին: Այսօր *հավաքարար*//*հավաքարարուհի* բառը սկսել է ընկալվել իբրև «ցածր» ոճի բառ և աստիճանաբար փոխարինվում է *մաքրուհի* կարծեցյալ մեղմասությամբ: Այդպես նաև նախորդ քաղաքական համակարգում չեզոք իմաստ ունեցող *պարտկում*, *քաղբյուրո*, իսկ ավելի հաճախ սրա օտար համարժեք *պոլիտբյուրո* բառերն այժմ գործածվում են առավելաբար հեզնական, երբեմն էլ սարկաստիկ իմաստներով, ինչպես՝ «Իրականում ԵԽ-ն իշխանությունների համար լավ էլ «պալիտբյուրո» է, և նրանք դրանից շատ են վախենում» («Առավոտ», 2004.06.18): Ընդհանրապես նշենք, որ բոլոր այն բառերը, որոնք խորհրդային շրջանի բառարաններում ունեին *մինչհեղափոխական*, *արտասահմանյան* և նման նշումներ, կամ որոնց բացատրության մեջ գործածված են «կապիտալիստական երկրներում..., բուրժուական պետություններում..., կապիտալիզմի համաշխարհային սիստեմում...» և նման բնույթի ձևակերպումներ, այժմ դադարել են հնաբանություն, էկզոտիզմ կամ գործածության սահմանափակում

ունեցող բառեր լինելուց և պետք է համարվեն նորաբանությունների մի յուրօրինակ տեսակ:

Վերախմաստավորվել են որոշ թվով տերմիններ, շատ բառեր ձեռք են բերել նոր, նաև տերմինային նշանակություններ, կամ ակտիվացել են դրանց տերմինային գործածությունները: Այս դեպքում նկատելի է օտար ազդեցությունը. այդ նոր նշանակությունները մեծ մասմբ իմաստային փոխառություններ են, ինչպես՝ *փլուզում* «քաղաքական, տնտեսական, երբեմն մշակութային հարաբերությունների կտրուկ անկում» քայքայում. *ԽՄՀՄ փլուզումը, տնտեսության փլուզում*, *ճեղքվածք* «պակաս, անբավարարություն, բացասական հավասարակշռություն. բյուջեի ճեղքվածք», *ճեղքում* «երկար և ծանր աշխատանքից հետո նշանակալի արդյունքների ձեռքբերում. ճեղքում բանակցություններում»: *Լճացում* «զարգացում չունենալը, ետընթացի բացակայության պայմաններում որևէ գործում՝ աշխատանքում՝ կարիերայում ևն առաջխաղացում չունենալը. տնտեսության լճացում»: *Աշխարհ* «միևնույն ոլորտի մեծաքանակ և բազմազան տեսականիով մասնագիտացված խանութ. հագուստի աշխարհ, կոշիկի աշխարհ, խմիչքի աշխարհ, գործվածքի աշխարհ, թելերի աշխարհ» և այլն:

Լեզուն ավելի արագ համարվում է նորաբանություններով՝ թե՛ ուղղակի փոխառություններով ու պատճենումներով և թե՛ սեփական նորակազմություններով:

Սրանք առաջին հերթին ժողովրդի, երկրի կյանքում նախ-
կինում գոյություն չունեցած նոր հասկացությունների, ե-
րևույթների, առարկաների անվանումներն են, որոնք լեզու
են մուտք գործում այդ հասկացությունների երևան գալու
հետ մեծ մասամբ փոխառությունների տեսքով: Հայոց լե-
զուն այդ բառերը, համաձայն իր դարավոր ավանդույթնե-
րին, անմիջապես փոխառելուց հետո կամ դրան զուգահեռ
փորձում է հայացնել՝ մեծ մասամբ ճշգրիտ կամ մոտավոր
պատճենումների տեսքով, երբեմն էլ սեփական միջոցնե-
րով կերտելով բոլորովին նոր բառ: Առանձնապես շատ են
նորաբանությունները քաղաքական-քաղաքագիտական
բառապաշարում, քանի որ խոհրդային շրջանի անտար-
բերությանը փոխարինել է հասարակության խիստ քաղա-
քականացումը: Ընդլայնվել և նորացվել է նաև նոր պե-
տականաշինության, հասարակական նոր հարաբերույթ-
յունները ընդգրկող բառապաշարը: Այդ բառերից շատերը
այսօր մուտք են գործել նաև համագործածական բառա-
պաշար, ինչպես՝ *ազատականացում, ամբոխահաճություն,
ամբողջատիրություն, ապաքաղաքական, արգելանք (վե-
տո), բանակաշինություն, կարգախոս, կառուցողական*
(նաև *շինիչ*), *հեռուստաբանավեճ, հեռուստամարաթոն,
ցուցապաստառ, ցեղակրոն*, ընտրությունների հետ կապ-
ված՝ *ընտրադաշինք, ընտրազանգված, ընտրախախտում,
ընտրակաշառք, ընտրակեղծիք, ընտրահնարք* և այլն, և
այլն: Այս շարքում նշենք նաև **կուսակցություն** և դրանից
ածանցված բառերը (*կուսակցական, անկուսակցական,
հակակուսակցական, կուսակցականություն* ևն), որոնք

խորհրդային շրջանում ենթարկվել էին բառիմաստի նեղացման և նշանակում էին նախ և առաջ համայնավարական և հատկապես Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը: Այսպես, **անկուսակցական** բառի՝ Ակադեմիական բառարանում առաջին իմաստն է՝ «ՄՄԿ կուսակցության շարքերում չգտնվող անձ, ոչ կուսակցական», և միայն երրորդ նշանակությունն է՝ «որևէ քաղաքական կուսակցության չպատկանող (անձ)»: Կամ **հակակուսակցական** բառը նույն բառարանում ներկայացված է երկու նշանակություններով՝ «1. Կուսակցության դեմ ուղղված, կոմունիստական կուսակցության հակառակ: 2. Կուսակցության դեմ գործող անձ, կոմունիստական կուսակցությանը հակառակորդ»: Այժմ այդ բառերը վերականգնել են իրենց իմաստային ամբողջ ծավալը. տեղի է ունեցել, եթե կարելի է այսպես ասել, իմաստի վերադարձը:

Նոր ժամանակների մեր բառապաշարում և ընդհանրապես լեզվում տեղի ունեցող նկատելի տեղաշարժերից ամենաէականը ռուսերենի ազդեցության նկատելի նվազումն է: Այսօր շարունակաբար ակտիվանում է անգլերենի ազդեցությունը: Փոխառությունները, կառուցվածքային և իմաստային պատճենումները այդ լեզվից այսօր կատարվում են արդեն ուղղակիորեն, առանց միջնորդ լեզվի: Դրանց հիմնական մասը, իհարկե, հաջողված է և տեղին, թեև կան նաև հայերենին ոչ հարազատ, անհարկի կազմություններ: Ուղղակի անգլերենից կատարված փոխառություններ պետք է

համարվեն, օրինակ, *խմիջ, խմիջմէյքեր, գլոբալիզացիա, քաստինգ, սուպերմարկետ, փլեյեր, քիլլեր, բուտիկ, վիրտուալ, դիջեյ* և այլ բառեր:

Նկատելի է օտար, փոխառյալ մի շարք արմատների և ածանցակերպների բառակազմական ակտիվացումը: Այս բաղադրիչներով բառերի մի սովորական կիսապատճենում է, թեև չի կարելի բացառել մի քանիսի բուն հայկական կազմության հնարավորությունը: Նշենք մի քանիսը: Նախկինում էլ գործուն **ավտո-** և **ավիա-** բաղադրիչներով այսօր ունենք նոր բառեր՝ *ավտոերթ, ավտոմաքսագերծում և ավտոմաքսատուն, ավտոգազալցակայան, ավտոսանդուղք, կամ՝ ավիատոմրակոծում, ավիացուցահանդես, ավիափոխադրամիջոց, ավիափոխադրում*: Ավելի նոր է **էկո-** («էկոլոգիայի հետ կապ ունեցող, էկոլոգիային առնչվող») բաղադրատարրով բառերի կազմությունը՝ *էկոանձնագիր, էկոգյուղ, էկոբանտ, էկոերթուղի, էկոգրոսաշրջություն, էկոգրոսաշրջային, էկոկրթություն, էկոկրթական, էկոկենտրոն* և այլն: Եվ ընդհանրապես **էկոլոգիա** (նաև **էկոլոգիական**) տերմինը ընդլայնել է իր իմաստը և այժմ զուտ կենսաբանական հասկացություն չէ: Այն գործածվում է հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների հասկացություններ բնութագրելու համար, ինչպես՝ *սոցիալական էկոլոգիա, հոգու էկոլոգիա, էկոլոգիական մշակույթ, էկոլոգիական կրթություն, էկոլոգիական դաստիարակություն, էկոլոգիական շարժում, էկոլոգիական ոստիկանություն, էկո-*

լոգիական դավադրություն, էկոլոգիական ահաբեկչություն, էկոլոգիական խանութ և այլն, և այլն: **Էթնո-** արմատով կազմությունները ևս քիչ չեն՝ էթնոգենետիկ, էթնոհիշողություն, էթնոգիտակցություն, էթնոհոգեբանություն, էթնոհոգեբանական, էթնոմշակույթ, էթնոմշակութային, էթնոպարագետ և այլն: **Մեդիա-** ձևույթով բաղադրությունները նույնպես ակտիվորեն սկսել են մասնակցել հայերենի բառակազմությանը՝ մեդիադաշտ, մեդիադեմք, մեդիակայսրություն, մեդիադպրոց, մեդիամասնագետ, մեդիամիջավայր, մեդիառոտ, մեդիափորձագետ, մեդիաարտադրանք, մեդիաշուկա, մեդիասպառող և այլն: Կամ՝ **շոու-** շոու-բիզնես, շոու-ծրագիր, շոու-աստղ, շոու-ներկայացում, **թոփ-** թոփ-ցուցակ, թոփ-մոդել, թոփ-տասնյակ, թոփ-նորություններ, **բիզնես-** բիզնես առաջարկ, բիզնես-կենտրոն, բիզնես-տուր, բիզնես միջավայր, բիզնես պլան, բիզնես կառույց, բիզնես-մշակույթ, բիզնես հետաքրքրություն, բիզնես-ֆորում, բիզնես համակարգ, բիզնես դաս և այլն:

Այս կարգի փոխառությունների մեջ նկատելի է մի երևույթ ևս: Երբեմն մեր կենցաղ հիմնականում Արևմուտքից թափանցած նոր առարկաների, գործիքների հետ լեզու են մտնում նաև մեզանում հանդիպող դրանց առաջին նմուշների անունները՝ իբրև առարկաների ամբողջ սեռերի անվանումներ, թեև դրանք ընդամենը այդ առարկաներն արտադրող ֆիրմաների, ընկերությունների անվանումներն են, երբեմն էլ դրանք ստեղծողների հատուկ անունները

կամ դրանց կրճատ ձևերը: Այսպես, պատճենահանող սարքերը մեզանում կոչվում են **քսերոքս**: Դա ընդամենը պատճենահանող սարքերի արտադրության մեջ մասնագիտացած ամերիկյան մի ֆիրմայի անունն է, որ մեր լեզվում տարածվել է պատճենահան բոլոր սարքերի վրա՝ անկախ արտադրողի անունից: Խոսակցականում էլ ունենք **քսերոքսել**, **քսերոքսանոց** հայկական կազմությունները: Կամ **ջակուզի**-ն ջրամբարման ավազաններ և լոգարաններ արտադրող կրկին ամերիկյան ֆիրմայի անունն է, որ այսօր գործածվում է նմանատիպ բոլոր լողավազանների համար: Եվ կամ այսօր **պամպերս** կամ **փամպերս** են կոչվում մանկական բոլոր տակդիրները, մինչդեռ այն միայն մի ֆիրմայի արտադրանքի առևտրական անվանումն է: Մի քիչ ավելի վաղ մեր լեզվում որպես մարզական կոշիկների անվանում տարածվել էին **բոթաս** և **ադիդաս** անվանումները:

Ժամանակակից արևելահայերենը ունի բառապաշարի համալրման մի յուրօրինակ և կարևոր աղբյուր ևս՝ արևմտահայերենը: Լեզվի մեր տաբերակը միշտ էլ օգտվել է արևմտահայերենից: Արևմտահայերենը, մինչև Մեծ եղեռնը և այսօր էլ զարգանալով, իսկ հաճախ գոյատևելով օտար լեզուների տիրապետող միջավայրում, միշտ է՛լ ավելի խիստ է մոտեցել փոխառություններին և փորձել է ու այսօր էլ փորձում է հնարավորինս հայացնել ցանկացած նոր անվանում: Վերջին տասնամյակներում արևմտահայերենին անդրադարձումները ավելի են հաճախացել, արևմտահա-

յերենը մեր բառապաշարի հարստացման գործուն աղբյուրներից մեկն է: Նախաանկախական շրջանում, իսկ երբեմն այժմ էլ Արևմուտքից եկող նոր տեխնիկային (մանավանդ կենցաղային տեխնիկային), պոպուլյար արվեստի նոր ուղղություններին և ոճերին, երբեմն կրթական ու գիտական համակարգերի նորույթներին ավելի շուտ էին ծանոթանում Սփյուռքի մեր հայրենակիցները, քան հայաստանաբնակներս: Եվ արևմտահայերենն էր առաջինը փորձում նոր հասկացությունների անվանումների համար հայերեն համարժեքներ գտնել կամ ստեղծել: Այժմ հստակ որոշել, թե վերջին շրջանի նորակազմությունները մեր լեզվի ո՞ր տարբերակում են ստեղծվել, դժվար է: Արդի բառապաշարում այդ բառերը դառնում են սովորական. սկսել է չգիտակցվել դրանց նորակազմություն լինելը, ինչպես՝ **բեռնարգելք** (եմբարգո), **դիպաշար** (սյուժե), **դրամատուն**, **զբոսավար** (գիդ), **ինքնաշարժ**, **ինքնաշխատ**, **լավարկում** (օպտիմալացում), **լրամաս** (աքսեսուար), **լրաքաղ** (դայջեստ), **ծխամուժ** (սմոգ), **կարգորոշում** (ռեգլամենտացիա), **ճեպագրույց** (բրիֆինգ), **մարտավարություն**, **միասեռական**, **մենատիրություն** (մոնոպոլիա), **պարբերանիշ** (պարագրաֆ), **վարակամերժություն** (իմունիտետ. ի դեպ, Ակադեմիական բառարանում կա *անվարակեղիություն* հոմանիշը, որը այնքան էլ հաջող չէ և երևույթը ճիշտ չի արտահայտում), **օդակայան** և այլն, և այլն:

Այս խմբի մեջ պետք է ներառել նաև այն կազմությունները, որոնք թեն նոր չեն, սակայն որոնց գործածությունը վերջին

շրջանում է ակտիվացել, օրինակ՝ **արտերկիր, գազաթնա-
ժողով, բարդույթ, երգահան, կարգախոս, ցնցակաթված,
առողջաբանություն** (հիգիենա) և այլն:

Մի հետաքրքիր երևույթ է նկատվում բառերի իմաստային տեղաշարժում: Շատ բառերի այնպիսի իմաստներ, որոնք նշում էին խորհրդային իրականության այլևայլ կողմեր, այսօր դարձել են ոչ գործուն, անցել են իմաստային հնաբանությունների շարքը: Սրան հակառակ՝ այլ բառերի շատ իմաստներ, որոնք թեև արձանագրված են խորհրդային շրջանի բառարաններում, սակայն գործուն չէին, այսօր հենց այդ իմաստներով են ավելի գործուն մեր լեզվում: Այդպիսի բնորոշ օրինակ է, ասենք, **շուկա, շուկայական, թվային, փաթեթ** բառերի իմաստային ընդլայնումը հայերենում: **Շուկա** բառի՝ իբրև տնտեսագիտական տերմինի լուսաբանման համար («ապրանքաշրջանառության ոլորտ») բառարաններում բերված է ընդամենը երկու օրինակ՝ *արտաքին շուկա, ներքին շուկա*: Այժմ **շուկա** և **շուկայական** բառերը մտնում են բազմաթիվ կայուն և ազատ կապակցությունների մեջ, որոնց մի մասը ժամանակին կարող էր թվալ տարօրինակ և նույնիսկ անհեթեթ, ինչպես՝ *արժույթի շուկա, իրացման շուկա, արժեթղթերի շուկա, հումքի շուկա, հայաստանյան շուկա, երկրորդային շուկա, ազատ շուկա* և նույնիսկ՝ *իշխանական լիազորությունների շուկա*, նաև՝ *շուկայական ռիսկեր, շուկայական հարաբերություններ, շուկայական մեթոդներ* և այլն: Կամ՝ **փաթեթ** բառի «առաջարկությունների՝ որոշումների՝ քայլերի ևն

խումբ՝ ամբողջություն» նշանակությամբ կազմված նոր կապակցությունները՝ *նախագծերի փաթեթ, օրինագծերի փաթեթ, բարեփոխումների փաթեթ, ծրագրերի փաթեթ* և այլն: **Թվային** բառը բառարաններում ունի փաստորեն միայն բառակազմական բացատրություն՝ «թվերին հատուկ, թվերի»: Հաշվողական տեխնիկայի բնագավառից այդ տերմինը («ինֆորմացիան էլեկտրոնային համակարգերի միջոցով երկակի՝ մեկերի և զրոների կոդի փոխարկող» իմաստով) տեղափոխվել է նաև առօրյա-կենցաղային լեզու, ապատերմինացվել է, ձեռք է բերել նաև փոխաբերական նշանակություն («նորագույն, լավ, կատարելագործված»)՝ *թվային ֆոտոխցիկ, թվային սարք, թվային հեռուստատեսություն, թվային ստորագրություն, թվային հեռախոսակապ, թվային ծրագրեր* և այլն:

Այսպիսով, պետք է նշենք, որ վերջին երեք-երեքուկես տասնամյակներում մեր լեզվում կատարվել են մի շարք տեղաշարժեր:

- Լեզվի ակտիվ բառապաշարից ոչ գործուն բառաշերտ են դուրս մղվել, պատմաբառեր են դարձել խորհրդային իրականությունը արտացոլող հարյուրավոր և հարյուրավոր բառեր ու բառիմաստներ (այսպես կոչված սովետիզմները):
- Նվազել է ռուսերենի դերը՝ որպես հիմնական փոխատու և միջնորդ լեզու: Այսօր նոր հասկացությունների հետ նոր բառերը առավելաբար փոխառվում են եվրոպական

լեզուներից և առանձնապես անմիջականորեն անգլերենից: Բառային կամ կառուցվածքային պատճենումները նույնպես հիմնականում անգլերենից են: Իսկ իմաստային պատճենումները արդեն գրեթե ամբողջապես անգլերենից են (թեև չի կարելի լիովին բացառել նաև ռուսերենի միջնորդությունը):

- Սրան զուգահեռ ակտիվացել է նաև հայերենի ներքին միջոցներով նոր բառեր կերտելու և փոխառությունները հայերեն համարժեքներով փոխարինելու գործընթացը: Այս ասպարեզում առանձնակի է արևմտահայերենի գործոնը:
- Նկատելի է հատկապես քաղաքական, տնտեսական, հասարակագիտական, մասամբ մշակութային և որոշ տեխնիկական տերմինների ապատերմինացումը և լեզվի համագործածական բառաշերտ ներթափանցումը (*թվային, էկոլոգիական, շուկայական* ևն): Մեծացել է դրանց կապակցելիությունը. այդ բառերով այժմ անընդհատ կազմվում են նորանոր կայուն և ազատ կապակցություններ:
- Հայերեն ածանցներին զուգահեռ ավելացել է մի շարք փոխառյալ արմատների, ածանցների և ածանցակերպների բառակազմական ակտիվությունը (*մեղիա-, էկո-, էթնո-, շոու, բիզնես* ևն):

- Նորաբանությունների մի առանձին տեսակ, այսպես կոչված լայն առումով նորաբանություն պետք է համարվեն այն բառերն ու բառիմաստները, որոնք խորհրդային շրջանում ունեին գործածության որոշակի սահմանափակումներ՝ պայմանավորված արտալեզվական գործոններով, և որոնց ակտիվությունն այսօր բազմակի անգամ ավելացել է. ոչ գործուն բառապաշարից սրանք վերադարձել են համագործածական բառերի շարքը:

Բանալի բառեր - արդի հայերենի բառապաշար, արևմտահայերենի բառապաշար, տեղաշարժեր բառապաշարի շերտերում, նորաբանություններ, պատճենումներ, փոխառություններ, իմաստային տեղաշարժեր, ապատերմինացում:

Manuk Felekyan – Basic Trends in the Evolution of the Vocabulary of Modern Armenian. - This article discusses the vocabulary shifts of modern Armenian in the last 3 to 4 decades, and the main tools and trends of the vocabulary development.

Key words - vocabulary of Modern Armenian, vocabulary of Western Armenian, shifts in the layers of language, neologisms, calques, borrowings, semantic shifts, determinization.

Манук Фелекян – Основные тенденции развития лексики современного армянского языка. - В статье рассмотрены сдвиги в лексике современного армянского языка, произошедшие за последние 3-4 десятилетия, после приобретения независимости Арменией. Выявлены основные семантические процессы и тенденции развития лексики армянского языка,

средства усовершенствования словарного состава восточноармянского литературного языка.

Ключевые слова - лексика современного армянского языка, лексика западноармянского языка, семантические процессы в словарном запасе, неологизмы, словообразовательные и семантические кальки, заимствования, расширение значения слова, переосмысление слова, детерминологизация.

ԲԱՌԵՐԻ ՀՆԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Լուիզա Մելքոնյան (ԵՊՀ)

Բառապաշարը՝ իբրև բաց համակարգ, արագ է ենթարկվում արտալեզվական գործոնների ազդեցությանը, և կյանքի բոլոր փոփոխությունները առաջին հերթին իրենց արտացոլումն են գտնում հենց լեզվի բառապաշարի մեջ¹:

Լեզվի բառապաշարում տեղի ունեցող փոփոխություններն ուսումնասիրելիս հիմնականում կարևորվում և ուշադրության է արժանանում նոր բառերի ստեղծման և դրանցով բառապաշարի համալրման գործընթացը, սակայն բառային կազմի ընդհանուր զարգացումն ու կատարելագործումը ընթանում են նաև բառապաշարի «բեռնաթափման» միջոցով. այսինքն՝ նկատվում է բառային միավորների անցում բառապաշարի գործուն շերտից ոչ գործուն բառաշերտ կամ բառապաշարի մի շերտից մեկ այլ շերտ: Ընդհանուր առմամբ տեղի է ունենում բառերի հնացում. գործածությունից դուրս եկած, հնացած բառերը համալրում են հնաբանությունների շարքը՝ դառնալով ոչ գործուն բառաշերտի միավոր:

¹ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 167: **Համբարձումյան Վ.**, Լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների մասին, ՀԼԳԴ, Եր., 1978:

Մենք անդրադառնում ենք այն գործոններին, որոնք պատճառ են դառնում բառերի հնացման: Բառերի հնացումը տեղի է ունենում ներլեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությամբ: Էդ. Ադայանը բառերի հնացման համար **ներլեզվական** է համարում այն գործոնները, որոնք «զանազան կարգի փոփոխություններ են առաջացնում բառապաշարի մեջ՝ բառապաշարի կատարելագործման ու մշակման ներքին պահանջների թելադրանքով: Արտալեզվական գործոնները հասարակական կյանքում երևան եկող այն բոլոր հանգամանքներն են, որոնք առաջ են բերում առարկաների, երևույթների, կենցաղի, քաղաքական կյանքի փոփոխություններ, այսինքն՝ առարկան, երևույթը դադարում են գոյություն ունենալ, և գործածությունից դուրս է գալիս նաև դրանք անվանող բառը: Փաստորեն «...հնանում են ոչ թե բառերը, այլ նրանց ցույց տված առարկաները, երևույթները, գաղափարները, պետական-վարչական մարմինները և այլն»¹: Սակայն նկատենք, որ բառերի անցումը ոչ գործուն բառաշերտ առավելապես տեղի է ունենում **ներլեզվական** գործոնների ազդեցությամբ. մի բառային միավորի փոփարինումը մի ուրիշով պայմանավորված է այն հանգամանքով, որ լեզուն, ձգտելով նորացման ու զարգացման, նախապատվությունը տալիս է նոր՝ հասկացությանը առավել համապատասխան կամ արտահայտիչ ձևերին, որի հետևանքով էլ որոշ ձևեր դուրս են մղվում գործածությունից:

¹ Նույն տեղում, էջ 202:

Լեզվի զարգացման արդի փուլում բառերի հնացման, ոչ գործուն բառաշերտին անցնելու գործընթացի համար որպես ներլեզվական գործոն ենք առանձնացրել փոխառյալ բառերի թարգմանությունը, որի արդյունքը լինում է այն, որ երբ ստեղծվում է օտար բառի հայերեն համարժեքը, մինչ այդ գործածական փոխառությունը համարվում է օտարաբանություն և մերժելի գործածության առումով. օտար բառը դուրս է գալիս գործածությունից ու դառնում հնաբանություն: Լայն առումով մենք հնացած ենք համարում այն բառերը, որոնք գործածության համար արդեն հանձնարարելի չեն, գրական լեզվում մերժելի միավորներ են և պատկանում են ոչ գործուն բառաշերտին: Ինչպես նկատում է Էդ. Աղայանը, իսկապես հնացած կարելի է համարել հենց այն բառերը, որոնք հնացել են ներլեզվական գործոնների ազդեցությամբ. այսինքն՝ փոխարինվել են բառային նոր տարբերակներով, իսկ այն բառերը, որոնց հնացման պատճառը արտալեզվական գործոններն են, կարելի է հնաբանություն համարել պայմանականորեն. դրանք կարող են գործածվել այն բոլոր դեպքերում, երբ խոսքը վերաբերում է այդ բառերի անվանած առարկաներին ու երևույթներին¹:

Փոխառություն-օտարաբանություն-հայերեն համարժեք փոխհարաբերության խնդիրը լեզվաբանության ամենաքննվող թեմաներից է, որի վերաբերյալ տեսակետները բազմազան են: Մեր նպատակը օտար բառերը թարգմանել-

¹ Տե՛ս **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., էջ 203:

չթարգմանելու հարցը քննելը չէ. մենք դրան անդրադառնում ենք միայն այն առումով, որ այդ գործընթացը բառերի (այս պարագայում՝ փոխառությունների) հնացման պատճառներից մեկն է:

Վերջին երկու տասնամյակում *հայերենը* անհարկի օտար բառերից մաքրելու դրական միտմանը զուգահեռ նկատվեց ծայրահեղական մի ձգտում՝ բոլոր փոխառյալ, այդ թվում՝ վաղուց լայնորեն գործածվող, մեր բառապաշարին արդեն մերված բառերը անպայման փոխարինել հայերեն տարբերակներով: Սակայն նկատենք, որ օտար բառերից շատերը ոչ միայն չեն հակասում մեր ազգային լեզվի օրինաչափություններին, այլև հեշտությամբ ենթարկվում են քերականական կանոններին և լիարժեք արտահայտում են իրենց անվանած հասկացության իմաստը: Անհրաժեշտ է նկատել, որ բառարանում արձանագրված օտար բառերից շատերը աստիճանաբար փոխարինվում են հայերեն համարժեք տարբերակներով, ինչպես՝ *սքայի-տեսակապ, կոմպլեքս-բարդույթ, ինվեստիցիա-ներդրում*: Օտար բառի հայերեն համարժեքի ստեղծումը իհարկե նպաստում է ոչ միայն լեզվի մաքրության պահպանմանը, այլև բառապաշարի հարստացմանը: Սակայն պետք է նկատել, որ երբեմն հայերեն համարժեքները կա՛մ բառակազմական առումով ճկուն չեն, կա՛մ իմաստային առումով լիովին չեն համապատասխանում իրենց անվանած հասկացության բուն նշանակությանը: Որոշ ժամանակ հայերեն համարժեքը օտար բառի հետ հանդես է գալիս որպես հավասարարժեք

հոմանշային եզր, կամ այդ ձևերը առանձնանում են միայն նրանով, որ կիրառվում են տարբեր ոճերում: Ժամանակի ընթացքում դրանցից մեկը հաղթող է դառնում՝ դուրս մղելով մյուսին, և գործածությունից դուրս եկած բառը անցնում է ոչ գործուն բառաշերտ, հնանում է: Սակայն միշտ չէ, որ հաղթողը լինում է հայերեն տարբերակը: Նախ, որպես նոր բառ՝ այն դժվարությամբ է ընդունվում հանրության կողմից, քանի որ վերջինս լեզվական հարցերում ավելի պահպանողական է և հեշտորեն չի հրաժարվում արդեն ընդունած օտար բառից: Այնուհետև՝ նորաստեղծ հայերեն բառը պետք է հնարավորինս կարճ և բարեհունչ լինի (երկար և դժվար արտաբերվող բառերը կենսունակ չեն) և, ամենակարևորը, ճիշտ և լիովին արտահայտի իր անվանած հասկացությունը: Նորաստեղծ հաջող բառի տարածման և հաստատման գործում կարևոր է նաև այն, որ նոր բառը մշտական գործածություն ունենա, անընդ-հատ կիրառվի խոսքում. իսկ այդ գործընթացում բավակա-նին մեծ է ստեղծագործ անհատների, զանգվածային լրատ-վամիջոցների դերը. պարբերաբար կարդալով, լսելով՝ հանրությունը «ընտելանում» է նոր բառին և ընդունում այն՝ որպես համագործածական բառ: Այդպես **համակարգիչ**-ը աստիճանաբար դուրս է մղում *kompyuter*-ին, **պատճենա-հանում**-ը՝ *xerox*-ին, **համացանց**-ը՝ *internet*-ին, **գործարար**-ը՝ *բիզնեսմեն*-ին, **տեսահոլովակ**-ը՝ *клип*-ին (թեև երկու ձևերն էլ գործածվում են՝ երբեմն նաև նույն հոդվածում. օտար բառեր գործածելու սովորույթը դեռ պահպանվում է): Խոսքի մաքրությանը հետևողները խուսափում են դրանց

գործածությունից (համենայն դեպս՝ գրավոր խոսքում): Այս դեպքում արդեն պետք է տարբերակել փոխառությունը օտարաբանությունից. երբ օտար բառը փոխարինվում է հայերեն համարժեքով և սկսում է գործածվել դրան զուգահեռ, դառնում է օտարաբանություն¹: Ժամանակի ընթացքում փոխառությունների մի մասը վերածվում է օտարաբանությունների, և այդ դեպքում օտար բառի գործածությունը դառնում է մերժելի. դրանք համալրում են բառապաշարի ոչ գործուն շերտը, հնանում են:

Օտարաբանության դեմ պայքարի և լեզուն անհարկի փոխառություններից զերծ պահելու հարցը միշտ էլ եղել է քննարկման առարկա տարբեր ժամանակաշրջաններում: Անհարկի օտար բառերի ներմուծումը աղավաղում է մեր լեզուն, և դրա դեմ պետք է շարունակական պայքար տարվի: Սակայն ճիշտ չէ նաև ընդհանրապես խուսափել անհրաժեշտ փոխառություններից և բոլոր օտար ու փոխառյալ բառերը թարգմանել հայերեն: Այդ մոտեցումը միայն աղքատացնում է լեզուն, թուլացնում նրա արտահայտչական ճկունությունը և դատապարտում ինքնամեկուսացման:

Եվ պետք է նկատել, որ երբեմն փոխառության հայերեն համարժեքը կա՛մ անբարեհունչ, երկար լինելու պատճառով չի ընդունվում հանրության կողմից և չի դառնում համա-

¹ Այս մասին տե՛ս **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 152:

գործածական բառ, կա՛մ էլ ոչ միշտ է լիովին արտահայտում օտար բառի իմաստային ամբողջ դաշտը. երբեմն իմաստային որոշ նրբերանգներ հայերեն բառում չեն արտահայտվում. ասենք, դժվար է թարգմանել *շոու* բառը, *շոումեն*, *բիզնես*, *պրոդյուսեր*, *վիրտուալ*, *սերիալ*, *դիզայներ*, *քաստինգ* բառերը, իսկ առաջարկվող հայերեն տարբերակներն էլ իմաստը ամբողջությամբ չեն արտահայտում. ասենք՝ *դիզայներ* բառի համար գործածում են կա՛մ *դերձակ*, կա՛մ *ձևավորող*, կա՛մ *գեղարար* տարբերակները, սակայն *դիզայները* միայն *դերձակը* կամ միայն *ձևավորողը* չէ. այդ բառի մեջ հասկացվում են այդ բոլոր իմաստները միաժամանակ. *սերիալ* բառի համար ստեղծվել է *հեռուստանովել* տարբերակը, որը, սակայն, իմաստային առումով այնքան էլ համարժեք չէ. *հեռուստանովել* կարող են կոչվել հեռուստատեսային տարատեսակ հաղորդաշարեր, որոնք շարունակական բնույթ ունեն. *սերիալը* որոշակի առանձնահատկություններ ունեցող հեռուստատեսային ֆիլմ է և կարող է անվանվել հենց այդպես՝ *սերիալ*: Երբեմն փոխառյալ բառի իմաստը արտահայտելու համար նկարագրական կառույց են գործածում, այսինքն՝ հնարավոր չէ այդ իմաստն արտահայտել մեկ բառով, ինչպես՝ *բիծուտերիա* - ոչ թանկարժեք զարդեր, *քաստինգ* - դերասանների (աշխատողների) ընտրություն¹: Այս բառերը դժվար է բնութագրել

¹ *Քաստինգ* բառի համար Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերենի բառարան»-ում նշվում է *նախագտում* հայերեն տարբերակը, որը, սակայն, իմաստային առումով այնքան էլ համապատասխան չէ և կիրառության մեջ չի հանդիպում:

որպէս օտարաբանություն, գործածության առումով անհանձնարարելի և հետևաբար նաև՝ բառապաշարի ոչ գործուն շերտին պատկանող: Նկատենք նաև, որ *բիզնես* փոխառյալ բառի համար ունենք *գործարարություն* հայերեն տարբերակը, սակայն հայերեն բառը գործածության մեջ չի փոխարինում օտար բառին, մանավանդ բառակազմական բաղադրիչի դերում. օրինակ՝ «մարդը զբաղվում է *բիզնեսով*... մարդն ունի փոքր *բիզնես*, *բիզնես համաժողով*, *բիզնես քննարկում*» կառույցներում *գործարարություն* տարբերակը գործուն չէ և չի փոխարինում օտար բառին: Այս առումով նկատենք, որ կան բառեր, այդ թվում և **բիզնես** բառը, որոնք «Տերմինաբանական-ուղղագրական տեղեկատու»¹-ով հանձնարարելի չեն. սակայն կենդանի խոսքը փաստում է, որ օտար բառերի հայերեն տարբերակները երբեմն մնում են միայն որոշումների մեջ և կենդանի խոսքում դրսևորում չեն ստանում, օրինակ՝ օտար **պոնչիկ**, **վաֆլի**, **պրյանիկ**, **բուրիկ** բառերի փոխարեն այսուհետև գործածության են հանձնարարվում հայերեն **փքաբլիթ**, **փրփրահացիկ**, **քաղցրաբլիթ**, **օղաբլիթ** տարբերակները, սակայն դրանք գործածական ձևեր չեն. հետևաբար չենք կարող համապատասխան օտար անվանումները համարել հնացած կամ մերժելի: Նույն կերպ նաև որոշ տերմիններ թեև տերմինային ոլորտում ունեն հայերեն համարժեքներ, այնուամենայնիվ դրանք կենդանի հաղորդակցման մեջ չեն

¹ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 253:

հանդիպում. համապատասխան օտար անվանումներն են գործածական ձևեր, այսինքն՝ որքան էլ գործածության հանձնարարվեն **բկաբորբ, բկացավ, արյունակույտ, ստին-քաբորբ, կաթոցիկ, կարգավար, տեղեկույթ** հայերեն տարբերակները, այնուամենայնիվ դրանց համապատասխան օտար բառերը՝ **անգինա, դիֆտերիա, հեմատոմա, մաստիտ, պիպետ(կա), դիսպետչեր, ինֆորմացիա**, չեն հնանում և գործածության մեջ իրենց տեղը տակավին չեն զիջում: Թեև այս հայերեն տարբերակները կազմված են հայերենի բառակազմական սկզբունքներով, գուցե նաև իմաստային առումով համարժեք են ու բարեհունչ, սակայն հանրորեն չեն ճանաչվում և չեն կիրառվում. հայերեն և փոխառյալ անվանումները լեզվի ներկա փուլում մրցակցող տարբերակներ են:

Այսպիսով, նկատում ենք, որ փոխառյալ բառերը հայերեն տարբերակներով փոխարինելու հետևանքով դառնում են օտարաբանություններ՝ այնպիսի բառեր, որոնք գործածության առումով այլևս հանձնարարելի չեն և դուրս են մնում համագործածական բառաշերտից, համենայն դեպս գրավոր խոսքում՝ մասնավորապես գիտական, պաշտոնական ոճերում: Նշենք, որ այդ փոխառությունները երբևէ եղել են համագործածական միակ տարբերակը՝ իբրև որոշակի առարկաների ու երևույթների փոխառյալ անվանումներ, փոխառություններ, մինչև որ ստեղծվել է հայերեն համարժեքը: Նման տեղաշարժի հետևանքով ունե-

նում ենք մեծ թվով բառեր, որոնք դուրս են գալիս գործածությունից, անցում կատարում ոչ գործուն բառաշերտ և որպես հնացած բառատարբերակներ՝ արդեն անցնում են հնաբառերի շարքը: Ինչպես նշում է Հ. Օհանյանը, «Պասսիվ բառապաշարի մեջ ամենից առաջ մտնում են հնացած և *գործածությունից դուրս եկող* բառերը»¹ (ընդգծ. – Լ. Մ.): Այսինքն՝ լեզվի զարգացման մի որոշակի փուլում միևնույն իմաստով կարող են զուգահեռաբար գործածվել բառային երկու միավորներն էլ՝ և՛ նորաստեղծ հայերեն համարժեքը, և՛ օտար բառը, ինչպես՝ **լրագրող//ժուռնալիստ, իմպուլս//ազդակ, վերջնարկ//ֆինիշ, տեղեկույթ//ինֆորմացիա, կարգավար//դիսպետչեր, մտածելակերպ//մենթալիտետ, կառավարում//մենեջմենտ** և այլն: Ժամանակի ընթացքում օտար բառերը աստիճանաբար զիջում են իրենց դիրքերը, դուրս են գալիս գործածությունից (նկատի ունենք գրավոր լեզուն), անցնում հնացած բառերի շարքը: Մակայն նկատենք, որ բանավոր խոսքում դրանք կարող են շարունակել կիրառվել՝ պայմանավորված լեզվական ավանդույթով, խոսողների ճաշակով ու կրթության աստիճանով, գործածության ոլորտով:

Այսօր նոր բառային տարբերակներով փոխարինվել են նաև որոշ հայերեն բառեր. այս դեպքում հետաքրքիր է, որ այդ բառերի անվանած առարկաներն ու հասկացությունները նույնն են մնացել, օրինակ՝ **վարսավիրանոց** բառն

¹ **Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 36:

այսօր գործածվում է գրեթե միայն բանավոր հաղորդակցման մեջ, իսկ գրավոր խոսքում այն փոխարինվել է **գեղեցկության սրահ, գեղեցկության կենտրոն, ՄՊԱ կենտրոն** բառակապակցական անվանումներով, նույն կերպ և **վարսավիրը** սկսել է անվանվել **վարսահարդար, ոճաբան** բառերով: Եվ հակառակը՝ հնանում է հասկացությունը, օրինակ՝ **միջնակարգ դպրոց** անվանումն այսօր արդեն հնանում է, քանի որ փոխվել է դպրոցի կառուցվածքը. միջնակարգ՝ որպես այդպիսին, գրեթե չկա. այսօր դպրոցը կա՛մ հիմնական է, կա՛մ ավագ:

Դիտարկումները ցույց են տալիս, որ արդի փուլում բառերի հնացման պատճառների մեջ գերիշխող են ներլեզվական գործոնները. լեզվում բառային միավորների փոխարինումը նոր տարբերակներով պայմանավորված է լեզվի՝ առավել համապատասխան ու արտահայտիչ ձևերի ընտրությամբ. գերազանցապես դա կատարվում է օտար բառերի թարգմանության միջոցով:

Բառերի հնացման արտալեզվական գործոններն այսօր ակտիվ չեն, թեև դրանք նույնպես ընկած են որոշակի շերտի բառերի հնացման հիմքում: Դրանցից են պատմաբաները¹, որոնք անվանում են այնպիսի առարկաներ, հասկացություններ ու երևույթներ, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում արդեն դուրս են եկել գործածությունից, և

¹ Պատմաբաների և հնաբաների մասին ավելի մանրամասն տե՛ս **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., էջ 202-203:

հետևաբար դրանց անվանումները նույնպես դուրս են մղվել լեզվից, անցել հնաբանությունների շարքը:

90-ական թվականներից՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով վերացան այդ հասարակարգին բնորոշ բազմաթիվ իրողություններ ու երևույթներ: Փոխվեց նաև լեզվի բառապաշարը. այդ ամենի հետ գործածությունից դուրս եկան նաև դրանք անվանող բառային միավորները՝ դառնալով պատմաբառեր: Համագործածական բառաշերտից ոչ գործուն շերտին անցան բազմաթիվ բառեր ու արտահայտություններ, ինչպես՝ **կոմունիզմ, կոմունիստ, կոմունիստական, սոցիալիզմ, սոցիալիստ, սովխոզ, կոլխոզ, հոկտեմբերիկ, պիոներ, կոմերիտական, կոմկուս, հնգամյա պլան, կարմիր բանակ, լենինյան օրդեն, կոմկուսի առաջին քարտուղար, սոցիալիստական աշխատանքի հերոս, պիոներպալատ, լենինյան, կոմսոմոլ, գյուղսովետ, քաղսովետ, գործկոմ, ժողկրթբաժին, մինիստր, վզկապ** և այլն:

Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո՝ անկախության առաջին տարիներին, երևան եկան նոր առարկաներ, երևույթներ, որոնց անվանումները նորաբանություն էին լեզվի զարգացման այդ փուլում, բայց այսօր արդեն այդ անվանումները հնաբանություն են, որովհետև դրանց անվանած առարկաներն ու երևույթները դուրս են եկել հասարակության կյանքից:

90-ականներին երկրի ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում տարածված և համընդհանուր երևույթ էր էլեկտրաէներգիայի պարբերաբար անջատումը. այսօր այդ երևույթը վերացել է, հետևաբար հնացել է նաև այդ երևույթն անվանող **հովհարային անջատում** արտահայտությունը, որը այդ տարիներին նոր հայտնված համագործածական բառ էր, հնացել են նաև այդ տարիներին տարածված ու գործածական մի խումբ բառեր, ինչպես՝ **գրամեքենա**, **էլեկտրոնային հաշվիչ մեքենա** (այս երկու առարկաներն էլ այսօր փոխարինվել են համակարգչով), **բանան շալվար**, **ֆուջիկա**, **ալադին** (վերջին երկուսը նավթով աշխատող վառարանների տեսակներ են, որոնք շատ տարածված էին այդ տարիներին), **լամպ** (ճրագով), **ադապտեր** (սարք, որը ուժեղացնող համակարգով վերարտադրում է ձայնապնակի վրա գրանցվածը), **կոմիսիոն**, **կոմիսիոներ**, **փեյջեր**, **տալոն** (կտրոն, որով ստանում էին տարբեր սննդամթերքներ, հատկապես հաց), **լևի լույս** (այս բառը ռուսերենի *левый* - «ձախ, գաղտնի» բառից է. նշանակում է հոսանքի գաղտնի գիծ), **վարյունկա** (եփած ջինս), **դիսկոտեկ // դիսկոտեկա** (այս բառն այսօր փոխարինվել է *ակումբ* բառով, թեև հասկացությունը գրեթե նույնն է՝ տեղ, ուր գնում են պարելու, զվարճանալու), **սեդանիկ** (փոքրիկ վաճառասեդան, առևտրի տաղավար) և այլն:

Փաստորեն երկրի և ժողովրդի կյանքում տեղի ունեցող հասարակարգային փոփոխությունները անմիջականորեն արտահայտվում են լեզվի բառային կազմում, և ինչքան

արագ են տեղի ունենում այդ փոփոխությունները, համապատասխան ձևով էլ փոխվում է լեզվի բառապաշարը:

Նկատենք նաև, որ բառապաշարի թարմացման և նորացման գործընթացում որոշ առարկաների օտար անվանումները փոխարինվեցին հայերեն համարժեքներով, ինչպես՝ **ունիվերմազ//հանրախանութ, պլաստիկա//ձայնապնակ, վիդեոկասետ//տեսաերիզ//տեսաստուփ, վիդեոմագնիտոֆոն//տեսաձայնագրիչ//տեսախաղարկիչ, ֆլուպի//կրիչ** և այլն: Սակայն այսօր այս բառերը՝ և՛ օտար անվանումները, և՛ հայերեն տարբերակները, արդեն հնաբանություն են, դուրս են եկել գործածությունից, անցել են բառապաշարի ոչ գործուն շերտ: Պատճառը առավելապես այն է, որ այդ բառերի անվանած առարկաներն ու հասկացությունները՝ *պլաստիկան, վիդեոկասետը, ֆլուպին*, հնացել են, դուրս են եկել գործածությունից, երբեմն էլ հասկացությունը պահպանվել է, սակայն փոխվել է անվանումը, ինչպես՝ *ունիվերմազ//հանրախանութ//սուպերմարկետ//առևտրի կենտրոն* և այլն:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք փաստել, որ թեև բառապաշարային տեղաշարժերի հիմքում ընդհանուր առմամբ ընկած են արտալեզվական գործոնները, սակայն ավելի որոշակի փոփոխության, այն է՝ բառային միավորների հնացման, ոչ գործուն բառաշերտին անցնելու հիմքում առավելապես ընկած են ներլեզվական գործոնները, որով էլ պայմանավորված՝ լեզվի բառային կազմը մշտա-

պէս փոփոխվում է: Նոր երկան եկած առարկաներն ու երևույթները հիմնականում երկրի հասարակական կյանքում հայտնվում են դրսի ազդեցությամբ և սկզբնապէս իրենց հետ բերում են իրենց օտարալեզու անվանումները: Հետագայում այդ օտար բառերը փոխարինվում են հայերեն համարժեքներով, դուրս գալիս գործածությունից, հնանում են և անցնում բառապաշարի ոչ գործուն շերտ:

Բանալի բառեր – բառապաշար, նորաբանություն, լեզվական գործոններ, արտալեզվական գործոններ, թարգմանություն, փոխառյալ բառեր, հայերեն համարժեք, հնաբանություններ:

Luiza Melqonyan – A few factors for words obsolescence. Transformation of words to the non-active layer of word –stock takes place under the influence of inner-lingual factors. In general as a result of foreign word translation, when its Armenian equivalent is being created and the borrowings came out of usage, transforms to the non-active layer of word stock and is being added to archaisms.

Out- lingual factors are all the circumstances of social life, which bring changes in different subjects, phenomena, way of life, political life; i.e. the subject, phenomena stops its existence and the word denoting that subject or phenomena also goes out of usage.

Key words – lexicon, neologism, inner-lingual factors, out-lingual factors, translation, borrowings, armenian equivalent, archaisms.

Луиза Мелконян – Некоторые факторы устаревания слов. – Проникновение слов в недействительный слой лексики происходит под влиянием, в частности в результате перевода заимствованного иностранного слова, когда создается его армянский эквивалент и заимствование уже выходит из употребления, проникает в недействительный слой лексики, пополняя, ряды архаичных слов.

Внеязыковыми факторами являются все те обстоятельства в социальной жизни, в результате которых возникают изменения в предметах, явлениях, в политической и бытовой жизни, т.е. предмет, явление перестает существовать и из употребления выходит также то слово, которое обозначает этот предмет или явление.

Ключевые слова - лексика, неологизм, языковые факторы, внеязыковые факторы, перевод, заимствованные слова, армянский эквивалент, архаизмы.

**ՕՏԱՐ ԲԱՌԵՐ. ԲՆՈՐՈՇՄԱՆ, ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

Լիանա Մարգարյան (ԵՊՀ)

Լեզվի բառապաշարը արագ փոփոխվող համակարգ է: Այն մշտապես համալրվում է այլ լեզուներից փոխառված բառերով: Այդ համալրումը անխուսափելի, բնականոն, ինչ-որ առումով նաև անհրաժեշտ գործընթաց է: Այն նաև լեզվի բառային կազմը հարստացնելու հիմնական միջոցներից է: Այլ լեզուների համեմատությամբ հայերենը քիչ է դիմում փոխառությունների, ինչը մի քանի պատճառ ունի: **Նախ**՝ մեզանում լեզուն ընկալվում է գոյության և ինքնապահպանության միջոց, ուստի օտարամոծությունները զսպելը տասնամյակների ընթացքում լեզվահոգեբանությունից վերածվել է հստակ գիտակցված լեզվաքաղաքականության: **Ապա**՝ հայերենն ունի բառակազմական լայն հնարավորություններ, որոնց միջոցով ստեպ-ստեպ ստեղծվում են ճկուն համարժեքներ: **Հետո**՝ օտարամուտ բառերը հայերենացնելու գործում մեծ է արևմտահայերենի արդյունավետ ներկայությունը: Այսուհանդերձ, մեր օրերում օտար բառերի մուտքը հայերենի բառապաշար գրեթե ամենօրյա գործընթաց է: Դա ժամանակ առ ժամանակ առիթ է տալիս անդրադառնալու կուտակված ինչ-ինչ հարցերի: Ու թեև քիչ չեն քննարկումները բառագիտական այլևայլ հարցերի

վերաբերյալ¹, այսուհանդերձ բառապաշարի նորմավորման խնդիրները կան: Խնդրահարույց են՝ **1) օտար բառ – օտարաբանություն – փոխառություն** տերմինների հստակեցումը, **2) օտար բառ – հայերեն համարժեք** հարաբերությունը, **3) օտար բառերի գրությունը** և **տառադարձությունը**:

1) Հստակ չէ օտար բառ տերմինի ընկալումը: Այն գործածվում է **օտարաբանություն** կամ **փոխառություն** տերմինների նշանակությամբ: Հայ լեզվաբանները գրեթե առանց բացատրության փոխառություններ են անվանում օտար լեզուներից վերցված այն բառերը, որոնք մերվում են լեզվի բառապաշարին և դառնում դրա անբաժան միավոր²: Ընդ որում, փոխառված բառը հարմարվում է այդ լեզվի արտասանական, բառակազմական և քերականական օրինաչափություններին³: Իբրև այդպիսիք են ներկայացվում **տրակտոր, կոմբայն, մատերիա, պրոպագանդա, սոցիալիզմ**,

¹ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984: **Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման ուղիները, Եր., 1982: **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, Եր., 2004: **Մարտիրոսյան Ա.**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007: **Հովհաննիսյան Ն., Տիտյան Ս., Գալստյան Ա.**, Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի քննություն, Եր., 2014: **Մելքոնյան Լ.**, Բառապաշարային տեղաշարժերը արդի հայերենում (ատենախոս.), Եր., 2014: **Տիտյան Ս.**, Հայերենի տերմինագիտության հարցեր, Եր., 2016 և այլք:

² Տե՛ս **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., էջ 175 – 176: **Սուքիասյան Ա.**, նշվ. աշխ., էջ 191:

³ Տե՛ս **Սուքիասյան Ա.**, նույն տեղը: **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 614:

կոնցերտ և այլ բառեր, որոնց մի մասը անցյալ դարի 50-80-ականն թթ. լեզվում գործածվող միավորներ են: Օրինակները, սակայն, շփոթություն են ստեղծում. ստացվում է՝ առանձին բառերի դեպքում հավասարության նշան է դրվում **փոխառություն-օտարաբանություն** տերմինների միջև, քանի որ, օրինակ, **կոնցերտ** բառը տարածամանակյա տեսանկյունից անգամ չէր կարող դիտարկվել որպես փոխառություն. 60-ականների բառարաններում արդեն իսկ արձանագրված է **համերգ** (նկատի չունենք **կոնցերտ** երաժշտական ստեղծագործության ժանրը) համարժեքը:

Մեկ այլ մոտեցմամբ՝ նույնացվում են **օտար բառ** և **օտարաբանություն** հասկացությունները: Հոդվածներից մեկում կարդում ենք. «Հայագիտության մեջ փոխառություն և օտար բառ եզրույթները նախկինում հոմանիշներ էին, սակայն վերջին տարիներին փորձ է արվում ճշգրտելու դրանց իմաստային սահմանները: Եթե բառը այլ լեզվից ուղղակի կամ անուղղակի եղանակով է անցել հայերենին, և դրա դիմաց հայերենը մայրենի բառ դեռևս չի ստեղծել, փոխառություն է, օրինակ՝ **դոլար, եվրո, դոմա, բունդեսթագ, տատու**, իսկ օտար է այն բառը, որն ունի արդեն ընդհանուր գործածություն կամ այդպիսի միտում ունեցող մայրենի բառ, օրինակ՝ **կոմպյուտեր-համակարգիչ, սեսիա-նստաշրջան,**

**պրոցես-գործընթաց, բրիֆինգ-ձեպագրույց, օնլայն-առ-
ցանց»¹։ Նախ՝ ակնհայտ է, որ երկրորդները օտարաբանու-
թյուններ են, ապա՝ դժվար է համաձայնել, որ օրինակնե-
րում **տատու** և **դումա** կամ **պրոցես** և **սեսիա** բառերը
քննարկման առումով համարժեք են։ **Տատու** բառի **դաջ-
վածք** համարժեքը լեզուն վաղուց ունի (այլ հարց է, որ որոշ
շրջանակներ չեն գործածում)։ Սրան հակառակ՝ **պրոցես**
բառի **գործընթաց** տարբերակը գիտության առանձին ճյու-
ղերում չի կիրառվում իմաստային անհամապատասխա-
նության պատճառով (օր.՝ կրթական *գործընթաց, բայց՝*
բորբոքային *պրոցես*)։**

Մեկ այլ դեպքում փորձ է արվում տարբերակելու **օտարա-
բանություն-փոխառություն-էկզոտիզմ** հասկացություննե-
րը, որոնք դիտարկվում են որպես **օտար բառի** տեսակներ²։

Մեր տպավորությամբ՝ սա ոչ թե ընդհանուրի և մասնա-
վորի, այլ բառային առանձին՝ **օտար բառերի** շերտ առանձ-
նացնելու խնդիր է։ Այս հարցում առավել հակված ենք
պաշտպանելու ռուս լեզվաբանության մեջ իշխող տեսա-
կետը։ Ըստ ռուսերեն լեզվաբանական բառարաններից մե-
կի՝ փոխառություն են օտար լեզվի այն տարրերը (բառ,

¹ **Հայրապետյան Ա.**, Փոխառությունները որպես լեզվի հաղորդակցման գործառնության անընդհատության դրսևորում, «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», Եր., 2018, № 2, էջ 69։

² Տե՛ս **Քամայան Ա.**, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերական փորձ), «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրու-
թյուն», Եր., 2015, № 2, էջ 66-80։

ձևույթ, իմաստային միավոր), որոնք փոխանցվում են լեզվական շփումների արդյունքում և այնպես են ձուլվում լեզվի բառապաշարին, որ լեզվակիրները չեն գիտակցում դրանց օտար ծագումը: Մինչդեռ օտար բառերը պահպանում են իրենց բնորոշ արտասանական, ուղղագրական, նաև քերականական օտար «հետքերը»¹: Առավել համոզիչ է ռուս լեզվաբան Լ. Կոխիսիի բնորոշումը, որի համաձայն՝ ավելի նպատակային է փոխառություն անվանել լեզվական այն տարրերը, որոնք համապատասխանում են փոխառու լեզվի համակարգային՝ հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական հատկանիշներին: Մյուս դեպքերում, երբ խոսքը միայն բառային միավորը (**անվանողական նպատակով** - Լ. Ս.) վերցնելու մասին է, պետք է սահմանափակել «փոխառություն» տերմինի գործածությունը. **դրանք օտար բառեր են**: Այսինքն՝ օտար բառը չի մերվում լեզվի մյուս մակարդակներին, հնարավոր է՝ լինի անբարեհունչ, առաջացնի գրության և բառաձևերի կազմության դժվարություններ, չունենա բառակազմական ներուժ. այս բոլոր դեպքերում գործածությունը պայմանավորված է բառի սոսկ **անվանողական գործառնությամբ**²:

¹ Տե՛ս **Ярцева В. Н.**, Лингвистический энциклопедический словарь, М., 2002, էջ 158:

² Տե՛ս **Крысин Л. П.**, Русское слово, своё и чужое: Исследования по современному русскому языку и социолингвистике, М., 2004, էջ 25; նույնի՝ **Л. П. Крысин**, Иноязычные слова в современном русском языке, М., 1968, էջ 106: Նշենք, որ օտարաբանությունների դեպքում տեսակետները համընկնում են. դրանց համարժեքները լեզվում կան, գործուն են,

Այս մոտեցմամբ նախ՝ հստակ է նշվում բառային տարբեր իրողությունների սահմանափաժանը, ապա՝ այն հնարավորություն է տալիս փոքր-ինչ հավասարակշռելու ամեն օտար բառ անպայման «հայերենացնելու» միտումը, որով էլ պայմանավորված՝ լիարժեք դրսևորվում կամ չի դրսևորվում բառի ճշգրիտ իմաստը: Նաև՝ այսպիսի մոտեցմամբ զբաղմունքային-արհեստագործական և կամ որևէ գիտության ենթահամակարգերի բառապաշարի մի մեծ շերտ, որում քիչ չեն օտարամուտ բառերը, այնքան էլ վտանգավոր չեն, ինչպես երբեմն փորձ է արվում ներկայացնելու: Սա ելակետ ունենալով՝ կենսագործունեության տարբեր ոլորտներում ինչ-ինչ բառերի թարգմանությունը թերևս դառնում է անհարկի, քանի որ նեղ մասնագիտական տիրույթում հայերեն համարժեքները մնում են անկենսունակ: Որքան էլ **սմարթֆոն, տեխնոլոգիա, ռեյիեֆ, ֆեյսբուք** բառերի համար առաջարկվեն **խելախոս, արտադրաբանություն, ելեքք/ուռուցկանկար, երեսգիրք/դիմատետր** փոփոխակները, միևնույն է, օտար բառերը առաջիկայում անխոչընդոտ շարունակելու են կայուն գործածվել: Մի փաստ միայն. **տեխնոլոգիա** բառի համար դեռևս 1908 թ. հրատարակված օտար բառերի մի բառարանում առաջարկվում է

հանրահասկանալի են և տարածված, խոսքի գործառնական ոլորտներում ունեն կիրառության տարբեր նպատակներ:

արվեստագիտություն համարժեքը¹, 1912 թ. մեկ այլ բառաբանում՝ **արհեստաբանություն**-ը², մի երրորդում՝ **արտադրագիտություն/արտադրաբանություն**-ը: Բայց իմաստային անհամապատասխանության պատճառով բառերից ոչ մեկը չգործածվեց:

2. Օտար բառ-հայերեն համարժեք հարաբերության հարցը: Խնդիրը կարևորվում է հատկապես բառապաշարի զարգացման և կանոնարկման առումներով: Այս հարցերին անդրադարձող բոլոր լեզվաբաններն առանց բացառության նախանշում են հայերենի բառապաշարը հարստացնելու և կանոնավորելու երկու ճանապարհ՝ ամենից առաջ և գերազանցապես՝ հայերեն տարբերակների **ստեղծում**, ապա՝ **փոխառություն**: Այսպես: Հ. Բարսեղյանը «Տերմինաբանական ուղեցույց»-ում գրում է. «....գ) Հայոց լեզվի բառակազմական օրենքներով կազմել նոր տերմիններ ու բառեր կամ հաստատել ստեղծված այնպիսի տերմիններ ու բառեր, որոնք անհրաժեշտ են գիտության, կենցաղի, հասարակական կյանքի, արվեստի ու արտադրության մեջ: դ) Հայերենի բառապաշարի հարստացման աղբյուրը հիմնականում համարել ժամանակակից հայերենի բառային հիմնական ֆոնդը և բառային կազմը:Հնարավոր համարել բառական փոխառություններ կատարել նաև լեզուներից՝ նրանց տալով հայերենի արտասանական և ուղղագրական

¹ **Տեր-Ղազարեան Ա.**, Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի եւ գործածութեան մէջ մտած մտքերի ու դարձածքների, Թիֆլիս, 1908:

² **Մ. Յարութիւնեանց**, Բացատրական բառգիրք - Օտարազգի բառերի եւ օտարազգի բառերի ու դարձածքների, Ալեքսանդրապոլ, 1912:

ձև...»¹: Նույն պահանջն է դրվում նաև վերջին «Տեղեկատու»-ում: Կես դար հետո մոտեցումը կրկին նույնն է. «Բառային կազմի մշակումը, կարծում ենք, պիտի ընթանա երկու հիմնական ուղղությամբ. 1. ըստ ամենայնի օգտագործել ազգային բառակազմական հնարավորությունները: Հնարավոր սխալներն ու վրիպումները պիտի մղեն ոչ թե օտար անհասկանալի ու անհարմար տերմինը գործածելուն, այլ դրա հայերեն ճիշտ ու անհրաժեշտ համարժեքը ստեղծելուն, 2. չխուսափել անհրաժեշտ փոխառություններից»²: Անշուշտ, լեզուն անաղարտ պահելու արդար ձգտումը հարստացրել է մեր լեզվի բառային կազմը հայերեն հազարավոր նոր բառերով, որոնք հաղթել են և գործածվում են գրական լեզվում: Դրանց զգալի մասը տարածված է, հանրորեն գիտակցված, համապատասխանում է մեր լեզվի բառակազմական և իմաստաբանական նորմերին, մեծ մասամբ հստակ արտահայտում է հասկացության բովանդակությունը, ձկուն է, բարեհունչ, դյուրընկալ: Մի կարևոր հանգամանք ևս. դրանք հաճախ լրիվ կամ մասնակի պատճենումով կազմված բառեր են. ասել է թե՛ հայերեն համարժեքը շատ դեպքերում ճշգրտորեն փոխանցում է փոխատու լեզվում օտար բառի ունեցած նշանակությունը, ինչպես, օրինակ՝ *դուրլիկատ - կրկնօրինակ, ինովացիա - նորարարություն, իդենտիֆիկացիա - նույնականացում, ֆիքսինգ -*

¹ **Բաբսեղյան Հ.**, Տերմինաբանական ուղեցույց, Եր., 1964, էջ 10-11:

² **Ավետիսյան Յու.**, Դիտարկումներ հայերենի բարձրագույն խորհրդի որոշումների վերաբերյալ (բառային կազմ և քերականություն), «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», Եր., 2017, № 3, էջ 27:

ամբազրում, էքստրադիցիա – արտահանձնում, ինտեգրացիա-համարկում, կինոլոգ - շնագետ/-բան, տրանսպլանտացիա - փոխպատվաստում և այլն: Գուցե որոշ օրինակներ անհամոզիչ թվան, այսուհանդերձ սուբյեկտիվ ընկալումները հաղթահարելու պարագայում հայերեն համարժեքների արտասանական, իմաստային, բառակազմական և քերականական առավելությունները ակնհայտորեն անհերքելի են: Բացի այդ՝ պատահում է՝ օտար բառին զուգահեռ գործածվում է համարժեք կայուն բառակապակցական միավոր, որը երբեմն դուրս է մղում օտար բառը: Այսպիսի դեպքերը նույնպես ընդունելի են՝ հոգուտ և ի շահ բառի գործառական հնարավորությունների, ինչպես՝ *վականսիա - թափուր աշխատատեղ, քոփիոռայթ – հեղինակային իրավունք, քիլ(լ)եր - վարձու մարդասպան, պրակտիկում - գործնական դասընթաց* և այլն:

Սրանից բացի՝ կան շատ օտար բառեր, որոնք գործածվում են տարբեր իմաստներով: Ընդ որում, մեկ իմաստի համար լեզվում ստեղծվել է համարժեք միավորը, մյուսի համար՝ ոչ, ինչպես՝ **ֆունկցիա - գործառույթ**, բայց որպես մաթեմատիկական տերմին՝ գործածվում է միայն **ֆունկցիա**-ն, **կորպուս – մասնաշենք, հիմնականիք**, բայց որպես գորքի առանձին միավորի անվանում կամ դիվանագիտական տերմին՝ կիրառելի է միայն **կորպուս**-ը: Այսպես նաև՝ **մանիկյուր- մատնահարդարում, բայց՝ մանիկյուր - եղունգի լաք, արսուրդ - անհեթեթություն, բայց՝ արսուրդ - արվեստի**

ուղղություն, **ակցիա** - բաժնեթուղթ/արժեթուղթ, **բայց՝ ալ-ցիա** - տնտեսական կամ քաղաքական նպատակներ իրականացնելու համար գործողություն և այլն: Այսպիսի դեպքերում հայերեն տարբերակի գործածությունը ի՛ր տեղում միակ առաջնորդողը պետք է լինի:

Սակայն վերջին կես դարը գիտությունների աննախընթաց զարգացման շրջափուլն է, որում կուտակվում են հասկացությունների, իրերի, երևույթների ու հասարակական տեղաշարժերի հարյուրավոր անվանումներ: Եվ բնական է, որ հայոց լեզու պիտի մուտք գործեն նաև նորանոր օտար բառեր, որոնք «հայացնելու» ձգտումը ոչ միշտ է հաջողվելու: Իհարկե, բառային յուրաքանչյուր միավոր կարիք ունի առանձին քննարկման: Այսուհանդերձ, որոշ ընդհանուր գործոններ կարելի է առանձնացնել, ինչպես՝ հայերեն համարժեքի նշանակության մասնակի, երբեմն նաև լրիվ անհամապատասխանությունը, անբարեհնչությունը, դժվարարտասանելիությունը, նոր բառեր կազմելու անհնարինությունը: Այսպես՝ բառարաններից մեկում **էստակադա** (ձողերի վրա կառուցված հարթակ, որը ծառայում է ճանապարհները բարձրացնելուն) բառի հայերեն համարժեք է առաջարկվում **ցցաթումբ** նորակազմությունը: Զգալի է հայերեն տարբերակի իմաստային անհամապատասխանությունը: Նույնիսկ եթե փորձենք **ցցերի վրա կառուցված թումբ** իմաստով առաջնորդվել, միևնույնն է, իմաստային անհամարժեքությունը շատ հստակ է: Կամ՝ ընդամենը

վերջերս **վեթ(թ)ինգ** բառի համարժեք է առաջարկվել **քննագտություն/քննագտում** տարբերակը: Գուցե բառակազմական առումով **քննագտում**-ը առավել հարմար է, բայց արդյոք լիարժեք է փոխանցում հասկացության նշանակությունը: Համենայն դեպս, իրավագետները, որոնք իրենց ուղորտում հարյուրավոր հայերեն տերմիններ են ստեղծել և գործառել, ճշգրտության նկատառումով դեմ են այս տարբերակին: **Ռելիեֆ** բառի համար առաջարկվող **ուռուցկանկար** (նաև՝ **ելեջք**) համարժեքը ոչ միայն չի փոխանցում օտար բառի նշանակությունը, այլև դժվարարտասանելի, չտպավորվող, նաև անարտադրողական միավոր է: Կամ՝ **վիտամին** բառի համար, որը, այսպես ասած, բազմամյա փոխառություն է, ժամանակ առ ժամանակ առաջարկվում են **կենսահյուր/կենսիկ** տարբերակները: Դժվար է անգամ պատկերացնել, որ **վիտամին C**, **վիտամինազուրկ**, **վիտամինաքաղց** բառերը երբևէ կփոխարինվեն **կենսիկ C**, **կենսիկազուրկ/կենսահյութազուրկ**, **կենսահյութաքաղց** բառերով: Այսպես նաև՝ **ցունամի** – ցնցալիք, **սմարթֆոն** – խելախոս, **շոկ** – ցնցակաթված, **հեմոգլոբին** – արնագնդակիտ, **մետաստազ** – ախտափոխանցում, **սենսոր** – զգիչ, **մաստիտ** – կրծքագեղձաբորբ և այլն: Տերմինների թարգմանության գործում պետք է առաջնորդվել առավել խիստ չափանիշներով, դիմել համապատասխան մասնագետների խորհրդին: Այն բոլոր դեպքերում, երբ իմաստային որոշ անճշտություն և կամ մասնակի ճշտություն կա, պետք է գերծ մնալ համարժեքը պարտադրելու մտայնությունից՝ կրկին հո-

գուտ և ի շահ լեզվի. լեզվին պետք չեն անճիշտ կամ մոտավոր իմաստներ արտահայտող բառեր: Այս և նման դեպքերում օտար բառը, իր բոլոր «թերություններով» հանդերձ, հենց միայն իր անվանողական գործառնությամբ պետք է լինի միակ գործառնող տարբերակը:

3) Օտար բառերի գրության դժվարություններ: Խնդրահարույց են երկու իրողություն՝ **ա)** վերլուծական և հապավական մի շարք բարդությունների՝ գծիկով կամ անջատ գրությունը, **բ)** տառադարձությունը:

ա) Մի շարք օտար հապավումներ (**PR/P.R., CD, DVD, Wi-Fi, D.J.** և այլն) ձուլվել են մեր լեզվի բառապաշարի գործուն շերտին, սակայն հայերեն տեքստերում առավելապես զրկվում են լատինատառ: Սրանց գրությունը հստակեցնելու և միանշանակ դարձնելու միտումով առաջնորդվում ենք երկու հանգամանքով: **Նախ՝** վերը նշված բառամիավորները և օտարամուտ բառերն ընդհանրապես հայերենում պարզ բառեր են: Դրանք ընկալվում և գործածվում են ոչ թե որպես հապավական բարդություններ, այլ որպես պարզ բառեր: **Ապա՝** ակնհայտ է, որ **PR, CD, DVD, Wi-Fi, D.J.** և նման միավորներն ունեն բառային ինքնուրույն գործածություն: Ուստի հենց գործող կանոնի շրջանակում առաջարկում ենք այս բառամիավորների՝ միայն փոքրատառերով և միասին գրության տարբերակ՝ **փիառ, սիդի, դիվիդի, վայֆայ, դիջեյ:** Նույնիսկ եթե սրանց մի մասը դիտարկենք օտարաբանություններ, միևնույնն է, երբեմն ռճական ինչ-ինչ նպատակներով հայերեն գրելու անհրաժեշտություն է լինում:

Մի շարք օտար բառեր էլ փոխատու լեզվում կազմությամբ բարդ են և ունեն բաղադրիչների՝ գծիկով կամ անջատ գրություն, ինչպես՝ **hot dog, wats app, talk show, make up/ Make-Up, carte blanche, hat-trick, second hand** և այլն: Ընդհանրապես օտար բառերի գրության հարցերում երբեմն առաջնային են համարում օտար բառի բաղադրիչները **գիտակցել-չգիտակցելու, ստուգաբանելու** ինդիքը: Նույնիսկ եթե գիտակցել-չգիտակցելու հարցում անտեսենք լեզվակիրառողի անհատական գործոնը, ապա հասարակական և մշակութային տեղաշարժերի ազդեցությունը չնկատելը անհնար է: Եթե խորհրդային տարիներին մեծ էր ռուսերենի ազդեցությունը, և հարյուրավոր օտար բառերի գրությունը բացատրվում ու գիտակցվում էր հենց ռուսերենի միջոցով, ապա այսօր պատկերը որոշակիորեն փոխվել է: Ռուսերենին զուգահեռ՝ զգալիորեն գործուն է դարձել նաև անգլերենը, որից անմիջաբար արդի հայերենին են անցել բազմաթիվ բառեր: Ընդ որում, հանրության մի ստվար հատվածի համար այդ բառերը նույնքան հասկանալի են ու գիտակցվող: Անգլերեն իմացողը հասկանում է, որ **wats app**-ը (անգլերեն բառախաղ է՝ **App** բաղադրիչը **Up** բառաձևի արտասանական գրությունն է) բառացի նշանակում է *ի՞նչ նորություն, hot dog*-ը՝ *տաք շուն, hat-trick*-ը՝ *գլխարկով հնար, second hand*-ը՝ *երկրորդ ձեռք* ևն: Գրության հարցերը ճշտելիս նույնքան անօգուտ է օտար բառը ստուգաբանելը: Այն հստակ չափանիշ չէ այսօրինակ բառերի ուղղագրությունը կանոնարկելու համար:

Անկախ փոխատու լեզվում բաղադրիչների հարաբերությունից, կազմությունից և կամ նշանակությունից՝ դրանք, հայերենի լեզվական կանոնով, պարզ բառեր են, հետևաբար նախընտրելին բաղադրիչների **միասին** գրությունն է, ինչպես՝ **hot dog – հոթդոգ, make up//Make-Up – մեյքափ, wats app – ուաթսափ, carte blanche – քարտբլանշ, hat-trick – հետթրիկ, second hand – սեքոնդհենդ**:

բ) Օտար բառերի տառադարձությանը շատերն են անդրադարձել¹: Կան տարակարծություններ: Եթե խորհրդային տարիներին տառադարձության մեջ զգալի էր, այսպես ասած, ռուսերենի թելադրանքը, և տառադարձության մեր կանոնների զգալի մասն էլ մշակված է՝ հենց ռուսերենը՝ որպես միջնորդ լեզու նկատի առնելով, ապա այսօր պատկերն այլ է: Պայմանավորված հատկապես անգլերենի ու ժեղ ազդեցությամբ՝ շատ են շեղումները տառադարձության կանոններից: Խոսքը հատկապես անգլերենի **p, t, k (c)**

¹ **Ղազարյան Ս.**, Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Եր., 1945: **Բարսեղյան Հ.**, Տերմինաբանական ուղեցույց, Եր., 1964: **Զահուկյան Գ.**, Օտարազգի բառերի տառադարձման սկզբունքները, «Լրաբեր», Եր., 1972, № 3, էջ 25-34: **Գյուլբուդաղյան Ս.**, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973: **Ղարազյույան Թ.**, Օտարազգի բառերի տառադարձության շուրջ, «Լրաբեր», Եր., 1973, № 1: «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006: **Ավետիսյան Յու.**, Դիտարկումներ հայերենի բարձրագույն խորհրդի որոշումների վերաբերյալ (ուղղախոսություն և ուղղագրություն), «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», Եր., 2016, № 3, էջ 28-30: **Զաքարյան Հ.**, Օտար լեզուներից հայերեն գործնական տառադարձման սկզբունքները, «Զահուկյանական ընթերցումներ», Եր., 2017, 129-144:

հնչյունների մասին է: Ըստ կանոնի՝ անգլ. **p, t, k**-ն բառասկզբում պետք է տառադարձել համապատասխան շնչեղ խուլերով՝ **փ, թ, ք**, իսկ բառամիջում և բառավերջում՝ խուլերով՝ **պ, տ, կ**: Նան՝ նշված դիրքերում կրկնավորները նույնպես պետք է տառադարձվեն որպես խուլ¹: Սակայն այսօր պատկերը էապես փոխվել է. բառի արտասանությունը (հնչումը) դարձել է գերիշխող, ինչի հետևանքով արտասանվող շնչեղ խուլերը նաև գրվում են բառամիջում և բառավերջում: Սա է փաստում գրավոր խոսքի ուսումնասիրությունը: Ընդ որում, ուրվագծվում է երկու սկզբունք.

1) Բառերի մի խմբում, այդ թվում՝ դիպվածային, ունենք կանոնից շեղված, բայց գրության միօրինակություն՝ **Թրամփ, չարթերային, վեթ(թ)ինգ, Քլինթոն, հեքեթոն, սթրես, քոթեջ, թրաֆիքինգ, քարթրիջ, փոփ, սփրեյ, լայքառատ** և այլն:

2) Բառերի մեկ այլ խմբում ունենք գրության երկու և ավելի տարբերակներ, ինչպես՝ **հիպոտեկ/հիպոթեք/հիփոթեկ, իմպիչմենտ/իմփիչմենթ, հետթրիք/հետթրիկ/հետթրիկ, ստարտապ/ստարտափ, վինչեստեր/վինչեսթեր, ֆիտնես //ֆիթնես, մարկետինգ/մարքետինգ, սմոկինգ/սմոքինգ** և այլն:

Տառադարձության գործող կանոնները պետք է վերանայվեն: Նույնիսկ ընդունում ենք, որ այս օրինակները նաև սխալագրության հետևանք են, միննույն է, խնդիրը պետք է ստանա համակարգված լուծում հենց ներլեզվական օրինաչափությունների շրջանակում: Համամիտ ենք այն

¹ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», էջ 179:

կարծիքին, որ «Գրադարձության ու հնչադարձության համակցված կիրառման (այս կամ այն չափով զուգորդման) կարիք է լինում այն լեզուների դեպքում, որոնցում ուղղագրությունն ավանդական է, միաժամանակ լայն տարածում ունի դիրքային հնչունափոխությունը: Այսպիսի մոտեցում է կիրառվում, օրինակ, անգլերենից հայերեն գործնական տառադարձության դեպքում: Մի դեպքում՝ անգլ. **Beatles** անունը տառադարձվում է ոչ թե ըստ գրության (**Բեաթլես**), այլ ըստ հնչման (**Բիթլզ**), մի այլ դեպքում անգլ. **London** տեղանունը տառադարձվում է ոչ թե ըստ հնչման (**Լանդոն**), այլ ըստ գրության (**Լոնդոն**)»¹: Հետևաբար հատկապես այսպիսի բառային նոր(ագույն) միավորների գրությունը պետք է հարմարեցվի նաև հնչադարձությանը:

Ամփոփենք: Բառապաշարը զարգացնելու և մշակելու քայլերից պետք է լինեն.

- **օտար բառ-փոխառություն-օտարաբանություն** տերմինների հստակեցումը,
- **օտար բառ-հայերեն համարժեք** տարբերակների գործառական ճշգրտումը և ստեղծված «գոյաձևերից» մեկի ամրագրումը,
- օտար բառերի **գրության** և **տառադարձության** կանոնավորումը:

¹ Զաքարյան Հ., նշվ. աշխ., էջ 134:

Այս հարցերում լիարժեք և վերջնական կանոններ սահմանել գրեթե հնարավոր չէ. միշտ էլ գտնվում են բառեր, որոնք, այսպես ասած, չեն տեղավորվում որևէ կանոնի շրջանակում: Բայց մյուս կողմից էլ բազմաձևություններին «համակերպված» վիճակը նույնպես ճիշտ ճանապարհ չէ: Ունենք երկու ճանապարհ: **Առաջինը՝ ցանկալին.** լեզվի կոմիտեն իր իրավասությունների շրջանակում պատշաճ ուշադրության տակ առնի նշված հարցերը, տա հանձնարարականներ, ամրագրի նոր կանոններ, կազմի բառգրքույկներ, մասնակցի դասագրքերի բովանդակության քննարկումներին և բարձրացնի իրազեկելու աստիճանը: Ընդ որում, տեղեկացնելու առումով այսօր մեծ են հնարավորությունները՝ էլեկտրոնային բառգրքույկներից, պաշտոնական կայքերից մինչև տպագիր հրատարակություններ: **Եվ երկրորդ՝ ավանդական ճանապարհը.** առաջադրվող հարցերը հետաքրքրում և մտահոգում են նեղ մասնագիտական շրջանակին, հնչում են գիտաժողովից գիտաժողով, արժանանում մասնագիտական քննարկումների, և բուն լեզվակիրառողը մնում է խնդրին անտեղյակ՝ ապավինելով սեփական լեզվագագադությանը:

Բանալի բառեր – օտար բառ, բառապաշար, օտարաբանություն, փոխառություն, տառադարձություն, հնչադարձություն, ուղղագրական տարբերակ, լեզվական նորմ:

Liana Sargsyan – Foreign Words: Definition, Usage and Writing Issues. – The article discusses some issues related to vocabulary standardization. Reference is made to the clarification of the terms foreign word–borrowing–barbarism; an attempt is made to specify the functional boundaries of the foreign word–Armenian equivalent versions. Issues of alphabet writing and transcription are also discussed, and some ways of turning diversity to uniformity are suggested.

Key words - foreign word, vocabulary, barbarism, borrowing, transcription, spelling, linguistic norm.

Лиана Саркисян – Иноязычные слова: вопросы квалификации, употребления и написания. – В статье рассмотрен ряд вопросов, относящихся к нормированию лексики. Проясняются термины *иноязычное слово – заимствование – варваризм*, уточняются границы равноценных соответствий иноязычного и армянского слов. Кроме того, рассматриваются вопросы написания и транслитерации иноязычных слов, предлагаются способы упорядочить и привести к единообразию возникший разнобой.

Ключевые слова - иноязычное слово, лексика, варваризм, заимствование, транслитерация, орфографические варианты, языковая норма.

**ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ - ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ (ՀՈՒՇԱՅԻՆ
ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ)։ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԼԵԶՈՒ**

Աշոտ Գալստյան (ՀՊՄՀ)

Հուշագրությունը (ֆրանս.՝ *memoires*), ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողություն է, որ ունի ժանրային առանձնահատկություն, առաջին հերթին՝ գրավոր խոսքի դրսևորման առումով։ Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց զավակների, հարազատների պատմածներ, գրողի կյանքի գլխավոր դեպքերի խաչաձևում ժամանակի գրամշակութային, հասարակական իրադարձություններին և այլն։ Թեմատիկ առումով ևս կա տարբերություն. հայտնի են *անձնական, թատերական, քաղաքական, պատրիարքական հուշեր* և այլն։ Առավել հաճախական են հուշ-դիմանկարները։ Սրանք հուշեր են գրողների, արվեստագետների, հոգևոր առաջնորդների, գիտության ականավոր գործիչների մասին, որոնց հեղինակները հանդիպել են տարիներ շարունակ և մոտիկից ճանաչել նրանց։

Մշակութաբանական և աղբյուրագիտական նշանակություն ունեն Ղևոնդ Ալիշանին և Խրիմյան Հայրիկին նվիր-

ված հուշերը, որոնք աչքի են ընկնում լեզվակառուցվածքային հատկանիշներով: «Երկու եկեղեցականք կան,- գրում է Արփիար Արփիարյանը,- որոնց դեմքը նայելով՝ երբեք հայ մը չկշտանար հագենալ՝ Խրիմյան և Ալիշան»¹:

Հայտնի է, որ Ալիշանի իր ողջ գիտակցական կյանքն անց է կացրել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում՝ նշանավոր գիտնականների շրջանում: Նա Հայաստանի մասին իր երկասիրությունները գրել է առանց այդ աշխարհը տեսնելու: Ծովածիծաղ Վենետիկի Սուրբ Ղազարում նստած՝ նա մտքով և երևակայությամբ է սլացել դեպի Հայաստան: Միաբանության ավագ և կրտսեր սերնդի շատ ներկայացուցիչներ հուշագրառումներ են կատարել Ալիշանի կյանքի այս կամ այն դրվագի վերաբերյալ: Մեծ հանրագիտակին հուշագրել են գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը, նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը, ականավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունին, հայ նոր գրականության դասական Ավ. Իսահակյանը, Ալիշանի ավագ և կրտսեր ընկերները և այլք²:

Խրիմյան Հայրիկի մասին նույնպես հուշագրական բազում էջեր են հյուսվել: Ավետիք Իսահակյան և Ալեքսանդր Շիրվանզադե, Հրաչյա Աճառյան և Փանոս Թերլեմեզյան... Ռուս գրող Լև Տոլստոյը հետաքրքրվել է Խրիմյան Հայրիկի գործունեությամբ:

¹ «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», Եր., 1974, էջ 9:

² Նույն տեղում, 264 էջ:

Մկրտիչ Խրիմյանը նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, Լիմ և Կտուց անապատներում գրաբար և հայագիտություն է ուսանել: Նրան մեծարել են Հայոց Հայրիկ պատվանունով, իսկ հուշագիրները կերպարագծել են նրա առինքնող դիմանկարը: Բնագրերից քաղաբերում ենք, որ Խրիմյան Հայրիկը թուրքական հալածանքի ժամանակ կորցրել է ընտանիքը, իսկ այնուհետև 1862 թ. դարձել Տարոնի Սբ. Կարապետի առաջնորդ: 1869 թ. ընտրվել է Պոլսի պատրիարք: Ուշաբժան են կաթողիկոսի մանկավարժական հայացքները, որոնց մասին հիշատակում է Վազգեն Առաջին կաթողիկոսը¹: Հուշերից տեղեկանում ենք, որ Կ. Պոլսում Խրիմյանը հրատարակել է «Արծուի Վասպուրական» ամսաթերթը, որին աշխատակցում էին իր հիմնած Ժառանգավորաց դպրոցի սաները՝ Գաբեգին Սրվանձտյանցը, Արսեն Թոխմախյանը և ուրիշներ: 1878 թ. Խրիմյան Հայրիկը ղեկավարել է Բեռլինի վեհաժողովի հայկական պատվիրակությունը: Թնավոր խոսք է դարձել նրա «Թղթեշերեփ» փոխաբերությունը:

Փ. Թերլեմեզյանը «Կյանքիս հուշերը» գրքում ներկայացնում է Խրիմյան Հայրիկի «շինարար և օգտակար գործունեությունը»: Այն ժամանակվա զարգացած հասարակությունը գովեստով ու երախտագիտությամբ է արտահայտվել Հայրիկի հանդեպ՝ ընդգծելով նրա անձանձիր և նվիրյալ

¹ Տե՛ս Վազգեն Ա., Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ, Նյու Յորք, 1987:

գործունեությունը¹: Մահմանադրության տարեդարձին ժողովուրդը խուժել է Վարազա վանք, երբ Խրիմյանը վանահայր էր: Նա ձայնակցել է ժողովրդին և ողջունել նրա իրավունքը:

Այս առաջադիմական գաղափարների ու գործունեության դեմ կատաղի պայքար էր սկսել Վանի առաջնորդ Պողոս վարդապետը, որի կողմնակիցները կոչվում էին Պողոսյաններ, իսկ հակառակորդները՝ Ապողոսյաններ:

Փ. Թերլեմեզյանը հուշերում հաճախ է ներկայացնում հայոց հայրապետին, տալիս նրա մարդասիրական նկարագիրը, անշահ օգնությունը կարոտյալներին: Կաթողիկոսը Պետերբուրգում պատվիրել է եկեղեցական խորհրդի նախագահին՝ Թերլեմեզյանին ամսաթոշակ նշանակելու մասին, իսկ Թիֆլիսում քաջալերել է նկարչին՝ Փարիզում նրան աջակցելու համար: «Ակադեմիից մի վկայական առնելով՝ ուղարկեցի հայոց կաթողիկոս Խրիմյանին՝ հիշեցնելով նրան Թիֆլիսում իր առած խոստումը: Շուտով պատասխան ստացա, որ ամսական հիսուն ռուբլի թոշակ է հատկացված ինձ ուսանողությանս ընթացքին: Շատ խոր ուրախություն զգացի, որ միջոց ունեցա ուսումս շարունակելու»²:

¹ Հմմտ. **Թերլեմեզյան Փ.**, Կյանքիս հուշերը, Եր., 2017, էջ 85-87:

² Նույն տեղում, էջ 207:

Ավ. Իսահակյանը «Իմ հուշերից» գրքում անդրադառնում է Ղևոնդ Ալիշանի և Խրիմյան Հայրիկի հուշ-դիմանկարներին: «Երբ մեկնում էի Վենետիկից,- հուշագրում է Ավ. Իսահակյանը,- գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ տալու:

Օրհնեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջույն ուղարկեց Խրիմյան Հայրիկին:

– Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,- ասաց Ալիշանը,- բայց կըսեն, որ շատ առույգ է, ձի կնստի. հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե...»¹:

Հուշերում նկարագրական խոսքը հեղինակները հյուսում են՝ կիրառելով լեզվառճական այնպիսի հատուկ հնարներ, որոնք ձևավորում են հուշագրական տեքստի դիմապատկերային միջուկը: Այս տեսանկյունից կարող ենք առանձնացնել կառուցվածքային միավորներ, բառաշերտեր, որոնք ընդգծում են՝ **ա.** բնորդի արտաքին հատկանիշները, **բ.** գործողություններն ու արարքները, **գ.** ուղղակի (կամ անուղղակի) խոսքը և այլն:

Հ. Ալիշանը երկխոսում է հուշագիր Մ. Զալյան հետ.

«– Յոթանասունինն տարիս լրացավ, «Ձեր» Խրիմյան ինձնից հարյուր օրով մեծ է,- ասաց նա (*Ղ. Ալիշանը – Ա. Գ.*) հնագետի ճշտությամբ:

¹ **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1977, էջ 14:

- Ինչո՞ւ «մեր» և ոչ թե «ձեր», - նկատեցի ես:
- Ինչպե՞ս թե «մեր»:
- Չէ՞ որ նա էլ տաճկաստանցի է:
- Այո, ճիշտ է, - պատասխանեց նա ծիծաղելով¹:

Նկատելի է՝ այս երկու հանրագիտակ մեծերի մտերմությունը ցուցադրվում է հենց հուշագրության բնագրերում: Իմանալով Ղևոնդ Ալիշանի հարգանքը՝ Խրիմյան Հայրիկը հրաման է արձակում. «Ես վաղը կկարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասիսի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը դրկեն Վենետիկ:

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչ հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել»²:

Երկու բնորդներին միաժամանակ հիշատակել է հուշագիր Տիգրան Նազարյանը. «Եթե հայության մեջ անկետայի ենթարկվեր, թե ո՞վ է ԺԹ դարու ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խոսքը, կամքը, տենչանքը ու մտորումը համայն հայության բաղձանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լիներ, անշուշտ, միաձայն երկու մարդի վրա կանգ կառնեին՝

¹ «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 83:

² **Իսահակյան Ավ.**, նույն տեղում, էջ 16:

Խրիմյան Հայրիկ (մինչև կաթողիկոսանալը) և Հայր Ղևոնդ Ալիշան»¹:

Այս երկու բնորդները հուշերում ներկայանում են նաև հարահոս երկխոսությունների միջոցով: Ղևոնդ Ալիշանը հանդես է գալիս Իտալիայի թագուհու հետ երկխոսելիս, Նապոլեոն զորավարի հրովարտակը քննարկելիս, եվրոպական գիտնականների հետ մասնագիտական հարցերի շուրջ խորհելիս: Դրիմյան Հայրիկի հետ երկխոսում են բազում տառապյալներ: Նա համայն տաճկահայերի Հայրիկն է:

Հուշերում բնորդների դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերևս հուշագիրների առաջին կամ վերջին տեսակցությունը կամ հանդիպումն է, որն ուրվագծվում է բնորդի արտաքին հատկանիշներով. «Անպաճույճ խցի դուռը բացվեցավ: Քառակուսի, լուսավոր և անգարդ սենյակի մի կողմում դրված էր անկողին, իսկ ձախակողմյան պատի առաջ գրքերով և թղթերով ծածկված սեղանի հետևը նստած էր մի ալեգարդ, բարձրահոն վարդապետ, որ վեր կենալով ողջունեց ինձ սիրով և հրավիրեց նստելու: Այդ բարձրահասակ, քաղցրադեմ ծերունին էր հայր Ղևոնդ Ալիշանը»²: Կամ՝ «Վերջին անգամ Հայրիկին տեսա 1906 թվի աշնանը. ցավալիորեն թույլ էր և գունատ»³:

¹ «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 163:

² Նույն տեղում, էջ 34:

³ **Բսահակյան Ավ.**, նշվ. աշխ., էջ 22:

Տիգրան Փիրումյանը հիշողություններում տվել է Հայրիկի դիմանկարը՝ արտաքին բարեմասնությունների ընդգծումով՝ երբեմն առանձնացնելով նրա ժպիտը, աչքերը, դեմքը, ձայնը, սիրտը և այլն. «Հայրիկը ամեն բանի մեջ Հայրիկ է: Քարոզելիս նա չէ փոխում մազաչափ: Նոյն քաղցր-մեղամաղձոտ ժպիտը, նոյն արդար ու հանգիստ սիրտը, նոյն մտախոհ ու վսեմ աչքերը, նոյն անուշ մարդասեր ու լսողի սիրտը ծակող ձայնը...»¹: Ալ. Շիրվանզադեի գրչի տակ կերպարագծվել է Հայրիկի ներշնչող դիմանկարը. «Աննման էր Խրիմյան Հայրիկի արտաքինը: Ոտքից մինչև գլուխ մարմնացած գեղեցկություն: Ոչ մի լուսանկարով չի կարելի պատկերացնել Խրիմյանի դեմքը, մանավանդ խոշոր կապտագույն աչքերի արտահայտությունը»²:

Հուշագիրները այս երկու բնորդների դիմանկարները կառուցել են տարբեր բառամիավորների նրբագծերով, որոնք գործածության առումով հետաքրքրական իրողություններ են վեր հանում: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «բառապաշարը ոճական սկզբունքներով խմբավորելիս նախ և առաջ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր բառի ոճաբանական բնութագիրը, նրա ոճական կիրառությունը, այլ

¹ Փիրումեանց Տ., Խրիմեան Հայրիկ (Իմ յիշողութիւններից), Թիֆլիս, 1887, էջ 36:

² Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից: Հուշեր, Եր., 1982, էջ 485-486:

կերպ ասած՝ նրա հուզարտահայտչական երանգավորումը, կիրառական հաճախականությունը»¹:

Բառային մերձիմաստ շղթաներ ենք զատել առաջադիր հուշերի բնագրերից: Այստեղ շատ են կրոնական ըմբռնումները: Գաղտնիք չէ, որ բառապաշարի կրոնանկեղեցական բառաշերտը մյուս բառաշերտերի համեմատությամբ ավանդապահ է և կայուն: Մեծապես գործածվում են ծիսական և կրոնական գրքերի անվանումներ՝ **Ս. Գիրք, Ավետարան, Մաշտոց, Մաղմուսարան, Մեկնութիւնք, Ճաշոց** և այլն: Կիրառվել են նաև այլ արտահայտություններ՝ **քրիստոսախմոր**², **Աստվածամայր, կրոնակից, ժամասացություն, Խաչելության պատկեր, Համբարձումը ներկայացնող նկար, պահապան հրեշտակ, Աստուծո տաճար, սրբության սրբոց** («Ինքն էր *սրբության սրբոցի* առաջին երկրպագուն») ³ և այլն: Օգտագործված են «*Ծերութիւն յոյժ ապականէ զմարդ*» առաքյալի խոսքերը և «*Բարութիւն արեք ձեզ ատողներին*» Քրիստոսի պատվիրանը:

Քննվող հուշերում առատ են *սեր, գիր, տուն, հայ* վերջնաբաղադրիչներով բառեր, ինչպես՝ **կրոնասեր, հայասեր, ազգասեր, ուսումնասեր, ժողովրդասեր, անփառասեր, լուս-**

¹ **Եզեկյան Լ.**, Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը (ըստ պատմավեպերի նյութերի), էջ 136:

² Տե՛ս **Գյուրջիյան Դ.**, «Քրիստոս» անվան բառակազմական արժեքը հայերենում, «Էջմիածին», 1992, ԺԲ, էջ 50-56:

³ «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 129:

սեր, մենասեր, հասարակասեր, հյուրասեր (հյուրասեր մենաստան), հանրագիր, ձայնագիր, մատենագիր, խնդրագիր, երկաթագիր, ձեռագիր, սրբագիր, գրչագիր, գրատուն, մաքսատուն, սեղանատուն, զանգակատուն, խմբագրատուն, ձեռագրատուն («Երջանիկ կզգար ինքզինքը, երբ *ձեռագրատան* մեջ կգտնվեր»)¹ և այլն: Գործածության հաճախականություն ունեն *հայ* վերջնաբաղադրիչով որևէ տեղի բնակիչ մատնանշող կազմությունները՝ **թուրքահայ** (**թրքահայ**), **տաճկահայ**, **կովկասահայ**, **ռուսահայ**, **մաճառահայ** (**հունգարահայ**) և այլն: Գործածական են *հայ(կ)* սկզբնաբաղադրիչով բառեր՝ **հայապատում**, **հայագետ**, **Հայկարան** և այլն: Հուշերում գործածական են *նվազահանդես* և *սզահանդես* կազմությունները. «Այս օրն հատկացած էր *նվազահանդեսի*»: «*Սզահանդեսը* տևեց մինչև կես գիշեր»²:

Հուշերում գործածություն ունի *Հայրիկապաշտ* կազմությունը, այլևայլ բնութագրումներ՝ *Վասպուրականի արծիվ*, *կատարյալ մարմնացում Ավետարանի*: Ղևոնդ Ալիշանը բնութագրվում է *Ս. Ղազարու ոգի*, *խոհուն*, *մտածող*, *միշտ խորասուզված իր մեծ աշխատություններուն մեջ*, *ամբողջ հայության սիրելի*, *ճգնության խնկարան*, *դպրության թանգարան* արտահայտություններով:

¹ Նույն տեղում, էջ 112:

² Նույն տեղում, էջ 59, 167:

Հուշագրության լեզվում կարևորվում են *հիշել* բայի իմաստաշարահյուսական հատկանիշները. «*Հիշում եմ* այն պահը, երբ Ներսիսյան դպրոցի երգեցիկ խումբը նրա առջև երգեց Վանի ինչ-որ մի ժողովրդական երգ: Պետք է տեսնեիք Խրիմյանին այդ պահին»¹:

«Կհիշեմ զինքն, որ երբ հիվանդ էինք, անոտնաձայն, լռիկ-մնջիկ կուգա մեր անկողնին քովն ամեն օր, կհոգա մեր առողջության համար, կքաջալերե ըզմեզ ու կխնամե իր ձեռքերովը»²:

Հիշողության հոսքերը երևում են նաև գեղարվեստական գրականության էջերում: Հովհ. Թումանյանի «Երկու հայր» պատմվածքում մեծ վշտի տեր Հայրիկը հուսադրում է Ա. գյուղի ծերունի տեր Սարգսին. «– Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար,– պատասխանեց Հայրիկը,– այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան...Ո՞ւմն է շատ, տե՛ր Սարգիս»³:

Եղ. Չարենցը 1933 թ. գրած «Մահվան տեսիլ» պոեմում Ղևոնդ Ալիշանով սկսեց հայ ազգային-ազատագրական

¹ Շիրվանզադե Ալ., նույն տեղում, էջ 484:

² «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 76:

³ Թումանյան Հ., Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, Եր., 1985, էջ 39:

շարժման մեծերի բանաստեղծական պատկերասրահը¹: Ալիշանի դիմանկարը կերտող հատվածում երևում է Նահապետի պոեզիայի ճշգրիտ գնահատականը.

Երգեցի ես ձայնով առնական ամրոցներն

ու բերդերը հայոց,

Ոստանները հայոց արքայից, պալատները

նոցա փառահեղ,

Երգեցի Կարմիր Ավարայրը, Մասիսը աստղերին հայոդ,

Ձգտելով հին փառքը հայոց սրտերում ամուր միշտ պահել:

Խրիմյան Հայրիկի գեղարվեստական-վավերագրական պատկերը գտնում ենք նաև Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքի «Մեծերի ժողովը» հատվածում: Այստեղ անդրադարձ է կատարվում Խրիմյան Հայրիկի Եվրոպա գնալու և հայերի համար ազատություն բերելու փաստին. «Ես ալ, իմ կարգին ձեռքիս աղերսագիրը ցույց տալով, խնդրեցի, որ ամանիս մեջ հարիսա լցնեն: Կաթսայի գլուխը սպասող մեծավորները ինձի հարցուցին-ո՞ւր է քո շերեփդ: Ճիշտ է, որ հոս հարիսա կբաժնվի, բայց շերեփի չունեցողը

¹ Հմմտ. **Ջրբաշյան Էդ.**, Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2(47), Եր., 1982, էջ 22-23:

չի կրնար մոտենալ անոր»¹: Եզրակացությունը մեկն է. «Մենք պետք է շինենք մեր երկաթե շերեփը»²:

Խրիմյան Հայրիկը ասուպի նման երևում է Ջ. Դարյանի «Արծիվ Վասպուրականի» վեպում. «Շատերը նույնիսկ պնդում էին, որ Երեմիան իր արտաքինով ու շարժումով իսկ և իսկ հիշեցնում է Խրիմցոց փեշով Մկոյին»³: Գրավոր աղբյուրները հիշատակում են, որ Հայրիկը բարձրահասակ էր, աշխարհական ժամանակ երկար փեշերով զբուն⁴ էր հագնում, ուստի և անվանում էին «Խրիմցոց փեշով Մկո»⁵:

Արդ, հարց է ծագում, թե ինչո՞ւ են հայոց երկու հանճարեղ հսկաները քննվում մեկ ընդհանուր շղթայի շրջանակում:

Ա. Թերևս առաջին փաստարկը նրանց հասակակից լինելն է. երկուսն էլ ծնվել են 1820 թ.-ին:

¹ **Դաշտենց Խ.**, Ռանչպարների կանչը, Եր., 1984, էջ 109: Այս մասին հիշատակություն կա նաև Ալ. Շիրվանզադեի «Կյանքի բովից» հուշագրության մեջ: Խոսելով Սինաս Չերազի մասին՝ հեղինակը ներկայացնում է Խրիմյանի սրամիտ ծաղրը. «Մեզ ուղարկեցին Բեռլին՝ թանե սպաս ուտելու, չկրցանք. հոն ամենքը երկաթե գդալներ ունեին, իսկ մենք թղթի կտոր մը» (**Շիրվանզադե Ալ.**, Կյանքի բովից: Հուշեր, Եր., 1982, էջ 326):

² Նույն տեղում, էջ 110:

³ **Դարյան Ջ.**, Արծիվ Վասպուրականի, Եր., 1965, էջ 36:

⁴ Արևելյան երկար, մինչև փեշերը հասնող վերնագգեստ:

⁵ Նույն տեղում, էջ 831: Այս մասին հիշատակություն կա **Տիգրան Ավետիսյանի** «Հայոց ազգանունների բառարանում». «Նշանավոր Մկրտիչ Խրիմյան Հայրիկը երիտասարդ տարիքում կոչվել է նաև Կրմցոց Մկո»: Տե՛ս **Ավետիսյան Տ.**, Հայոց ազգանունների բառարան, Եր., 2010, էջ 165:

Բ. Երկուսն էլ հոգևորականներ են՝ Ալիշանը հայրենիքից հեռու՝ Մխիթարյանների միաբանության մեջ, Խրիմյանը՝ հայրենիքում: Երկուսն էլ աստվածաբան, փիլիսոփա, գրող:

Գ. Երկուսին էլ շրջասաբար համեմատել են պատմահայր Մովսես Խորենացու հետ: Այսպես, 1876-ին Վանի հրդեհի և կողոպուտի ժամանակ Հայրիկը հեղինակել է «Վանգոյժը», իսկ հետագայում՝ «Հայգոյժը»: Վանի հրդեհի առիթով հուշագիրը գրում է. «Խրիմյանը մի բրոշյուրով սարսռագդեցիկ մի բուռ ջուր է թափում այդ մոխրակույտի վրա իր Վան Գույժով»¹:

Այս երկու ստեղծագործությունները բավական եղան հեղինակին «ԺԹ դարի Խորենացի» հռչակելու համար:

Ղ. Ալիշանը հիսուն տարի իր կյանքը նվիրել է մեր պատմության ուսումնասիրությանը և այդ պատճառով էլ ստացել է *Նոր քերթողահայր* պատվանունը. «Եթե այդ բազմատեսակ գործերն էլ չլինեին, նա դարձյալ պիտի արժանանար *նոր քերթողահայր* կոչման»²:

Ճ. Երկու բնորոշների դիմանկարների համեմատությունները զուգահեռվում են թռչունների արքայի՝ արծվի հատկանիշների հետ. «Բերեցին ՎԵՀԱՓԱՌ տիտղոսը տվին, Վեհարանի չորս պատի մեջ շղթայեցին՝ պահանջելով ջինջ

¹ Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը, էջ 62:

² «Ալիշանը ժամանակակիցների հուշերում», էջ 42:

երթերում սավառնող ԱՐԾԻՎԸ թառ լինի Աթոռի վրա»¹: Քերովբե Չրաքյանը հուշագրել է Ալիշանին. «Խստակյաց կյանք կվարեր և թոչունի պես կսնաներ, ավանդապահ էր սովորություններուն և պահպանող վանական կարգ ու կանոնին»²:

Հաշվի առնելով հայոց երկու մեծերի մշակութային, հոգեկան, անձնային ընդհանրական հատկանիշները՝ մենք առաջարկում են շրջանառել բնութագրական երկու արտահայտություններ՝ ա. Հասակակից նորոթյա Խորենացիները, բ. Հոգևոր աշխարհի երկու հանրագիտակ հասակակիցներ:

Երկու մեծերի ներշնչող անունները դաջված կմնան հայ ժողովրդի հիշողության մատյանում այնքան ժամանակ, քանի կան հայն ու Հայաստանը: Բոլոր ժամանակներում էլ հնչել են Ղևոնդ Ալիշանի խոսքերը՝ քաղված հուշագրության բնագրից. «Շրջահայա՛ց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցե՛ք միմյանց»:

Բանալի բառեր – Ղևոնդ Ալիշան, Խրիմյան Հայրիկ, գեղարվեստական վավերագրություն, կառուցվածք և լեզու, դիմանկար, արտահայտչամիջոց, իմաստաբանական խումբ, ոճական երևույթ:

Ashot Galstyan – Guevond Alishan-Khrimian Hayrik (parallels of memoirs). structure and language. – The article attempts to present in parallel memoirs' portraits of Ghevond Alishan and

¹ Նույն տեղում, էջ 163:

² Նույն տեղում, էջ 227:

Catholicos Mkrtich I Khrimyan (also known as Khriman Hayrik), which are complemented by several principles, the most important of which, perhaps, is the first or last appointment or meeting of the memoirists.

From the memoirs' texts we have chosen verbal chains of similar meaning. Numerous are words with endings love, writing, home, Armenian. Expressions from the Holy Scriptures, names of religious ritual books are widely used.

We propose to put into circulation two characteristic expressions: a. Two modern Khorenatsi of the same age, b. Two peer encyclopedists in the spiritual world.

Key words - Guevond Alishan, Khrimian Hayrik, documentary fiction, structure and language, portrait, expressive form, semantic group, stylistic manifestation.

Ашот Галстян – Гевонд Алишан-Хримян Айрик (мемуарные параллели): структура и язык. - В статье сделана попытка параллельно представить мемуарные портреты Гевонда Алишана и Католикоса Мкртича I Хримяна (известного также как Хриман Айрик), которые дополняются несколькими принципами, наиболее важным из которых, возможно, является первое или последнее свидание или встреча мемуаристов.

Из данных мемуарных текстов мы отделили схожие по смыслу словесные цепочки. Многочисленны слова с окончаниям любовь, письмо, дом, армянин. Широко используются выражения из Священного Писания, названия религиозно-обрядовых книг.

Предлагаем поставить в оборот два характерных выражения: **а.** Два современных Хоренаци одного возраста, **б.** Два энциклопедиста сверстника в духовном мире.

Ключевые слова - Гевонд Алишан, Хримян Айрик, художественная документалистика, структура и язык, портрет, выразительная форма, семантическая группа, стилистическое проявление.

Տեղեկություններ հեղինակների մասին

Յուրի Ավետիսյան - ԵՊՀ հայոց լեզվի ամբիոն, ք. գ. դ.,
պրոֆ., էլհասցե՝ yuriavetisyan@ysu.am

Հովհաննես Զաքարյան - «Տաթև» գիտակրթական հաստատու-
թյուն, ք. գ. թ., դոց., էլհասցե՝ hovzakaryan@yahoo.com

Նարինե Դիլբարյան - ԵՊՀ հայոց լեզվի պատմության
ամբիոն, ք. գ. թ., դոց., էլհասցե՝ narine.dilbaryan@ysu.am

Վիկտոր Կատվալյան - ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտ, ք. գ. դ., դոց. էլհասցե՝ viktor-katvalyan@mail.ru

Լեոնիդ Թելյան - ԵՊՀ հայոց լեզվի ամբիոն, ք. գ. թ., դոց.,
էլհասցե՝ telyanleonid@ysu.am

Լուսինե Ղամոյան - ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինս-
տիտուտ, ք. գ. թ., ասիստ., էլհասցե՝ lgamoyan@mail.ru

Մանուկ Ֆելեքյան - ԵՊՀ հայոց լեզվի ամբիոն, ք. գ. թ., դոց.,
էլհասցե՝ feleqyanmanuk@ysu.am

Լուիզա Մելքոնյան - ԵՊՀ հայոց լեզվի ամբիոն, ք. գ. թ.,
ասիստ., էլհասցե՝ luizamelqonyan@ysu.am

Լիանա Սարգսյան - ԵՊՀ հայոց լեզվի ամբիոն, ք. գ. թ., դոց.
էլհասցե՝ liana.sargsyan@ysu.am

Աշոտ Գալստյան - ՀՊՄՀ հայոց լեզվի ամբիոն, ք. գ. թ., դոց.,
էլհասցե՝ ash.galstyan@mail.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ -----	3
ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ <i>Էլեկտրոնային բառարաններ.</i> <i>հայոց լեզվի բ ա ռ գ ի ը ք առցանց բառարանը</i> -----	5
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ <i>Հայերեն էլեկտրոնային բառարանի ինքնազարգացման մի եղանակ</i> -----	38
ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ <i>Գրաբարի բառապաշարը որպես արդի արևելահայերենի հարստացման աղբյուր</i> -----	60
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ <i>Մի քանի դիտարկում բարբառային հայերենի բառապաշարի մասին</i> -----	75
ԼԵՈՆԻԴ ԹԵԼՅԱՆ <i>Բառապատճենումներն արդի հայերենի բառապաշարում</i> -----	94
ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ <i>«Հագուստ» իմաստային դաշտը նորակազմ բաղադրություններում</i> -----	105
ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ <i>Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնական միտումները</i> -----	120
ԼՈՒԻԶԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ <i>Բառերի հնացման մի քանի գործոններ</i> -----	140

ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

<i>Օտար բառեր. քնորոշման, գործածության և գրության հարցեր -----</i>	156
--	-----

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

<i>Ղևոնդ Ալիշան - Խրիսյան Հայրիկ (հուշային գուգահեռներ). կառուցվածք և լեզու -----</i>	174
---	-----

<i>Տեղեկություններ հեղինակների մասին -----</i>	191
--	-----

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
հանրապետական գիտաժողով, 18 դեկտեմբերի 2019 թ.
(հողվածների ժողովածու)

Հրատարակչական խմբագիր՝ *Լ. Ավետիսյան*
Համակարգչային ձևավորում և էջադրում՝ *Ա. Հովակիմյան*
Սրբագրիչ՝ *Հ. Եսայան*
Կազմի ձևավորում՝ *Ա. Պատվականյան*
Հրատ. սրբագրում՝ *Ա. Գույումջյան*

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 10.06.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12.125:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ԿՐԱՏԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020
publishing.ysu.am